# ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ԼՐԱՑՈՒՄ

**ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 2025թ. դեկտեմբերի 3-ի թիվ 1/447 Ա որոշմամբ գրանցված ծրագրային ազդագրի**

**«ԻՆԹԵԼԼԻՋԵՆԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՍՊԸ**

Թողարկողի ֆիրմային անվանումը

**սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն**

Կազմակերպա-իրավական ձևը

**ՀՀ, Երևան, Կենտրոն, Ամիրյան փ., Շ 1**
**Հեռ.՝ +374 33100131**
**Էլ. փոստ՝ info@imgroup.am**
**Կայք՝ www.imgroup.am**

**«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ**

Գլխավոր տեղաբաշխողի անվանումը

**Փակ բաժնետիրական ընկերություն**

Կազմակերպա-իրավական ձևը

**ՀՀ, ք. Երևան 0010, Վ. Սարգսյան 2**
**Հեռ.՝ (+37410) 56 11 11**
**Էլ.-փոստ՝ info@ameriabank.am**
**Կայք՝ www.ameriabank.am**

---

## ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ:

---

| | |
|---|---|
| **Արժեթղթերի տեսակը՝** | անվանական, արժեկտրոնային պարտատոմս (այսուհետ՝ Պարտատոմս) |
| **Արժեթղթերի ձևը՝** | ոչ փաստաթղթային |
| **Արժեթղթերի քանակը՝** | համապատասխան Թողարկման ծավալի ու անվանական արժեքի |
| **Արժեթղթերի անվանական արժեքը՝** | 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ, 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար |
| **Արժեթղթերի թողարկման ծավալը՝** | 5,000,000,000 (հինգ միլիարդ) ՀՀ դրամին համարժեք |
| **Արժեկտրոնը՝** | ենթակա է որոշման Թողարկողի կողմից Պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ |

| | |
|---|---|
| **Շրջանառության ժամկետը՝** | ենթակա է որոշման Թողարկողի կողմից Պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ |

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ 4

ՄԱՍ 1 ԱՄՓՈՓԱԹԵՐԹ 5

1.1 Տեղեկատվություն թողարկողի և նրա գործունեության վերաբերյալ 5
1.2 Թողարկողին և Պարտատոմսերին առնչվող ռիսկերը 10
1.3 Թողարկողի տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները 14
1.4 Թողարկողի աուդիտն իրականացնող անձի և խորհրդատուների ինքնության մասին տեղեկություններ 15
1.5 Թողարկողի կառավարման մարմնի անդամները, աշխատակիցները և խոշոր մասնակիցները 16
1.6 Առաջարկվող արժեթղթերի հիմնական վիճակագրական տվյալները 17
1.7 Արժեթղթերի առաջարկի համակողմանի նկարագիրը 18
1.8 Վերջնական պայմանների հրապարակման ձևը 18
1.9 Ամփոփ ֆինանսական տվյալներ 18

ՄԱՍ 2 ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 22

2.6 Լրացուցիչ տեղեկատվություն 22

ՄԱՍ 3 ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 23

3.1 Անկախ աուդիտորներ 23
3.3 Տեղեկատվություն թողարկողի մասին 23
3.4 Բիզնեսի նկարագիրը 25
3.5 Թողարկողի կառուցվածքը 45
3.6 Թողարկողի հիմնական միջոցները 46
3.7 Զարգացման վերջին միտումները 47
3.8 Շահույթի կանխատեսումը կամ գնահատումը 52
3.12 Տեղեկատվություն թողարկողի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի մասին 54

ՄԱՍ 4 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 55

4.5 ՀԱՎԵԼՎԱԾ 4: Ֆինանսական հաշվետվություններ 55

# ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

*«Մենք՝ սփորագրող անձինք, հավասփիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք ազդագրում ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ազդագրի բովանդակությունը»:*

Ստորագրող անձինք՝

| | | | |
|---|---|---|---|
| **Արևշատ Մելիքսեթյան** | **Խորհրդի նախագահ/Տնօրեն** | | 18.04.26 |
| **(անուն, ազգանուն)** | **(պաշտոն)** | **(ստորագրություն)** | **(ամսաթիվ)** |
| **Լևոն Ալթունյան** | **Խորհրդի անդամ** | | 18.04.26 |
| **(անուն, ազգանուն)** | **(պաշտոն)** | **(ստորագրություն)** | **(ամսաթիվ)** |
| **Մարիա Մելիքսեթյան** | **Խորհրդի անդամ** | | 18.04.26 |
| **(անուն, ազգանուն)** | **(պաշտոն)** | **(ստորագրություն)** | **(ամսաթիվ)** |
| **Նորայր Ալթունյան** | **Խորհրդի անդամ** | | 18.04.26 |
| **(անուն, ազգանուն)** | **(պաշտոն)** | **(ստորագրություն)** | **(ամսաթիվ)** |
| **Մասիս Վարդանյան** | **Խորհրդի անդամ** | | 18.04.26 |
| **(անուն, ազգանուն)** | **(պաշտոն)** | **(ստորագրություն)** | **(ամսաթիվ)** |
| **«Ամերիաբանկ» ՓԲԸ՝ ի դեմս Ամալիա Ջաղացպանյանի** | **Տեղաբաշխող** | | 18.04.26 |
| **(անուն, ազգանուն)** | | **(ստորագրություն)** | **(ամսաթիվ)** |

Ստորագրությունները հավաստում եմ՝

| | | | |
|---|---|---|---|
| **Արևշատ Մելիքսեթյան** | **Խորհրդի նախագահ/Տնօրեն** | | 18.04.26 |
| **(անուն, ազգանուն)** | **(պաշտոն)** | **(ստորագրություն)** | **(ամսաթիվ)** |

# ՄԱՍ 1ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

## ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԴՐՈՂԻՆ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԸ ՊԵՏՔ Է ԴԻՏՎԻ ՈՐՊԵՍ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ:
ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄ ԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԴՐՈՂԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՊԵՏՔ Է ՀԻՄՆՎԱԾ ԼԻՆԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ՎՐԱ:

Ամփոփաթերթի կազմման համար պատասխանատու անձինք ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու համար (այդ թվում՝ թարգմանությանը վերաբերող մասով) կրում են քաղաքացիական պատասխանատվություն, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է սույն ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում:

Ներդրողը կարող է ձեռք բերել սույն ծրագրային ազդագիրը (այսուհետ՝ նաև Ծրագրային Ազդագիր կամ Ազդագիր) և վերջինիս կից ներկայացվող փաստաթղթերն էլեկտրոնային տարբերակով www.imgroup.am և www.ameriabank.am կայքերից:

## 1.1 Տեղեկատվություն թողարկողի և նրա գործունեության վերաբերյալ

### 1.1.1 Թողարկողի տվյալները և կապի միջոցները

| | |
|---|---|
| **Լրիվ ֆիրմային անվանում** | |
| **Հայերեն՝** | «ԻՆԹԵԼԼԻՋԵՆԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն |
| **Ռուսերեն՝** | Общество с ограниченной ответственностью “ИНТЕЛЛИДЖЕНТ МЕНЕДЖМЕНТ” |
| **Անգլերեն՝** | “INTELLIGENT MANAGEMENT” Limited liability company |
| **Կրճատ ֆիրմային անվանում** | |
| **Հայերեն՝** | «ԻՆԹԵԼԼԻՋԵՆԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՍՊԸ |
| **Ռուսերեն՝** | ООО “ИНТЕЛЛИДЖЕНТ МЕНЕДЖМЕНТ” |
| **Անգլերեն՝** | “INTELLIGENT MANAGEMENT” LLC |
| **Պետական գրանցման վայր՝** | ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Ամիրյան փ., Շ 1 |

| | |
|---|---|
| **Պետական գրանցման համար՝** | 271.110.1277977 |
| **Գործունեության վայր՝** | ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Ամիրյան փ., Շ 1 |
| **Կապի միջոցներ՝** | Հեռ.՝ +374 33100131<br>Էլ. փոստ՝ info@imgroup.am<br>Կայք՝ www.imgroup.am |

Թողարկողին առնչվող հարցերի առաջացման դեպքում կարելի է դիմել. էլ. փոստ՝ info@imgroup.am, հեռ.՝ +374 33100131:

### 1.1.2 Թողարկողի համառոտ պատմությունը և ռազմավարությունը

«ԻՆԹԵԼԼԻՋԵՆԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև «Ընկերություն», «Խումբ» կամ «Թողարկող») ստեղծվել է 2022 թվականին՝ որպես դիվերսիֆիկացված ներդրումային և հոլդինգային ընկերություն, որը մասնագիտացած է առողջապահության և ապահովագրության էկոհամակարգերում բարձր ներուժ ունեցող ակտիվներում ներդրումներ կատարելու, այդ ակտիվները կառավարելու և զարգացնելու մեջ: Ընկերությունը ստեղծվել է՝ միավորելով խմբի մեջ գործող երկու հիմնական ընկերությունները՝ «ԷՖԵՍ» Ապահովագրական ՓԲԸ և «Արինտերլև» ՓԲԸ (գործում է «Վարդանանց նորարարական բժշկության կենտրոն» ապրանքանիշի ներքո): Այս միավորումը հնարավորություն է տալիս ապահովելու Խմբի անդամ ընկերությունների գործառնական առավել բարձր արդյունավետություն, օգտագործել մեծ տվյալների վրա հիմնված վերլուծական կարողությունները և ստեղծել երկարաժամկետ արժեք՝ ինչպես կայացած, այնպես էլ հեռանկարային շուկաներում:

Ընկերության ռազմավարական նպատակներն են.

- Միասնական բրենդի և հեղինակության ամրապնդում,
- Կապիտալի ներգրավման արդյունավետության բարձրացում,
- Կապիտալի համակարգված բաշխում և միաձուլումների ու ձեռքբերումների (M&A) կարողությունների զարգացում,
- Ընդհանուր և համահունչ ռազմավարական աճի ուղղությունների մշակում և իրագործում,
- Ծախսերի և գործառնական սիներգիաների իրացում (ընդհանուր վարչական ծախսերի օպտիմալացում, կենտրոնացված գնումներ),
- Տաղանդների կառավարում և կարիերայի զարգացման հնարավորությունների ընդլայնում,
- Շահութաբերության և ներդրողների եկամուտների կայուն աճի ապահովում:

«Ինթելլիջենթ Մենեջմենթ» ՍՊԸ-ի ռազմավարությունը հիմնված է ներդրումային կարգապահության, գործառնական սիներգիաների և կայուն աճի սկզբունքների վրա: Խումբը ձգտում է ոչ միայն բարձրացնել առանձին բիզնեսների արդյունավետությունը,

այլև ստեղծել ամբողջական էկոհամակարգ, որտեղ առողջապահությունը, ապահովագրությունը և թվային նորարարությունները փոխլրացնում են միմյանց:

Ընկերությունը գործում է ռիսկերի կառավարման լուծումների ամբողջական արժեքային շղթայում՝ առաջարկելով տարբերակված ապահովագրական պրոդուկտներ, որոնք հարմարեցված են հաճախորդների բազմազան կարիքներին: Առողջապահական ակտիվների հետ համակցված՝ Ընկերությունը տրամադրում է ինտեգրված ծառայությունների շարունակականություն՝ ֆինանսավորման լուծումներից և բուժօգնությունից մինչև առողջության պահպանման և երկարակեցության ծրագրեր, ինչը Ընկերությանը դարձնում է առաջատար համապարփակ առողջապահական և ռիսկերի կառավարման լուծումների մատակարարման ոլորտում:

Խմբի առողջապահական ուղղությունը ներկայացնում է Ընկերության դուստր «Արինտերլև» ՓԲԸ-ն, որն այսօր Հայաստանի առաջատար մասնավոր բժշկական հաստատություններից է՝ միավորելով հարյուրավոր բժիշկների և ապահովելով բազմապրոֆիլ ծառայություններ ինչպես արտահիվանդանոցային (ամբուլատոր), այնպես էլ հիվանդանոցային (ստացիոնար) ծառայությունների ոլորտում:
Ապահովագրական ուղղությունը ներկայացնում է «ԷՖԵՍ» ԱՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ ԷՖԵՍ), որը շուկայում առաջատար է իր նորարարական թվային լուծումներով, ժամանակակից պրոդուկտներով և արագ ընդլայնվող հաճախորդների բազայով: Մասնավորապես, «ԷՖԵՍ» ԱՓԲԸ-ն առաջին ապահովագրական ընկերությունն է Հայաստանում, որը թողարկել է ժամանակակից մոբայլ հավելված, որի ներբեռնումները գերազանցում են 15,000-ը, շաբաթական ավելի քան 600 հատուցումների հայտեր ներկայացվում են օնլայն, և 1,200-ից ավել ամսական ակտիվ օգտատերեր բաժանորդագրվել են ամսական վճարումներով պրոդուկտների՝ հավելվածի միջոցով:
Այսպիսով, «Ինթելլիջենթ Մենեջմենթ» ՍՊԸ-ն համախմբում է փորձառություն, նորարարություն և ոլորտային սիներգիա:

«Ինթելլիջենթ Մենեջմենթ» ՍՊԸ-ն գրանցված է ՀՀ, ք. Երևան, Ամիրյան փ., Շ 1 հասցեում:

### 1.1.3 Թողարկողի կանոնադրական կապիտալը և դրա կառուցվածքը

Ընկերության կանոնադրական կապիտալն առ 31/12/2025թ. կազմել է 6,250,000 (վեց միլիոն երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, որը բաղկացած է 2 հատ տեղաբաշխված բաժնեմասից՝ յուրաքանչյուրը 3,125,000 (երեք միլիոն հարյուր քսանհինգ հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով: Ընկերության տեղաբաշխված բաժնեմասերը լրիվ վճարված են: Թողարկողի մասնակիցների ցանկը (ներառյալ բաժնեմասերի չափերը) ներկայացված է Ազդագրի 3.5.1 ենթագլխում:

### 1.1.4 Թողարկողի բիզնեսի նկարագիրը

«Ինթելլիջենթ Մենեջմենթ» ՍՊԸ-ն հոլդինգային և կառավարող ընկերություն է, որի հիմնական գործառույթը դուստր ընկերությունների զարգացումը, ներդրումային կապիտալի բաշխումն ու կառավարման արդյունավետ համակարգերի ներդրումն ու ապահովումն է: Ընկերությունը գործունեություն է իրականացնում երեք հիմնական ուղղությամբ.

- Կապիտալի բաշխում
  - Բարձր ներուժ ունեցող ակտիվների բացահայտում և գնահատում, ներդրումային հնարավորությունների որոնում առողջապահության, ապահովագրության, ռիսկերի կառավարման և առողջության պահպանման թվային լուծումների, ենթակառուցվածքների ոլորտներում:
  - Նոր ընկերությունների, թվային և առողջապահական լուծումների և ենթակառուցվածքային նախագծերի մշակում և իրագործում:
  - Ներդրումներ զարգացման տարբեր փուլերում գտնվող ակտիվներում, որոնք ունեն ռազմավարական նշանակություն և սիներգիա խմբի մյուս ուղղությունների և դուստր ընկերությունների հետ:
- Ռազմավարական և կորպորատիվ կառավարում
  - Զարգացման երկարաժամկետ տեսլականի և ռազմավարության ձևավորում. Ընկերությունը սահմանում է խմբի անդամ ընկերությունների զարգացման ընդհանուր ուղղությունը և ապահովում է զարգացման ռազմավարության իրագործումը:
  - Կորպորատիվ կառավարման սկզբունքների ներդրում՝ թափանցիկության, համապատասխանության և արդյունավետության ապահովմանն ուղղված վերահսկող մեխանիզմների միջոցով:
  - Կապիտալի կառուցվածքի և ռիսկերի կառավարում՝ աճի հավասարակշռում ֆինանսական կարգապահության և կայունության հետ:
- Ակտիվների կառավարում
  - Դուստր ընկերությունների գործառնական կառավարում և ընդլայնում՝ կառավարման երկարաժամկետ փորձի, թիմի պրոֆեսիոնալիզմի և ընդհանուր ադմինիստրատիվ ֆունկցիաների տրամադրմամբ:
  - Օրգանական աճի և գործառնական արդյունավետության խթանում՝ տվյալահեն որոշումների և սիներգիաների կիրառմամբ:
  - Ռազմավարական միաձուլումներ և ձեռքբերումներ (M&A)՝աճի արագացում նոր ակտիվների ձեռքբերմամբ և շուկայի կոնսոլիդացիայով:

Ընկերությունը իր դրամական հոսքերը ստանում է հետևյալ աղբյուրներից՝ դուստր ընկերություններից շահաբաժիններ, պոտենցիալ խորհրդատվական վճարներ դուստր ընկերություններից և ապագայում հնարավոր՝ բաժնեմասերի և

բաժնետոմսերի վաճառքից ստացվող եկամուտներ: Ընկերությունը, որպես հոլդինգային և կառավարող ընկերություն, առևտրային գործունեություն չի իրականացնում, հետևաբար՝ «Ինթելլիջենթ Մենեջմենթ» ՍՊԸ-ի գործունեության նկարագրությունը չի կարող լիարժեք լինել առանց հիմնական դուստր ընկերությունների նկարագրության:

<u>«Արինտերլև» ՓԲԸ (Վարդանանց նորարարական բժշկության կենտրոն)</u>
«Արինտերլև» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Վարդանանց կամ Վարդանանց ՆԲԿ) Խմբի առողջապահական ուղղության դուստր ընկերությունն է, որն ապահովում է ախտորոշում, ամբուլատոր (արտահիվանդանոցային) և ստացիոնար (հիվանդանոցային) բուժօգնություն, կանխարգելիչ և երկարաժամկետ խնամք: Ազդագիրը ՀՀ ԿԲ գրանցման ներկայացնելու պահի դրությամբ Ընկերությունը միավորում է ավելի քան 400 բժիշկների բազմապրոֆիլ թիմ և ունի 4 բուժկենտրոն Երևանում և մարզերում և հանդիսանում է Հայաստանի առաջատար մասնավոր առողջապահական հաստատություններից մեկը:

<u>«ԷՖԵՍ» ԱՓԲԸ</u>
«ԷՖԵՍ» ԱՓԲԸ ՀՀ ապահովագրական շուկայի առաջատար ընկերություններից մեկն է՝ հիմնադրված 2023 թվականին: Ընկերությունը առաջարկում է ոչ կյանքի ապահովագրության լուծումներ՝ առողջության, ավտոմեքենայի, ճամփորդության, գույքի, պատասխանատվության և կորպորատիվ ապահովագրության ուղղությամբ: Թվային մոտեցման և արագ աճող հաճախորդների բազայի շնորհիվ «ԷՖԵՍ» ԱՓԲԸ-ն կարճ ժամանակում դարձել է շուկայի առաջատարներից մեկը:

<u>«Բոնուս Ասիստանս» ՍՊԸ</u>
Ազդագիրը ՀՀ ԿԲ գրանցման ներկայացնելու պահի դրությամբ <u>«Բոնուս Ասիստանս» ՍՊԸ-ն վերակազմակերպման փուլում է: Ակնկալվում է, որ մոտ ապագայում այն կդառնա Ընկերության 100% դուստր ընկերություն:</u> «Բոնուս Ասիստանս» ՍՊԸ-ն աջակցության (ասիստանս) ծառայություններ մատուցող ընկերություն է, որը մատուցում է շուրջօրյա բժշկական և ճանապարհորդական աջակցություն անհատների, ընտանիքների և կազմակերպությունների համար: Ծառայությունները ներառում են դեպքերի տրիաժ, բժշկական խորհրդատվություն, հիվանդանոցային ուղեգրեր, բժշկական փոխադրում և արտակարգ իրավիճակների համակարգում:

<u>«Լենդլորդ» ՍՊԸ</u>
«Լենդլորդ» ՍՊԸ-ն անշարժ գույքի ձեռքբերման և ենթակառուցվածքների զարգացման համար ստեղծված հատուկ նշանակության ընկերություն (Special Purpose Vehicle - SPV) է, որը պլանավորում է կառուցել նոր բազմաֆունկցիոնալ կենտրոն: Վերջինս հիմնականում կծառայի որպես Վարդանանցի նոր մասնաճյուղ և «ԷՖԵՍ» ԱՓԲԸ գրասենյակ: 2025 թվականի ընթացքում «Լենդլորդ» ՍՊԸ-ին <u>վերակազմակերպման ճանապարհով միացել է իր 100% դուստր</u>՝ «Վալեմ» ՍՊԸ-ն,

ինչի արդյունքում «Լենդլորդ» ՍՊԸ-ն դարձել է «Վալեմ» ՍՊԸ-ի լիիրավ իրավահաջորդը:

<u>«Պրեմիում Քոնսալթանթ» ՍՊԸ</u>
«Պրեմիում Քոնսալթանթ» ՍՊԸ-ն ներխմբային հաշվապահական և խորհրդատվական ծառայություններ է մատուցում Ընկերության դուստր կազմակերպություններին:

### 1.1.5 Թողարկողի կազմակերպչական կառուցվածքը

Թողարկողի կազմակերպչական կառուցվածքը ներկայացված է **Հավելված 2-ում**:

### 1.1.6 Թողարկողի խմբի կառուցվածքը

Թողարկողի խմբի կառուցվածքը հասանելի է Ազդագրի 3.5.1 ենթագլխում:

### 1.1.7 Ակտիվների որակը

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Թողարկողի ընդհանուր ակտիվների մեծությունը կազմել է 21.2 միլիարդ ՀՀ դրամ: Նույն պահի դրությամբ կապիտալի համարժեքության գործակիցը (ընդհանուր կապիտալի հարաբերությունն ընդհանուր ակտիվներին) կազմել է 9.0%:

## 1.2 Թողարկողին և Պարտատոմսերին առնչվող ռիսկերը

### 1.2.1 Թողարկողին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

**Կարգավորման ռիսկ**. Առողջապահության և ապահովագրության ոլորտները Հայաստանում ենթարկվում են խիստ վերահսկողության: Ընկերությունը և դուստր ընկերությունները պարտավոր են համապատասխանել ազգային և տեղական նորմերին, ներառյալ՝ լիցենզավորման, սանիտարահիգիենիկ, նորմատիվ կարգավորման, գործառնական ստանդարտների և անվտանգության կանոնակարգերին: Այս կարգավորումների էական փոփոխությունները, լիցենզիաների ստացման կամ թարմացման ուշացումը, կամ դրանց անհամապատասխանությունը կարող են հանգեցնել տուգանքների, գործառնական սահմանափակումների կամ հեղինակության վնասի: Բացի այդ, միջազգային տվյալների պաշտպանության օրենքներին (օրինակ՝ GDPR) համապատասխանությունը ներկայումս ունի մեծ կարևորություն: Տվյալների անվտանգության խախտումը կամ հաճախորդների կոնֆիդենցիալ անձնական տեղեկատվության ոչ պատշաճ կառավարումը կարող է

հանգեցնել ֆինանսական և իրավական հետևանքների: Ընկերությունը վստահորեն կառավարում է կարգավորման ռիսկը մասնագիտացված անձնակազմի շնորհիվ, թվային տեխնոլոգիաների կիրառման և կարգավորման առաջանցիկ սկզբունքների վաղ ներդրմամբ:

**Մակրոտնտեսական ռիսկ**. Ընկերության գործունեությունը սերտորեն կապված է երկրի մակրոտնտեսական իրավիճակի հետ: Տնտեսական անկայունության, արժույթի արժեզրկման կամ բարձր գնաճի ժամանակահատվածները կարող են նվազեցնել բնակչության գնողունակությունը, ինչը կարող է սահմանափակել Վարդանանցի ծառայություններից օգտվողների և ԷՖԵՍ-ի ապահովագրական պրոդուկտներից օգտվողների քանակը: Վճարումների ուշացումը կամ չկատարումը կարող է հանգեցնել իրացվելիության խնդիրների, ինչը կազդի Ընկերության գործառույթների ֆինանսավորման, նոր տեխնոլոգիաների ներդրման և անձնակազմի վերապատրաստման վրա:

**Մրցակցային ռիսկ**. Հայաստանում առողջապահության և ապահովագրության ոլորտները գնալով դառնում են ավելի մրցակցային: Նոր կլինիկաները, որոնք առաջարկում են մասնագիտացված կամ ավելի մատչելի ծառայություններ, ինչպես նաև ապահովագրական ընկերությունների նոր ծառայությունները կարող են նվազեցնել «Վարդանանց» ՆԲԿ-ի և «ԷՖԵՍ» ԱՓԲԸ-ի մասնաբաժինը շուկայում: Հատկապես միջազգային գործընկերներ ունեցող խոշոր ընկերությունները կարող են գրավել շուկայի զգալի մասը: Մրցունակությունը պահպանելու համար Ընկերությունը մշտապես ներդրումներ է կատարում թվային և գործառնական տեխնոլոգիաների, անձնակազմի վերապատրաստման և որակի բարելավման ուղղությամբ:

**Գործառնական ռիսկ**. Ընկերության հաջողությունը մեծապես կախված է բարձր գործառնական արդյունավետությունից և մատուցվող ծառայությունների որակից: Հիմնական գործառնական ռիսկերը ներառում են.

- Անձնակազմի խնդիրներ. Հայաստանում որակավորված մասնագետների հավաքագրումն ու պահպանումը դառնում է ավելի դժվար՝ կապված մասնագիտական արտագաղթի և ոլորտում մրցակցության հետ: Անհրաժեշտ անձնակազմի պակասը կարող է վնասել սպասարկման որակին և հաճախորդների գոհունակությանը:
- Ծառայությունների ընդհատումներ. Էլեկտրամատակարարման խափանումները, SS համակարգերի ձախողումները կամ մատակարարման շղթայի խնդիրները կարող են ժամանակավորապես դադարեցնել գործունեությունը, առաջացնելով եկամուտների կորուստ:

**Ապահովագրական ոլորտի ռիսկեր**. Խմբի ապահովագրական բիզնեսում առկա է ռիսկ, որ ապահովագրական հատուցումների պահանջների հաճախականության, ակնկալվող չափի կամ ժամանակաշրջանի անսպասելի փոփոխությունները կարող են

հանգեցնել եկամուտների նվազման: Ապահովագրական բիզնեսի ֆինանսական հոսքերի վրա էապես ազդում են այնպիսի գործոններ, ինչպիսիք են մակրոտնտեսական միտումները, բժշկական ծառայությունների գնաճը, դեմոգրաֆիկ փոփոխությունները, տեխնոլոգիական փոփոխությունները, ինչպես նաև վիճակագրական տատանումները: Խմբի ապահովագրական բիզնեսը պարբերաբար իրականացնում է պահանջների միտումների կանոնավոր վերագնահատում, որպեսզի վերանայվեն պայմանագրային պայմանները և հնարավորինս նվազեցվեն ռիսկերը:

**Համաճարակների ռիսկ.** Խումբը առողջապահության ոլորտի էական դերակատարներից է, և հնարավոր համաճարակները կարող են էապես ազդել Խմբի գործունեության վրա: Համաճարակները նախ կարող են առաջացնել Խմբի ընկերություններում գործառնական դժվարություններ՝ բավարար աշխատակազմի պահպանման և բնակիչների ու հիվանդների պաշտպանության տեսանկյունից: Հնարավոր համաճարակը կարող է նաև էապես փոխել բժշկական ծառայությունների կազմն ու եկամուտների կառուցվածքը: Համաճարակների արդյունքում կարող է տեղի ունենալ նաև հիվանդների արտառոց հոսք ստացիոնար ծառայություններ մատուցող կենտրոններում՝ ծանրաբեռնելով առկա ռեսուրսներն ու անձնակազմը, ինչպես նաև հաճախակի չեղարկումներ ամբուլատոր ծառայությունների մասով: Հնարավոր սահմանափակումներն ու կանոնակարգերը, որոնք նախատեսված են համաճարակների տարածումը կանխելու նպատակով բիզնես գործունեությունը սահմանափակելու համար, նույնպես կարող են զգալի ազդեցություն ունենալ Խմբի որոշ ընկերությունների եկամուտների և շահութաբերության վրա: Ապագա համաճարակները կարող են նաև կարճաժամկետ նվազեցնել ապահովագրական պահանջները, եթե հաճախորդները չկարողանան կամ չցանկանան օգտվել որոշ առողջապահական ծառայություններից: Նման իրավիճակներ տեղի են ունեցել ապահովագրական շուկայում COVID-19 համաճարակի ժամանակ: Խմբի դիվերսիֆիկացիան և առողջապահական ոլորտի համեմատական կայունությունը մեղմացնում են նման ռիսկերը, մասնավորապես՝ COVID-19 համաճարակի ժամանակ Վարդանանցի հասույթը տարեկան կտրվածքով (2021 թվականին 2020 թվականի համեմատ) ցուցաբերել է 75% աճ:

**Հեղինակության ռիսկ.** Խմբի և Խմբի ընկերությունների հաջողությունն էապես կախված է նաև բրենդից և հեղինակությունից: Հաճախորդները ծառայություններ մատուցողներին ընտրելիս մեծ նշանակություն են տալիս ընկերությունների համբավին: Ցանկացած բացասական տեղեկատվություն (անկախ նրանից՝ դա իրականությանը համապատասխանում է, թե ոչ), Խմբի կամ Խմբի ընկերությունների հետ կապված դատական գործընթացների, աշխատակիցների ոչ պատշաճ վարքագծի, գործառնական խափանումների, հաճախորդների տվյալների արտահոսքի կամ ոչ որակյալ ծառայություն մատուցելու վերաբերյալ, կարող է էական ազդեցություն ունենալ Խմբի ընկերությունների ծառայությունների նկատմամբ պահանջարկի և Խմբի հասույթի վրա: Կարևորելով Խմբի ընկերությունների հեղինակությունը՝ Ընկերությունը

մեծ ուշադրություն է դարձնում կայուն և էթիկապես ճիշտ բիզնեսավարման սկզբունքներին և իրականացնում է հասարակության հետ կապերի պրոակտիվ և արդյունավետ կառավարում:

**Վարկային ռիսկ.** վարկային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ փոխառուն կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտականությունները Թողարկողի նկատմամբ: Թողարկողը մշակել է քաղաքականություն և ընթացակարգեր վարկային ռիսկը կառավարելու համար (ինչպես ճանաչված ֆինանսական ակտիվների, այնպես էլ չճանաչված պայմանագրային պարտավորությունների համար), ներառյալ ապահովագրական և ներդրումային պորտֆելի ռիսկայնության կառավարման նորմատիվների սահմանումը, դրանց հետևումը և ներդրումային քաղաքականության պարբերական թարմացումները:

**Իրացվելիության ռիսկ**. իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Թողարկողը կունենա դժվարություններ ֆինանսական գործիքների հետ կապված պարտավորությունները կատարելիս, որոնք մարվում են դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի միջոցով: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ամբողջական համապատասխանությունը բնորոշ չէ ֆինանսական կազմակերպություններին, այդ թվում՝ ապահովագրական ընկերություններին՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթ լինելով և ժամկետների անորոշությամբ: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության տարբերությունը կարող է նպաստել Թողարկողի գործունեության արդյունավետության և եկամտաբերության բարձրացմանը, սակայն դա միաժամանակ ստեղծում է իրացվելիության ռիսկ, որը կառավարվում է Թողարկողի և դուստր կազմակերպությունների կողմից՝ հիմնվելով լավագույն միջազգային և տեղական փորձի վրա: Մասնավորապես, ապահովագրական բիզնեսի իրացվելիության կառավարումը հիմնվում է ապահովագրողների ներդրումային գործունեությունը կարգավորող օրենսդրական նորմերի, ներդրումային պորտֆելի տարբեր տեսակի գործիքների առավելագույն ծավալների սահմանաչափերի, և բանկերի ու հետգնման պայմանագրերով կոնտրագենտների սահմանաչափերի վրա:

Թողարկողին առնչվող ռիսկերի մանրամասն նկարագրությունը կարող եք տեսնել Ազդագրի 3.2 գլխում:

### 1.2.2 Պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

**Տոկոսադրույքի ռիսկ:** Շուկայում Պարտատոմսերի գները գտնվում են հակադարձ կախվածության մեջ տոկոսադրույքների մակարդակից, այսինքն՝ տոկոսադրույքների բարձրացումը, այլ հավասար պայմաններում, հանգեցնում է Պարտատոմսերի գնի անկմանը և հակառակը:

**Շուկայական ռիսկ:** Երկրորդային շուկայում Պարտատոմսերի գինը և դրանց նկատմամբ պահանջարկը կարող են նվազել ներքին/միջազգային տնտեսություններում տնտեսական ընթացիկ ցուցանիշների և դրանց փոփոխությունների սպասումների հետ կապված: Ներդրողը պետք է հաշվի առնի, որ արժեթղթերի գները շուկայում կարող են ժամանակի ընթացքում իջնել կամ բարձրանալ:

**Վերաներդրման ռիսկ:** Վերաներդրման ռիսկը պայմանավորված է Պարտատոմսերից պարբերաբար ստացվող արժեկտրոնային եկամուտների առնվազն համարժեք եկամտաբերությամբ (ձեռքբերման գործարքով սահմանված մինչև մարումը եկամտաբերությամբ) ներդրում կատարելու հնարավորության բացակայությամբ:

**Վարկային/դեֆոլտի ռիսկ:** Ներդրողները Պարտատոմսեր ձեռք բերելիս իրենց վրա են վերցնում Թողարկողի վարկային ռիսկը, որը կապված է ապագայում Թողարկողի ֆինանսական վիճակի հնարավոր վատթարացման, արժեկտրոնային վճարումներ իրականացնելու կամ Պարտատոմսերն իրենց անվանական արժեքով մարման անհնարինության և հավանական սնանկացման հետ:

**Արտարժութային ռիսկ:** Արտարժութային ռիսկն առկա է այն ներդրողների մոտ, ովքեր իրենց դրամական միջոցները Պարտատոմսերում ներդնելու նպատակով պետք է փոխարկեն մի արժույթից մեկ այլ արժույթի:

**Իրացվելիության ռիսկ:** Թողարկողը չի կարող երաշխավորել, որ Պարտատոմսերի շրջանառության ողջ ժամկետի ընթացքում ներդրողները ցանկացած պահի կարող են իրացնել կամ ձեռք բերել Պարտատոմսերը երկրորդային շուկայում (կարգավորվող շուկայում) իրենց համար տնտեսապես շահավետ գնով:

**Գնաճի կամ գնողունակության ռիսկ:** ՀՀ-ում գնաճի առկայության պարագայում, Թողարկողի կողմից Պարտատոմսերի դիմաց առաջարկվող անվանական արժեկտրոնային եկամտաբերությունը գնահատելիս ներդրողները պետք է հաշվի առնեն, որ իրական եկամտաբերությունը կարող է լինել անվանական արժեկտրոնային եկամտաբերությունից ավելի ցածր:

## 1.3 Թողարկողի տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները

Ընկերության ֆինանսական վիճակը էական բարելավման փուլում է հետևյալ գործոնների պատճառով:

- «ԷՖԵՍ» ԱՓԲԸ-ն, ինչպես նոր հիմնված ընկերություն, Ազդագիրը ՀՀ ԿԲ գրանցման ներկայացնելու պահի դրությամբ գտնվում է արագ աճի և կայացման փուլում, և Ընկերության ղեկավարության կարծիքով մոտակա ամիսների ընթացքում կշարունակի ապահովագրավճարների և շահութաբերության աճը. 2025 թվականի ընթացքում «ԷՖԵՍ» ԱՓԲԸ-ի զուտ շահույթը կազմել է 409 միլիոն դրամ:
- 2024 թվականի ընթացքում ներդրվել են նոր ապահովագրական պրոդուկտներ միջազգային ապահովագրական ընկերությունների հետ համատեղ (մասնավորապես՝ շվեյցարական Swiss Re, իտալական Generali և գերմանական Allianz), որոնք եկամտի նոր և արագ աճող աղբյուր են ապահովում մոտակա ամիսների և տարիների ընթացքում:
- «Արինտերլև» ՓԲԸ-ն ավարտել է իր զարգացման կապիտալ ներդրումային ծրագիրը, որը սկսվել է 2022 թվականին, և որի արդյունքում ներդրվել է շուրջ 2.4 միլիարդ ՀՀ դրամ երկու նոր՝ Նանսեն և Քոչար մասնաճյուղերի ստեղծման, ներառյալ՝ շինարարական և վերանորոգման աշխատանքների, սարքավորումների ձեռքբերման և անձնակազմի վերապատրաստման նպատակներով:
- 2025 թվականից ամբողջությամբ աշխատում են Վարդանանցի երկու նոր մասնաճյուղերը՝ Նանսեն և Քոչար:
- 2026 թվականից մեկնարկած առողջության համապարփակ ապահովագրության ներդրումը ավելացրել է որակյալ բժշկական ծառայությունների պահանջարկը, ինչի արդյունքում «Արինտերլև» ՓԲԸ-ի հասույթը 2026 թվականի առաջին 3 ամիսներին աճել է շուրջ 36%-ով՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:
- Ընկերության արագ աճող դրամական հոսքերի մի մասը կուղղվի պարտքային բեռի օպտիմալացմանը և պարտքի սպասարկման թեթևացմանը:

Ընկերությունը 2025 թվականի դեկտեմբերին թողարկեց և հաջողությամբ տեղաբաշխեց 1 մլրդ ՀՀ դրամ և 2.5 մլն ԱՄՆ դոլար ծավալով պարտատոմսեր, որոնք 2026 թվականի փետրվարի 13-ից ցուցակված են ֆոնդային բորսայում:

## 1.4 Թողարկողի աուդիտն իրականացնող անձի և խորհրդատուների ինքնության մասին տեղեկություններ

Թողարկողի 2023-2025 թթ. ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացվել է «ԲիԴիՕ-Արմենիա» ՓԲԸ կողմից՝

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Դավիթ Անհաղթի փ., շ 23/6, բն. 7 տարածք
հեռ.՝ +374 60528899
կայք՝ https://www.bdoarmenia.am/:

## 1.5 Թողարկողի կառավարման մարմնի անդամները, աշխատակիցները և խոշոր մասնակիցները

Թողարկողի կառավարման մարմիններն են՝ Ընկերության ընդհանուր ժողովը (այսուհետ՝ Ընդհանուր ժողով), Տնօրենների խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) և գործադիր մարմինը՝ Տնօրենը:

Թողարկողի մասնակիցներն են՝

| Մասնակից | Բաժնեմաս (ՀՀ դրամ) | Բաժնեմաս (%) |
|---|---|---|
| Արևշատ Մելիքսեթյան | 6,250,000 ՀՀ դրամ | 100% |

Թողարկողի Խորհրդի կազմը՝

| Անունը, ազգանունը | Պաշտոնը | Փորձառություն |
|---|---|---|
| Արևշատ Մելիքսեթյան | Խորհրդի Նախագահ/Տնօրեն | Ապահովագրական ոլորտի կառավարիչ և գործարար (ավելի քան 25 տարվա փորձառություն) |
| Լևոն Ալթունյան | Խորհրդի անդամ | Ապահովագրական և առողջապահության ոլորտների կառավարիչ, գործարար և հանրային գործիչ (ավելի քան 35 տարվա փորձառություն) |
| Մարիա Մելիքսեթյան | Խորհրդի անդամ | Միջազգային հարաբերությունների մասնագետ (ավելի քան 15 տարվա փորձառություն) |
| Նորայր Ալթունյան | Խորհրդի անդամ | Կլինիկական օրդինատոր, մասնագիտացմամբ բժիշկ-ռևմատոլոգ (ավելի քան 5 տարվա փորձառություն) |
| Մասիս Վարդանյան | Խորհրդի անդամ | Ներդրումային կառավարիչ և ֆինանսիստ (ավելի քան 15 տարվա փորձառություն) |

Թողարկողի գործադիր մարմնի կառուցվածքը՝

| Անունը, ազգանունը | Պաշտոնը | Փորձառությունը ոլորտում |
|---|---|---|
| Արևշատ Մելիքսեթյան | Տնօրեն | 25 տարի |

Թողարկողի աշխատակիցների ընդհանուր թիվն առ 31.12.2025թ. կազմել է 9: Խմբի և դուստր ընկերությունների աշխատակիցների ընդհանուր թիվն Ազդագիրը ՀՀ ԿԲ

գրանցման ներկայացնելու պահի դրությամբ կազմել է 893, այդ թվում՝ 659 աշխատակից «Արինտերլև» ՓԲԸ-ում (որից 412 բժշկական անձնակազմ), 175 աշխատակից «ԷՖԵՍ» ԱՓԲԸ-ում, 46 աշխատակից «Բոնուս Ասիստանս» ՍՊԸ-ում, 9 աշխատակից «Ինթելլիջենթ Մենեջմենթ» ՍՊԸ-ում, 3 անձ «Պրեմիում Քոնսալթանթ» ՍՊԸ-ում և 1 անձ «Լենդլորդ» ՍՊԸ-ում:

## 1.6 Առաջարկվող արժեթղթերի հիմնական վիճակագրական տվյալները

Թողարկվող Պարտատոմսերն անվանական ոչ փաստաթղթային են, բաժանելի չեն և փոխարկելի չեն:

Պարտատոմսերի դիմաց տոկոսային եկամուտը վճարվելու է արժեկտրոնների տեսքով:

Պարտատոմսերի թողարկման (առաջարկի) ընդհանուր ծավալը դրամային արտահայտությամբ կազմում է առավելագույնը 5 (հինգ) միլիարդ ՀՀ դրամ: Թողարկման արժույթը ՀՀ դրամն է և/կամ ԱՄՆ դոլարը:

ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով Պարտատոմսերը տեղաբաշխվելու և մարվելու են համապատասխանաբար ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով:

ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով Պարտատոմսերի դիմաց նախատեսվող արժեկտրոնային եկամուտը հաշվարկվելու և վճարվելու է համապատասխանաբար ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով:

Տեղաբաշխվող (վաճառվող) Պարտատոմսերի քանակը որոշվելու է Թողարկման ծավալին ու անվանական արժեքին համապատասխան:

Մեկ Պարտատոմսի անվանական արժեքը ՀՀ դրամով թողարկվող Պարտատոմսերի դեպքում կազմում է 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ, իսկ ԱՄՆ դոլարով թողարկվող Պարտատոմսերի դեպքում՝ 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար: Ընկերությունը նախատեսում է Պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքում ներգրավված միջոցների շուրջ 50%-ն (կամ 2.5 մլրդ ՀՀ դրամն) ուղղել զարգացմանն ուղղված կապիտալ ծախսերի իրականացմանը, նոր ծրագրերի և թվային նախագծերի ներդրմանը, իսկ մյուս 50%-ն (կամ 2.5 մլրդ ՀՀ դրամն)՝ առկա վարկային պարտավորությունների վերաֆինանսավորմանը:

## 1.7 Արժեթղթերի առաջարկի համակողմանի նկարագիրը

Պարտատոմսերը տեղաբաշխվելու են կարգավորվող շուկայից (ֆոնդային բորսայից) դուրս, ուղիղ վաճառքի միջոցով:

Պարտատոմսերի տեղաբաշխումն սկսելու և ավարտելու օրը, ձեռքբերման գործընթացի մանրամասները և վաճառքի պայմանները ենթակա են որոշման Թողարկողի կողմից Պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

## 1.8 Վերջնական պայմանների հրապարակման ձևը

Պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության ու մարման վերջնական պայմանները ենթակա են որոշման Թողարկողի կողմից Պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման համար կազմվող թողարկման վերջնական պայմանները ՀՀ կենտրոնական բանկ (այսուհետ նաև՝ ՀՀ ԿԲ) են ներկայացվում և հրապարակվում հրապարակային տեղաբաշխումը սկսելուց առնվազն 2 (երկու) աշխատանքային օր առաջ:

Արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման վերջնական պայմանները Թողարկողը պարտավորվում է հրապարակել առնվազն իր ինտերնետային կայքում:

## 1.9 Ամփոփ ֆինանսական տվյալներ

### 1.9.1 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

*հազ. դրամ*

| Ցուցանիշի անվանումը | 2025թ. *(Աուդիտ անցած)* | 2024թ. *(Աուդիտ անցած)* | 2023թ. *(Աուդիտ անցած)* |
|---|---|---|---|
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից և գործառնական գործունեությունից հասույթ | 16,793,774 | 13,522,294 | 4,361,430 |
| Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների և գործառնական գործունեության գծով ծախսեր | (10,640,415) | (8,125,655) | (2,830,996) |
| **Համախառն շահույթ (վնաս)** | **6,153,359** | **5,396,639** | **1,530,434** |
| Իրացման ծախսեր | (108,193) | (103,963) | (88,958) |
| Վարչական ծախսեր | (11,450,635) | (8,165,774) | (1,424,915) |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս) | (5,405,469) | (2,873,098) | 16,560 |

| | | | |
|---|---|---|---|
| Գործառնական այլ եկամուտներ | 5,700,945 | 2,628,987 | 61,440 |
| Գործառնական այլ ծախսեր | (540,363) | (506,493) | (334,865) |
| **Գործառնական շահույթ (վնաս)** | **(244,887)** | **(750,604)** | **(256,864)** |
| **Սովորական գործունեությունից շահույթ (վնաս)** | **(639,846)** | **(914,640)** | **(567,854)** |
| **Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը** | **(639,846)** | **(914,640)** | **(567,854)** |
| Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում) | 88,557 | 132,223 | 35,998 |
| **Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո** | **(551,288)** | **(782,417)** | **(531,856)** |

## 1.9.2 ԱՄՓՈՓ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ

*հազ. դրամ*

| Ցուցանիշի անվանումը | 2025թ. *(Աուդիտ անցած)* | 2024թ. *(Աուդիտ անցած)* | 2023թ. *(Աուդիտ անցած)* |
|---|---|---|---|
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 336,065 | 42,568 | 271,007 |
| Ավանդներ բանկերում | 2,104,295 | 1,710,879 | 1,351,802 |
| Ներդրումային արժեթղթեր | 4,642,842 | 4,603,115 | 906,153 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 417,643 | 353,414 | 219,410 |
| Վերաապահովագրության պայմանագրերի գծով ակտիվներ | 3,067,857 | 1,118,077 | 4,196 |
| Տրված փոխառություններ | 720,681 | 424,203 | 760,930 |
| Պաշարներ | 131,448 | 129,704 | 117,228 |
| Այլ ակտիվներ | 122,268 | 40,385 | 95,641 |
| Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման գծով | 23,870 | 8,758 | 139,818 |
| Հիմնական միջոցներ | 4,863,471 | 4,957,771 | 2,809,174 |
| Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ | 1,980,495 | 2,130,467 | 1,685,736 |
| Ոչ նյութական ակտիվներ | 528,432 | 368,367 | 135,197 |
| Գուդվիլ | 1,950,839 | 1,950,839 | 1,950,839 |
| Հետաձգված հարկային ակտիվ | 337,247 | 248,690 | 128,063 |
| **Ընդամենը ակտիվներ** | **21,227,454** | **18,087,237** | **10,575,194** |
| Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար | 6,250 | 6,250 | 6,250 |
| Կուտակված շահույթ | (1,440,305) | (1,133,027) | (543,930) |
| Էմիսիոն եկամուտ | 2,698,911 | 2,698,911 | 2,698,911 |
| Պահուստային կապիտալ | 557,586 | 388,865 | 2,842 |
| Չվերահսկվող բաժնեմաս | 90,611 | 334,621 | 472,519 |
| **Ընդամենը սեփական կապիտալ** | **1,913,053** | **2,295,620** | **2,636,592** |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 978,678 | 928,732 | 536,767 |
| Շահութահարկի գծով պարտավորություն | 60,167 | - | 5,254 |
| Վերադարձի պարտավորություն | 158,408 | 217,165 | - |
| Փաստաթղթային ակրեդիտիվ | - | - | 100,411 |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | 3,476,711 | 2,245,718 | - |
| Վերաապահովագրության պայմանագրերի գծով պարտավորություններ | 83,700 | 27,600 | 83,870 |
| Ապահովագրության պայմանագրերի գծով պարտավորություններ | 4,074,909 | 3,130,216 | 939,338 |
| Այլ պարտավորություններ | 310,827 | 701,930 | 222,944 |
| Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ | 4,751,877 | 6,199,200 | 4,266,886 |
| Վարձակալության պարտավորություններ | 2,426,704 | 2,340,366 | 1,782,075 |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | 2,991,828 | - | - |
| Եկամուտներին վերաբերող շնորհներ | 590 | 690 | 1,057 |

| | | | |
|---|---|---|---|
| **Ընդամենը պարտավորություններ** | **19,314,401** | **15,791,617** | **7,938,602** |
| **Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ** | **21,227,454** | **18,087,237** | **10,575,194** |

### 1.9.3 ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՄՓՈՓ ՏՎՅԱԼՆԵՐ

*հազ.դրամ*

| Ցուցանիշի անվանումը | 2025թ. (Աուդիտ անցած) | 2024թ. (Աուդիտ անցած) | 2023թ. (Աուդիտ անցած) |
|---|---|---|---|
| Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբին | 42,568 | 271,007 | 91,958 |
| Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր | (44,862) | 1,570,162 | 1,163,322 |
| Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր | (111,605) | (4,870,671) | (4,067,676) |
| Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր | 473,522 | 3,061,154 | 3,086,157 |
| Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | (23,558) | 10,916 | (2,753) |
| Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին | 336,065 | 42,568 | 271,007 |

### 1.9.4 ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ

| Ցուցանիշի անվանումը | 2025թ. | 2024 | 2023 |
|---|---|---|---|
| Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS) | | - | - |
| Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE) | -26.2% | -31.7% | - |
| Ակտիվների շահութաբերություն (ROA) | -2.8% | -5.5% | - |
| Զուտ շահույթի մարժա (NPM) | -3.3% | -5.8% | -12.2% |
| Կապիտալի համարժեքության գործակից | 0.09 | 0.13 | 0.25 |
| Ֆինանսական կախվածության գործակից | 10.10 | 6.88 | 3.01 |
| Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից | 43.6 | 47.2 | - |
| Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով | 8.4 | 7.7 | - |
| Պաշարների շրջանառելիության գործակից | 81.5 | 65.8 | - |
| Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով | 4.5 | 5.5 | - |
| Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից | 11.2 | 11.1 | - |
| Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով | 32.7 | 32.9 | - |

* Ներկայացված ցուցանիշները միջինացված են

Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը ներկայացված են Հավելված 1-ում:

## ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԴՐՈՂԻՆ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԸ ՊԵՏՔ Է ԴԻՏՎԻ ՈՐՊԵՍ ԱԶԴԱԳՐԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄ ԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԴՐՈՂԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՊԵՏՔ Է ՀԻՄՆՎԱԾ ԼԻՆԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԱԶԴԱԳՐԻ ՎՐԱ:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻ ԿԱԶՄՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁՆ ԱՄՓՈՓԱԹԵՐԹՈՒՄ ՊԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԱՊԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԱՍՈՎ) ԿՐՈՒՄ Է ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԵԹԵ ԱՅՆ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԱՊԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ Է ԱԶԴԱԳՐԻ ՄՅՈՒՍ ՄԱՍԵՐԻ ՀԵՏ ԴԻՏԱՐԿԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ:

# ՄԱՍ 2 ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

## 2.6 Լրացուցիչ տեղեկատվություն

### 2.6.2 Աուդիտորական եզրակացությունը

Բացի սույն Ծրագրային Ազդագրում ներկայացված Թողարկողի պատմական ֆինանսական հաշվետվություններից (2023-2025 թթ. համար), որոնք ենթարկվել են աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից, սույն Ծրագրային Ազդագրում ներկայացված այլ ֆինանսական տեղեկատվություն չի ենթարկվել աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից: Հաշվետվությունների և դրանց վերաբերյալ անկախ աուդիտորական կազմակերպությունների կողմից տրված եզրակացությունների պատճենները ներկայացված են Հավելված 5-ում:

# ՄԱՍ 3 ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

## 3.1 Անկախ աուդիտորներ

Թողարկողի 2023-2025 թթ. ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացվել է «ԲիԴիՕ-Արմենիա» ՓԲԸ կողմից՝

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Դավիթ Անհաղթի փ., շ 23/6, բն. 7 տարածք
հեռ.՝ +374 60528899
կայք՝ https://www.bdoarmenia.am/:

## 3.3 Տեղեկատվություն թողարկողի մասին

### 3.3.2 Նշանակալի դեպքերը

Ընկերության և դուստր ընկերությունների՝ վերջին շրջանում տեղի ունեցած նշանակալի դեպքերը.

- Ընկերությունը 2023 թվականին «Արինտերլև» ՓԲԸ-ի իր բաժնետոմսերի փոքր փաթեթ՝ 5.82%-ը, վաճառել է ԵՄ-Հայաստան ՓՄՁ Հիմնադրամին (Ամբեր Կապիտալ Արմենիա)՝ ներգրավելով հեղինակավոր միջազգային գործընկեր:
- «Արինտերլև» ՓԲԸ-ն 2023 թվականին ներգրավել է ինստիտուցիոնալ ներդրում 2.5 միլիոն ԱՄՆ դոլար չափով ԵՄ-Հայաստան ՓՄՁ Հիմնադրամից (Ամբեր Կապիտալ Արմենիա):
- «Արինտերլև» ՓԲԸ-ն 2025 թվականին թողարկել և Ֆոնդային բորսայում ցուցակել է 1 միլիարդ ՀՀ դրամ ծավալով պարտատոմսեր՝ դառնալով կապիտալի շուկա մուտք գործած առաջին բժշկական կազմակերպությունը ՀՀ-ում:
- «Արինտերլև» ՓԲԸ-ն 2025 թվականին ավարտել է զարգացման կապիտալ ներդրումային խոշոր ծրագիրը՝ շուրջ 2.4 միլիարդ դրամի չափով, որի արդյունքում գործարկվել են Երևանում երկու նոր բժշկական կենտրոն, և սկսվել է հիվանդանոցային (ստացիոնար) բուժօգնության տրամադրումը:
- 2025 թվականի փետրվարին Ընկերության 50% բաժնեմասը գործընկերոջից ձեռք է բերել Արևշատ Մելիքսեթյանը՝ դառնալով Ընկերության միակ մասնակից: Այդ գործարքի նպատակն էր օպտիմատալացնել բաժնետիրական կապիտալի կառուցվածքը, նվազեցնել Խմբի ռիսկայնության մակարդակը և Ընկերությունը առավել պատրաստ դարձնել զարգացման նոր փուլին:

- «ԷՖԵՍ» ԱՓԲԸ-ն 2025 թվականի արդյունքներով շարունակել է իր աճը և պահպանել է ուժեղ դիրքերը կամավոր ապահովագրության շուկայում: 2025 թվականի ընթացքում Ընկերությունը գրանցել է հավաքագրված ապահովագրավճարների և ակտիվների հետագա աճ, ընդ որում՝ հավաքագրված ապահովագրավճարների ծավալը կազմել է 13.3 մլրդ ՀՀ դրամ, իսկ ակտիվների ծավալը՝ 11.5 մլրդ ՀՀ դրամ:
- Ընկերությունը 2024 թվականի մայիսին ավելացրեց ԷՖԵՍ-ի կանոնադրական կապիտալը ևս 500 միլիոն դրամ ներդրման միջոցով՝ ամրապնդելով ԷՖԵՍ-ի ֆինանսական ցուցանիշները:
- Ընկերությունը 2025 թվականի դեկտեմբերին թողարկեց և հաջողությամբ տեղաբաշխեց 1 մլրդ ՀՀ դրամ և 2.5 մլն ԱՄՆ դոլար ծավալով պարտատոմսեր, որոնք 2026 թվականի փետրվարի 13-ից ցուցակված են Բորսայում:

### 3.3.3 Ներդրումները

Ընկերությունը ներկայացվող ֆինանսական ժամանակաշրջանի ընթացքում և մինչև Ազդագիրը ՀՀ ԿԲ գրանցման ներկայացնելու պահը կատարել է հետևյալ էական ներդրումները.

- Ընկերությունը 2023 թվականի հուլիսին հիմնել է «ԷՖԵՍ» ԱՓԲԸ-ն՝ ներդնելով 2 միլիարդ դրամ «ԷՖԵՍ» ԱՓԲԸ կանոնադրական կապիտալում: Ընկերությունը 2024 մայիսին ավելացրեց «ԷՖԵՍ» ԱՓԲԸ կանոնադրական կապիտալը ևս 500 միլիոն դրամ ներդրման միջոցով՝ հասցնելով այն 2.5 միլիարդ դրամի և ամրապնդելով «ԷՖԵՍ» ԱՓԲԸ-ի ֆինանսական ցուցանիշները:

- Ընկերությունը 2023 թվականին հեղինակավոր միջազգային ներդրումային հիմնադրամի (ԵՄ-Հայաստան ՓՄՁ Հիմնադրամ (Ամբեր Կապիտալ Արմենիա)) հետ համատեղ մեծ գործարքի շրջանակում վերակազմակերպման արդյունքում դարձել է «Արինտերլև» ՓԲԸ հիմնական բաժնետերը՝ տիրապետելով բաժնետոմսերի 61.9%-ին:

- Ընկերությունը 2023 թվականի հունիսին «Լենդլորդ» ՍՊԸ միջոցով ձեռք է բերել «Վալեմ» ՍՊԸ 100% բաժնեմասը, ինչի արդյունքում Ընկերությունը դարձավ ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան, Լենինգրադյան 23 հասցեում գտնվող անշարժ գույքի սեփականատեր՝ 100% անուղղակի մասնակցությամբ դուստր ընկերությունների միջոցով: 2025 թվականի ընթացքում «Լենդլորդ» ՍՊԸ-ին վերակազմակերպան ճանապարհով միացել է «Վալեմ» ՍՊԸ-ն, ինչի արդյունքում «Լենդլորդ» ՍՊԸ-ն դարձել է «Վալեմ» ՍՊԸ-ի լիիրավ իրավահաջորդը:

- Ընկերության դուստր «Արինտերլև» ՓԲԸ-ն 2022-2025 թթ. ներդրել է շուրջ 2.4 միլիարդ դրամ Երևանում երկու նոր բժշկական կենտրոնի ստեղծման համար՝ ներառյալ շինարարական և վերանորոգման աշխատանքները, սարքավորումների ձեռքբերումը և անձնակազմի վերապատրաստումը:

- Ազդագրի լրացումը ՀՀ ԿԲ գրանցման ներկայացնելու պահի դրությամբ Ընկերությունը մեկնարկել է ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան, Քըրք-Քըրքորյան (նախկինում՝ Լենինգրադյան) 23 հասցեում բազմաֆունկցիոնալ կենտրոնի կառուցման նախագիծը: Կենտրոնում կտեղակայվեն Վարդանանցի նոր ժամանակակից բուժկենտրոնը և «ԷՖԵՍ» ԱՓԲԸ գրասենյակ: Ընկերության նախնական գնահատումներով նախատեսվում է, որ նախագծային և շինարարական աշխատանքներին կուղղվի շուրջ 2-2.5 միլիարդ դրամ, այդ թվում՝ պարտատոմսերի տեղաբաշխումից ստացված դրամական միջոցներից:

## 3.4 Բիզնեսի նկարագիրը

### 3.4.1 Հիմնական գործունեությունը

«Ինթելլիջենթ Մենեջմենթ» ՍՊԸ-ն հոլդինգային և ներդրումային ընկերություն է, որը միավորում է ապահովագրության, առողջապահության և հարակից ոլորտներում, այդ թվում՝ աջակցության ծառայությունների շուկայում գործող ընկերություններ: Ընկերության հիմնական առաքելությունն է ապահովել դուստր ընկերությունների կայուն զարգացումը, կապիտալի արդյունավետ բաշխումը և կառավարման միասնական, բարձրակարգ համակարգերի ներդրումը:

Ընկերությունը գործունեություն է իրականացնում երեք հիմնական ուղղությամբ.

- Կապիտալի բաշխում
  - Բարձր ներուժ ունեցող ակտիվների բացահայտում և գնահատում, ներդրումային հնարավորությունների որոնում առողջապահության, ապահովագրության, ռիսկերի կառավարման և առողջության պահպանման թվային լուծումների, ենթակառուցվածքների ոլորտներում:
  - Նոր ընկերությունների, թվային և առողջապահական լուծումների և ենթակառուցվածքային նախագծերի մշակում և իրագործում:

- Ներդրումներ զարգացման տարբեր փուլերում գտնվող ակտիվներում, որոնք ունեն ռազմավարական նշանակություն և սիներգիա խմբի մյուս ուղղությունների և դուստր ընկերությունների հետ:

- Ռազմավարական և կորպորատիվ կառավարում
  - Զարգացման երկարաժամկետ տեսլականի և ռազմավարության ձևավորում. Ընկերությունը սահմանում է խմբի անդամ ընկերությունների զարգացման ընդհանուր ուղղությունը և ապահովում է զարգացման ռազմավարության իրագործումը:
  - Կորպորատիվ կառավարման սկզբունքների ներդրում թափանցիկության, համապատասխանության և արդյունավետության ապահովմանն ուղղված վերահսկող մեխանիզմների միջոցով:
  - Կապիտալի կառուցվածքի և ռիսկերի կառավարում. աճի հավասարակշռում ֆինանսական կարգապահության և կայունության հետ:

- Ակտիվների կառավարում
  - Դուստր ընկերությունների գործառնական կառավարում և ընդլայնում կառավարման երկարաժամկետ փորձի, թիմի պրոֆեսիոնալիզմի և ընդհանուր ադմինիստրատիվ ֆունկցիաների տրամադրմամբ:
  - Օրգանական աճի և գործառնական արդյունավետության խթանում տվյալահեն որոշումների և սիներգիաների կիրառմամբ:
  - Ռազմավարական միաձուլումներ և ձեռքբերումներ (M&A). աճի արագացում նոր ակտիվների ձեռքբերմամբ և շուկայի կոնսոլիդացիայով:

Ընկերության դրամական հոսքերը ձևավորվում են դուստր ընկերություններից ստացվող շահութաբաժիններից, ներխմբային խորհրդատվական և կառավարման վճարներից, ինչպես նաև ապագայում բաժնեմասերի և ակտիվների վաճառքից:

«Ինթելլիջենթ Մենեջմենթ» ՍՊԸ-ն առևտրային գործունեություն չի իրականացնում, և որպես եկամտի աղբյուր անհրաժեշտ է դիտարկել դուստր ընկերությունների գործունեությունից ստացվող եկամուտները:

<u>«Արինտերլև» ՓԲԸ (Վարդանանց Նորարարական Բժշկության Կենտրոն)</u>

«Արինտերլև» ՓԲԸ-ն Խմբի առողջապահական ուղղությամբ զբաղվող կազմակերպությունն է՝ գործող «Վարդանանց» բրենդի ներքո: Հայտնի լինելով իր

հիվանդակենտրոն խնամքի մոտեցմամբ՝ «Վարդանանց» ՆԲԿ-ում համատեղվում են մասնագիտական փորձը և ժամանակակից տեխնոլոգիաները՝ ծառայություններ մատուցելով շուրջ 43 մասնագիտությունների գծով: Կենտրոնը, շեշտադրելով անհատականացված բուժումը, ժամանակակից սարքավորումները և արագ ու արդյունավետ սպասարկումը, նպատակ ունի ստեղծել աջակցող և հարմարավետ միջավայր բուժառուների համար: Որակը երաշխավորվում է կրկնակի խիստ ստուգման համակարգերի և որակի վերահսկման թիմի միջոցով:

Ընկերության տեսլականն է՝ լինել ինտեգրված բժշկության կենտրոն, որտեղ ցանկացած այցելու ճիշտ ժամանակին ստանում է համապարփակ ու լիարժեք բուժում: Այդ նպատակին հասնելու համար Ընկերությունը հետևում է երեք սկզբունքի.

- Այցելուի անհատականության գերակայություն,
- Աշխատակազմի արժանապատվություն,
- Այցելու-անձնակազմ հարաբերությունների ազնվություն:

Ներկայումս «Վարդանանց» ՆԲԿ-ն ունի 4 մասնաճյուղ.

- Վարդանանց. Կենտրոնական կլինիկա
- Վարդանանց. Քոչար
- Վարդանանց. Նանսեն
- Վարդանանց. Վանաձոր

«Վարդանանց» ՆԲԿ-ի զարգացման ծրագիրը ներառում է նոր մասնաճյուղերի հիմնում և նոր ծառայությունների ներդրում, որի արդյունքում կսպասարկվեն ավելի շատ բուժառուներ, ինչպես նաև հնարավոր կլինի մատուցել նոր, դեռևս ոչ հասանելի ծառայություններ՝ ներառյալ ստացիոնար վիրահատական ծառայությունների նոր տեսակներ:

Ներկայումս Վարդանանցի 4 մասնաճյուղերում տրամադրվում են ամբուլատոր և ստացիոնար ծառայություններ հետևյալ հիմնական ուղղություններով. թերապիա, գինեկոլոգիա, նյարդաբանություն, ակնաբուժություն, վիրաբուժություն, լաբորատորիա, ատամնաբուժություն, մանկաբուժություն, ՔԿԱ (ԼՕՌ), ռադիոլոգիա:

<u>«ԷՖԵՍ» ԱՓԲԸ</u>

«ԷՖԵՍ» ԱՓԲԸ-ն Խմբի ապահովագրական ընկերությունն է, որը հիմնադրվել է նախ 1997 թվականին, անցել զարգացման տարբեր շրջաններ, և նոր ընկերության հիմնադրման միջոցով վերակազմավորվել 2023 թվականին: Այն Հայաստանի

առաջատար ապահովագրական ընկերություն է՝ շուկայի զգալի մասնաբաժնով և արագ աճող հաճախորդների բազայով: 2025 թվականի արդյունքներով «ԷՖԵՍ» ԱՓԲԸ-ն վստահորեն զբաղեցրել է առաջատարի դիրքը կամավոր ապահովագրության շուկայում (30.4% մասնաբաժին): ԷՖԵՍ-ը կենտրոնանում է մատուցվող ծառայությունների որակի, աշխատանքի թափանցիկության և նորարարական պրոդուկտների առաջարկի վրա՝ ապահովելով արդյունավետ լուծումներ հաճախորդների բարեկեցության և մտքի հանգստության համար: «ԷՖԵՍ» ԱՓԲԸ-ի առաջարկները, որոնք ներառում են առողջության, ճամփորդության, մեքենայի, գույքի և այլ տեսակներ, մշակված են միջազգային լավագույն փորձի հիման վրա՝ համապատասխանեցնելով դրանք հաճախորդների անհատական կարիքներին և առաջարկելով հուսալի պաշտպանություն ցանկացած իրավիճակում:

«ԷՖԵՍ» ԱՓԲԸ-ի բարձրորակ ծառայությունների մասին վկայում են հաճախորդների գոհունակության NPS ցուցանիշները, որոնց ամսական միջին ցուցանիշը գերազանցում է 90%-ը:

ԷՖԵՍ-ի կողմից առաջարկվող հիմնական ապահովագրական պրոդուկտներն են.

- Առողջության ապահովագրություն՝ անհատական և կորպորատիվ ծրագրեր,
- Ավտոապահովագրություն՝ մեքենայի ապահովագրություն, ինչպես նաև տրանսպորտային միջոց վարելու արդյունքում առաջացած պատասխանատվության ապահովագրություն,
- Գույքի ապահովագրություն՝ բնակարանների, կոմերցիոն տարածքների, արտադրական գույքի ապահովագրություն,
- Ճամփորդության ապահովագրություն՝ բժշկական և տրանսպորտային ծախսերի պաշտպանություն արտերկրում, աջակցության տրամադրում:
- Պատասխանատվության և այլ տեսակի ապահովագրություն:

«ԷՖԵՍ» ԱՓԲԸ-ի աշխատանքի առանձնահատկություններն են.

- Ապահովագրության կառուցում անհատի շուրջ. Ընկերության կարգախոսը՝ «Կարևորը Դու ես», արտացոլվում է հաճախորդի սպասարկման ամբողջ շղթայում ՝ պայմանագրի ձևակերպումից մինչև հատուցումների կառավարում:
- Անհատականացված թվային լուծումներ. հավելվածի միջոցով հնարավոր է հեշտ և արագ լրացնել հատուցման դիմումներ, տեսնել անհատի ողջ ապահովագրական պատմությունը, գրանցել ահազանգեր և այլն:

- Արագ և արդյունավետ հատուցումների գործընթաց. ԷՖԵՍ-ում շարունակաբար կրճատվում են հատուցումների տրամադրման ժամկետները:

- GDPR-ին համահունչ տվյալների կառավարում, որն ապահովում է բոլոր հաճախորդների անձնական և ֆինանսական տվյալների ապահովությունը:

- Հաճախորդների սպասարկման որակի շարունակական վերահսկում և բարելավում՝ անընդհատ մասնագիտական զարգացման ծրագրերի և թրեյնինգների միջոցով:

<u>«Բոնուս Ասիստանս» ՍՊԸ</u>

«Բոնուս Ասիստանս» ՍՊԸ-ն տրամադրում է շուրջօրյա բժշկական և ճամփորդական աջակցություն: Ընկերությունն Ազդագիրը ՀՀ ԿԲ գրանցման ներկայացնելու պահի դրությամբ գտնվում է վերակազմավորման փուլում և նախատեսվում է, որ այն կդառնա Խմբի 100% դուստր ընկերություն:

Հիմնական ծառայություններն են.

- Արագ արձագանքում և տրիաժ, բժշկական խորհրդատվություն և դեպքի առաջնային կառավարում:

- Բժշկական էվակուացիա և լոգիստիկա՝ տեղական և միջազգային մակարդակով:

- Վերահսկողություն և դեպքերի կառավարում. ապահովագրական պատահարների փաստաթղթավորում և կարգավորում:

- Ճամփորդական աջակցություն:

«Բոնուս Ասիստանս» ՍՊԸ-ն իր ակտիվ գործունեությունն է սկսել 2025 թվականի հուլիս ամսից և ներկայումս հանդիսանում է գործառնական կամուրջ «ԷՖԵՍ»-ի և «Վարդանանց»-ի միջև՝ ստեղծելով հաճախորդների համար արագ և անխափան ծառայությունների շղթա: Նախատեսվում է, որ մոտ ապագայում «Բոնուս Ասիստանս»-ը կընդլայնի իր գործընկեր ապահովագրական ընկերությունների և բուժհաստատությունների ցանկը:

<u>«Լենդլորդ» ՍՊԸ</u>

«Լենդլորդ» ՍՊԸ-ն հատուկ նշանակության ընկերություն է (Special Purpose Vehicle – SPV), որը ստեղծվել է Խմբի բիզնեսներին անհրաժեշտ ենթակառուցվածքների և անշարժ գույքերի մեջ ներդրման, կառուցապատման նախագծերի իրականացման և ֆիզիկական ենթակառուցվածքների կառավարման նպատակով: Ընկերությունը հանդիսանում է Խմբի ենթակառուցվածքային կապիտալ ներդրումների և անշարժ

գույքի պորտֆելի կառավարման օղակ, որը երկարաժամկետ հեռանկարում բարձրացնում է Խմբի գործառնական անկախությունը և նվազեցնում վարձակալության ծախսերը:

Գործունեության ուղղություններն են․

- Առողջապահական ենթակառուցվածքների զարգացում՝ «Արինտերլև» ՓԲԸ-ի և նրա մասնագիտացված ստորաբաժանումների համար նոր բժշկական կենտրոնների և մասնաճյուղերի նախագծում և կառուցում:
- Գրասենյակային և օժանդակ տարածքների կառավարում՝ վարձակալական մոդելով տարածքների տրամադրում Խմբի այլ ընկերություններին՝ ապահովելով ծախսերի վերահսկում և օպտիմալացում:
- Ներդրումային ծրագրերի իրականացում՝ հողատարածքների ձեռքբերում, նախագծային, շինարարական և ինժեներական նախագծերի կառավարում:

«Լենդլորդ» ՍՊԸ-ն նախատեսում է ք. Երևան, Քըրք-Քըրքորյան (նախկինում՝ Լենինգրադյան) 23 հասցեում կառուցել նոր բազմաֆունկցիոնալ համալիր, որը միաժամանակ կծառայի որպես՝

- «Վարդանանց» ՆԲԿ-ի նոր՝ ամբուլատոր և վիրաբուժական ծառայությունների համար նախատեսված մասնաճյուղ՝ շուրջ 3,600 մ$^2$ տարածքով, հագեցված բարձր տեխնոլոգիական սարքավորումներով,
- Գրասենյակային տարածք, որը կծառայի որպես «ԷՖԵՍ» ԱՓԲԸ-ի գրասենյակ:

<u>«Պրեմիում Քոնսալթանթ» ՍՊԸ</u>

«Պրեմիում Քոնսալթանթ» ՍՊԸ-ն հանդիսանում է Խմբի հաշվապահական ծառայությունների կենտրոնը: Այն ստեղծվել է՝ ապահովելու հաշվապահական գործընթացների միասնական ստանդարտներ, բարձրացնելու ֆինանսական վերահսկողության որակը և նվազեցնելու գործառնական ծախսերը Խմբի բոլոր անդամ ընկերություններում:

Գործունեության հիմնական ուղղություններն են՝ դուստր ընկերությունների հաշվապահական հաշվառման վարման, ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և հարկային պարտավորությունների կառավարման ապահովումը՝ ՀՀ օրենսդրությանը և միջազգային ստանդարտներին (IFRS) համապատասխան, ինչպես նաև աշխատավարձերի և ՄՌԿ հաշվառման կառավարում, միասնական աշխատավարձային համակարգի ներդրում և անձնակազմի ֆինանսական տվյալների կենտրոնացված կառավարում:

Ընկերությունը հանդես է գալիս որպես համախմբված ծառայություն մատուցող կենտրոն (Shared Services Center - SSC)՝ ապահովելով ընդհանուր հաշվապահական պլատֆորմ բոլոր դուստր ընկերությունների համար:

Իր բնականոն գործունեության նպատակով Ընկերությունը և դուստր ընկերությունները ստացել են հետևյալ հիմնական լիցենզիաները/թույլտվությունները.

| Ընկերություն (մասնաճյուղ) | Թույլատվություն/Լիցենզիա | Համար | Ում կողմից | Տրված է | Գործում է մինչև |
|---|---|---|---|---|---|
| «ԷՖԵՍ» ԱՓԲԸ | Ոչ կյանքի ապահովագրության իրականացման լիցենզիա | ԱՊՈ 0012 | ՀՀ ԿԲ | 25 հուլիսի 2023 թ. | անժամկետ |
| «ԷՖԵՍ» ԱՓԲԸ | Ոչ կյանքի վերաապահովագրության իրականացման լիցենզիա | ԱՊՎ 0005 | ՀՀ ԿԲ | 25 հուլիսի 2023 թ. | անժամկետ |
| «Արինտերլև» ՓԲԸ (Վարդանանց) | Ճառագայթային ախտորոշիչ(Շարժական ռենտգենաբանական), Բժշկական ընդհանուր պրակտիկա, Մանկաբուժական բժշկական օգնություն և սպասարկում Արտահիվանդանոցային, Ցերեկային ստացիոնար պայմաններում | Կ-ԲՕ-000009 | ՀՀ Առողջապահության նախարարություն | 01 հուլիսի 2024 թ. | անժամկետ |
| «Արինտերլև» ՓԲԸ (Վարդանանց) | Թերապևտիկ ստոմատոլոգիական, վիրաբուժական ստոմատոլոգիական, օրթոպեդիկ ստոմատոլոգիական, օրթոդոնտիկ ստոմատոլոգիական, ռենտգենաբանական բժշկական օգնություն և սպասարկում արտահիվանդանոցային պայմաններում | Կ-ԲՕ-001813 | ՀՀ Առողջապահության նախարարություն | 15 ապրիլի 2013 թ. | անժամկետ |
| «Արինտերլև» ՓԲԸ (Վարդանանց) | Մանկական ներզատաբանական, անեսթեզիոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում արտահիվանդանոցային պայմաններում | Կ-ԲՕ-002356 | ՀՀ Առողջապահության նախարարություն | 19 դեկտեմբերի 2017 թ. | անժամկետ |
| «Արինտերլև» ՓԲԸ (Վարդանանց) | Ներզատաբանական, նյարդաբանական բժշկական օգնություն և սպասարկում | Կ-ԲՕ-002357 | ՀՀ Առողջապահության նախարարություն | 19 դեկտեմբերի 2017 թ. | անժամկետ |

| Ընկերություն (մասնաճյուղ) | Թույլատվություն/Լիցենզիա | Համար | Ում կողմից | Տրված է | Գործում է մինչև |
|---|---|---|---|---|---|
| | արտահիվանդանոցային պայմաններում | | | | |
| «Արինտերլև» ՓԲԸ (Վարդանանց) | Բժշկական ընդհանուր պրակտիկա, մանկաբուժական, ակնաբանական, քիթ-կոկորդ-ականջաբանական, սրտաբանական, ներզատաբանական, գինեկոլոգիական, նյարդաբանական, աղեստամոքսաբանական, ռևմատոլոգիական, ճառագայթային ախտորոշիչ (ուլտրաձայնային, ռենտգենաբանական), ֆունկցիոնալ ախտորոշիչ, լաբորատոր-ախտորոշիչ (կենսաքիմիական (բիոքիմիական), կլինիկական, իմունաբանական, բջջաբանական, շճաբանական (սերոլոգիական), կոսմետոլոգիական, ընդհանուր վիրաբուժական, մաշկաբանական, վեներաբանական, վարակիչ հիվանդություններ, ուրոլոգիական, ուռուցքաբանական, պրոկտոլոգիական, դիետաբանական (դիետոլոգիական), վնասվածքաբանական, ներզննական (էնդոսկոպիական), անընկալունաբանական, մանկաբարձագինեկոլոգիական ընդհանուր պրակտիկա, վերականգնողական (ռեֆլեքսաթերապևտիկ, մանուալ թերապևտիկ, բուժական մերսում, բալնեոլոգիական, ցեխաբուժություն), մանկական՝ (վիրաբուժական, նյարդաբանական, ուրոլոգիական, քիթ-կոկորդ-ականջաբանական, վնասվածքաբանական) բժշկական օգնություն և սպասարկում | Կ-ԲՕ-002536 | ՀՀ Առողջապահության նախարարություն | 18 ապրիլի 2019 թ. | անժամկետ |

| Ընկերություն (մասնաճյուղ) | Թույլատվություն/Լիցենզիա | Համար | Ում կողմից | Տրված է | Գործում է մինչև |
|---|---|---|---|---|---|
| | արտահիվանդանոցային պայմաններում | | | | |
| «Արինտերլև» ՓԲԸ (Վարդանանց) | Հոգեբուժական բժշկական օգնություն և սպասարկում արտահիվանդանոցային պայմաններում | Կ-ԲՕ-003659 | ՀՀ Առողջապահության նախարարություն | 27 դեկտեմբեր 2023 թ. | անժամկետ |
| «Արինտերլև» ՓԲԸ (Վարդանանց) | Ուռուցքաբանական (քիմիոթերապիա), վերակենդանացման, պալիատիվ, վերարտադրողաբանական (ռեպրոդուկտոլոգիական)՝ ներառյալ թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր պարունակող դեղերի բացթողում և/կամ կիրառում բժշկական օգնություն և սպասարկում արտահիվանդանոցային պայմաններում | Կ-ԲՕ-002789 | ՀՀ Առողջապահության նախարարություն | 06 նոյեմբերի 2020 թ. | անժամկետ |
| «Արինտերլև» ՓԲԸ (Վարդանանց) | Շարժական անընկալունաբանական (իմունականխարգելիչ) բժշկական օգնություն և սպասարկում արտահիվանդանոցային պայմաններում | Կ-ԲՕ-003023 | ՀՀ Առողջապահության նախարարություն | 09 սեպտեմբերի 2021 թ. | անժամկետ |
| «Արինտերլև» ՓԲԸ (Վարդանանց) | Ճառագայթային ախտորոշիչէ համակարգչային տոմոգրաֆիկ բժշկական օգնություն և սպասարկում արտահիվանդանոցային պայմաններում | Կ-ԲՕ-003169 | ՀՀ Առողջապահության նախարարություն | 21 մարտի 2022 թ. | անժամկետ |
| «Արինտերլև» ՓԲԸ (Վարդանանց) | Ֆիզիոթերապևտիկ (էլեկտրաբուժում, լուսաբուժում) բժշկական օգնություն և սպասարկում արտահիվանդանոցային պայմաններում | Կ-ԲՕ-003185 | ՀՀ Առողջապահության նախարարություն | 06 ապրիլի 2022 թ. | անժամկետ |
| «Արինտերլև» ՓԲԸ (Վարդանանց) | Սրտաբանական բժշկական օգնություն և սպասարկում արտահիվանդանոցային պայմաններում | Կ-ԲՕ-003227 | ՀՀ Առողջապահության նախարարություն | 13 հունիսի 2022 թ. | անժամկետ |
| «Արինտերլև» ՓԲԸ (Վարդանանց) | Մաշկաբանական, մանկական սրտաբանական բժշկական օգնություն և սպասարկում | Կ-ԲՕ-003245 | ՀՀ Առողջապահության նախարարություն | 13 հուլիսի 2022 թ. | անժամկետ |

| Ընկերություն (մասնաճյուղ) | Թույլատվություն/Լիցենզիա | Համար | Ում կողմից | Տրված է | Գործում է մինչև |
|---|---|---|---|---|---|
| | արտահիվանդանոցային պայմաններում | | | | |
| «Արինտերլև» ՓԲԸ (Վարդանանց) | Մանկական ակնաբանական, շարժական ակնաբանական, մանկական շարժական ակնաբանական բժշկական օգնություն և սպասարկում արտահիվանդանոցային պայմաններում | Կ-ԲՕ-003247 | ՀՀ Առողջապահության նախարարություն | 13 հուլիսի 2023 թ. | անժամկետ |
| «Արինտերլև» ՓԲԸ (Վարդանանց) | Վերականգնողական (շարժաթերապևտիկ, ռեֆլեքսաթերապևտիկ, մանուալ թերապևտիկ, բուժական մերսում) բժշկական օգնություն և սպասարկում արտահիվանդանոցային պայմաններում | Կ-ԲՕ-003439 | ՀՀ Առողջապահության նախարարություն | 07 մարտի 2023 թ. | անժամկետ |
| «Արինտերլև» ՓԲԸ (Վարդանանց) | Երիկամաբանական, մանկական երիկամաբանական բժշկական օգնություն և սպասարկում արտահիվանդանոցային պայմաններում | Կ-ԲՕ-003547 | ՀՀ Առողջապահության նախարարություն | 30 օգոստոսի 2023 թ. | անժամկետ |
| «Արինտերլև» ՓԲԸ (Վարդանանց) | Դեղատնային գործունեության լիցենզիա | Կ-ԴԳ-001728 | ՀՀ Առողջապահության նախարարություն | 11 ապրիլի 2014 թ. | անժամկետ |
| «Արինտերլև» ՓԲԸ (Վարդանանց) | Գեներացնող ճառագայթային աղբյուրների օգտագործման լիցենզիա | ՃԱՕ-546-2013 | ՀՀ Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտե | 11 ապրիլի 2013 թ. | անժամկետ |
| «Արինտերլև» ՓԲԸ (Քոչար) | Բժշկական ընդհանուր պրակտիկա, ֆունկցիոնալ ախտորոշիչ, լաբորատոր-ախտորոշիչ (նմուշառում) բժշկական օգնություն և սպասարկում արտահիվանդանոցային պայմաններում | Կ-ԲՕ-003128 | ՀՀ Առողջապահության նախարարություն | 21 հունվարի 2022 թ. | անժամկետ |
| «Արինտերլև» ՓԲԸ (Քոչար) | Շարժական ֆունկցիոնալ ախտորոշիչ բժշկական օգնություն և սպասարկում արտահիվանդանոցային պայմաններում | Կ-ԲՕ-003146 | ՀՀ Առողջապահության նախարարություն | 13 հուլիսի 2022 թ. | անժամկետ |

| Ընկերություն (մասնաճյուղ) | Թույլատվություն/Լիցենզիա | Համար | Ում կողմից | Տրված է | Գործում է մինչև |
|---|---|---|---|---|---|
| «Արինտերլև» ՓԲԸ (Քոչար) | Լաբորատոր-ախտորոշիչ (կլինիկական, կենսաքիմիական (բիոքիմիական), բջջաբանական, շճաբանական (սերոլոգիական), իմունաբանական), վերականգնողական (ռեֆլեքսաթերապևտիկ, շարժաթերապևտիկ, մանուալ թերապևտիկ, բուժական մերսում) բժշկական օգնություն և սպասարկում արտահիվանդանոցային պայմաններում | Կ-ԲՕ-003358 | ՀՀ Առողջապահության նախարարություն | 08 դեկտեմբերի 2022 թ. | անժամկետ |
| «Արինտերլև» ՓԲԸ (Քոչար) | Ստոմատոլոգիական ընդհանուր պրակտիկա, մանկաբուժական ընդհանուր պրակտիկա բժշկական օգնություն և սպասարկում արտահիվանդանոցային պայմաններում | Կ-ԲՕ-003673 | ՀՀ Առողջապահության նախարարություն | 31 հունվարի 2024 թ. | անժամկետ |
| «Արինտերլև» ՓԲԸ (Քոչար) | Ճառագայթային ախտորոշիչ՝ ուլտրաձայնային, շարժական ուլտրաձայնային, կլինիկական դեղորայքային բժշկական օգնություն և սպասարկում արտահիվանդանոցային պայմաններում | Կ-ԲՕ-003228 | ՀՀ Առողջապահության նախարարություն | 13 հունիսի 2022 թ. | անժամկետ |
| «Արինտերլև» ՓԲԸ (Քոչար) | Ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում անվտանգության ապահովման տեսակետից կարևոր պաշտոններ զբաղեցնող ֆիզիկական անձանց գործունեության լիցենզիա | ՖԱԼ-379-2021 | ՀՀ Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտե | 27 դեկտեմբերի 2021 թ. | անժամկետ |
| «Արինտերլև» ՓԲԸ (Քոչար) | Ուրոլոգիական, մանկաբուժական, ընդհանուր վիրաբուժական, գինեկոլոգիական, ներզատաբանական, նյարդաբանական, աղեստամոքսաբանական, մաշկաբանական, ռևմատոլոգիական, քիթ-կոկորդ-ականջաբանական, մանկական քիթ-կոկորդ-ականջաբանական, օրթոպեդիական, | Կ-ԲՕ-003646 | ՀՀ Առողջապահության նախարարություն | 27 դեկտեմբեր 2023 թ. | անժամկետ |

| Ընկերություն (մասնաճյուղ) | Թույլատվություն/Լիցենզիա | Համար | Ում կողմից | Տրված է | Գործում է մինչև |
|---|---|---|---|---|---|
| | սրտաբանական, ֆիզիոթերապևտիկ (էլեկտրաբուժում), ճառագայթային ախտորոշիչ (մամոգրաֆիկ, ռենտգենաբանական) բժշկական օգնություն և սպասարկում արտահիվանդանոցային պայմաններում | | | | |
| «Արինտերլև» ՓԲԸ (Քոչար) | Շարժական ֆունկցիոնալ ախտորոշիչ բժշկական օգնություն և սպասարկում արտահիվանդանոցային պայմաններում | Կ-ԲՕ-003246 | ՀՀ Առողջապահության նախարարություն | 13 հուլիսի 2022 թ. | անժամկետ |
| «Արինտերլև» ՓԲԸ (Վանաձոր) | Կլինիկական դեղորայքային, նյարդաբանական, մաշկաբանական, ներզատաբանական, անընկալունաբանական (իմունականխարգելիչ), սրտաբանական, ռևմատոլոգիական, ֆունկցիոնալ ախտորոշիչ, բժշկական ընդհանուր պրակտիկա, լաբորատոր-ախտորոշիչ (նմուշառում) բժշկական օգնություն և սպասարկում արտահիվանդանոցային պայմաններում | Կ-ԲՕ-003472 | ՀՀ Առողջապահության նախարարություն | 18 մայիսի 2023 թ. | անժամկետ |
| «Արինտերլև» ՓԲԸ (Վանաձոր) | Մանկաբուժական ընդհանուր պրակտիկա, ընդհանուր վիրաբուժական բժշկական օգնություն և սպասարկում արտահիվանդանոցային պայմաններում | Կ-ԲՕ-003658 | ՀՀ Առողջապահության նախարարություն | 12 հունվարի 2024 թ. | անժամկետ |
| «Արինտերլև» ՓԲԸ (Վանաձոր) | Մանկաբուժական ընդհանուր պրակտիկա, ընդհանուր վիրաբուժական, քիթ-կոկորդ-ականջաբանական, մանկական քիթ-կոկորդ-ականջաբանական բժշկական օգնություն և սպասարկում արտահիվանդանոցային պայմաններում | Կ-ԲՕ-003502 | ՀՀ Առողջապահության նախարարություն | 23 հունիսի 2023 թ. | անժամկետ |

| Ընկերություն (մասնաճյուղ) | Թույլատվություն/Լիցենզիա | Համար | Ում կողմից | Տրված է | Գործում է մինչև |
|---|---|---|---|---|---|
| «Արինտերլև» ՓԲԸ (Վանաձոր) | Ընտանեկան բժշկություն բժշկական օգնություն և սպասարկում արտահիվանդանոցային պայմաններում | Կ-ԲՕ-003674 | ՀՀ Առողջապահության նախարարություն | 31 հունվարի 2024 թ. | անժամկետ |
| «Արինտերլև» ՓԲԸ (Վանաձոր) | Գինեկոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում արտահիվանդանոցային պայմաններում | Կ-ԲՕ-003312 | ՀՀ Առողջապահության նախարարություն | 04 հոկտեմբերի 2022 թ. | անժամկետ |
| «Արինտերլև» ՓԲԸ (Վանաձոր) | Արտահիվանդանոցային ՝ Քիթ-կոկորդ-ականջաբանական, Մանկական քիթ-կոկորդականջաբանական, Մանկական նյարդաբանական, Ուրոլոգիական, Ֆիզիոթերապևտիկ (Էլեկտրաբուժում, Լուսաբուժում) բժշկական օգնություն և սպասարկում արտահիվանդանոցային պայմաններում | Կ-ԲՕ-000062 | ՀՀ Առողջապահության նախարարություն | 12 օգոստոս 2024 թ. | 12 օգոստոս 2029 թ. |
| «Արինտերլև» ՓԲԸ (Սևան) | Ճառագայթային ախտորոշիչ՝ համակարգչային տոմոգրաֆիկ բժշկական օգնություն և սպասարկում արտահիվանդանոցային պայմաններում | Կ-ԲՕ-002521 | ՀՀ Առողջապահության նախարարություն | 07 մարտի 2019 թ. | անժամկետ |
| «Արինտերլև» ՓԲԸ (Սևան) | Գեներացնող ճառագայթային աղբյուրների օգտագործման լիցենզիա | ՃԱՕ-628-2019 | ՀՀ Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտե | 24 հունիսի 2019 թ. | անժամկետ |
| «Արինտերլև» ՓԲԸ (Դեմիրճյան) | Բժշկական ընդհանուր պրակտիկա, ֆունկցիոնալ ախտորոշիչ, լաբորատոր-ախտորոշիչ (գենետիկական, վիրուսաբանական, նմուշառում) բժշկական օգնություն և սպասարկում արտահիվանդանոցային պայմաններում | Կ-ԲՕ-002932 | ՀՀ Առողջապահության նախարարություն | 23 հունիսի 2021 թ. | անժամկետ |
| «Արինտերլև» ՓԲԸ (Դեմիրճյան) | Լաբորատոր-ախտորոշիչ՝ շարժական նմուշառման բժշկական օգնություն և սպասարկում արտահիվանդանոցային պայմաններում | Կ-ԲՕ-003064 | ՀՀ Առողջապահության նախարարություն | 26 հոկտեմբերի 2021 թ. | անժամկետ |

| Ընկերություն (մասնաճյուղ) | Թույլատվություն/Լիցենզիա | Համար | Ում կողմից | Տրված է | Գործում է մինչև |
|---|---|---|---|---|---|
| «Արինտերլև» ՓԲԸ (Նանսեն) | Հիվանդանոցային՝ ինտերվենցիոն սրտաբանական բժշկական օգնություն և սպասարկում հիվանդանոցային պայմաններում | Կ-ԲՕ-000168 | ՀՀ Առողջապահության նախարարություն | 15 նոյեմբերի 2024 թ. | 15 նոյեմբեր 2029 թ. |
| «Արինտերլև» ՓԲԸ (Նանսեն) | Հիվանդանոցային ՝ Ներզննական վիրաբուժական, Ընդհանուր վիրաբուժական, Քիթ-կոկորդ-ականջաբանական, Ուրոլոգիական, Անեսթեզիոլոգիական, Վերակենդանացման, Համաճարակաբանական, Կլինիկական դեղորայքային (ներառյալ թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր պարունակող դեղերի բացթողում և (կամ) կիրառում) բժշկական օգնություն և սպասարկում հիվանդանոցային պայմաններում | Կ-ԲՕ-000126 | ՀՀ Առողջապահության նախարարություն | 07 հոկտեմբեր 2024 թ. | 07 հոկտեմբեր 2029 թ. |
| «Արինտերլև» ՓԲԸ (Նանսեն) | Արտահիվանդանոցային՝ Նյարդաբանական, Մանկական նյարդաբանական, Քիթ-կոկորդ-ականջաբանական, Մանկական քիթ-կոկորդականջաբանական, Սրտաբանական, Մանկական սրտաբանական, Ներզատաբանական, Մանկական ներզատաբանական, Ակնաբանական, Մանկական ակնաբանական, Մաշկաբանական, Ալերգոլոգիական, Ընդհանուր վիրաբուժական, Մանկական վիրաբուժական, Ուռուցքաբանական, Անընկալունաբանական (իմունականխարգելիչ), Գինեկոլոգիական, Ուրոլոգիական, Աղեստամոքսաբանական, Վնասվածքաբանական, Վեներաբանական, Հոգեբուժական, Ռևմատոլոգիական, Թմրաբանական, Վարակիչ հիվանդությունների, Բժշկական ընդհանուր պրակտիկա, Մանկաբուժական ընդհանուր | Կ-ԲՕ-000047 | ՀՀ Առողջապահության նախարարություն | 25 հուլիս 2024 թ. | 25 հուլիս 2029 թ. |

| Ընկերություն (մասնաճյուղ) | Թույլատվություն/Լիցենզիա | Համար | Ում կողմից | Տրված է | Գործում է մինչև |
|---|---|---|---|---|---|
| | պրակտիկա, Ճառագայթային ախտորոշիչ (Ռենտգենաբանական, Ուլտրաձայնային), Լաբորատոր-ախտորոշիչ (Կլինիկական), Համաճարակաբանական, Կլինիկական դեղորայքային բժշկական օգնություն և սպասարկում արտահիվանդանոցային պայմաններում | | | | |
| «Արինտերլև» ՓԲԸ (Նանսեն) | նմուշառում բժշկական օգնություն և սպասարկում արտահիվանդանոցային պայմաններում | Կ-ԲՕ-002932 | ՀՀ Առողջապահության նախարարություն | 23 հունիսի 2021 թ. | անժամկետ |

### 3.4.2 Հիմնական շուկաները

«Ինթելլիջենթ Մենեջմենթ» ՍՊԸ-ն գործում է ապահովագրության, առողջապահության և հարակից ոլորտներում, այդ թվում՝ աջակցության ծառայությունների շուկայում: Ընկերության հիմնական շուկաների և վաճառքի ուղղությունների նկարագրությունը բերված են ստորև:

<u>Առողջապահական շուկա – «Արինտերլև» ՓԲԸ</u>

ՀՀ առողջապահական շուկան ցուցադրում է կայուն աճ՝ ինչպես առողջապահությանն ուղղված համախառն ծախսերի մակարդակով, այնպես էլ նոր ծառայությունների ներդրմամբ: Ըստ Համաշխարհային Բանկի տվյալների, ՀՀ-ում առողջապահական ծախսերը կազմում են ՀՆԱ-ի 10%-ը, իսկ այդ ծախսերի 80%-ը կազմում են սեփական միջոցներից (out-of-pocket) կատարվող վճարումները[1]:

Ընկերության համախմբված եկամուտը առողջապահական շուկայում՝ «Վարդանանց» ՆԲԿ-ի հասույթը, ըստ վճարման աղբյուրի ձևավորվում է երկու հիմնական խմբից՝ պետական պատվեր (պետպատվեր) և վճարովի:

- Պետպատվերն իրենից ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կողմից իր բնակիչներին տրամադրվող անվճար բժշկական ծառայությունների մատուցումը: «Վարդանանց» ՆԲԿ-ն պետության կողմից ստանում է յուրաքանչյուր կցագրված անձի (պետպատվերի շահառուի) գծով նախապես հաստատված վճար և ընթացիկ տարում, նախապես հաստատված ցանկով, մատուցում է անհրաժեշտ ծառայությունները բուժառուին: Պետության կողմից փոխհատուցումը տրամադրվում է ինչպես կցագրված անձանց հաշվով (per

[1] https://data.worldbank.org/indicator/SH.XPD.OOPC.CH.ZS?locations=AM

capita), այնպես էլ ըստ փաստացի մատուցված ծառայությունների քանակի և դրանց փոխհատուցման արժեքների: Բուժման ընթացքում երբեմն կարիք է առաջանում ստանալու այնպիսի ծառայություններ, որոնք ընդգրկված չեն պետական պատվերի ծածկույթում. այդ ծառայությունները բուժառուները, ըստ ցանկության, անցնում են վճարովի հիմունքներով:

- Վճարովի ծառայությունները հնարավոր է բաժանել երեք խմբի՝ ապահովագրություն, գործատուի միջոցներ և սեփական միջոցներ:
  - Ապահովագրությամբ սպասարկվելու դեպքում բուժառուն փաստացի վճարումներ չի կատարում, այլ անցնում է անհրաժեշտ միջամտություններն իր ապահովագրողի միջոցների՝ ապահովագրական հատուցումների հաշվին: «Վարդանանց» ՆԲԿ-ն ունի գործող համագործակցության պայմանագրեր ՀՀ-ում գործող գրեթե բոլոր ապահովագրական ընկերությունների հետ, որի արդյունքում այդ ապահովագրական ընկերությունների հաճախորդները, անկախ ապահովագրական ընկերությունից, կարող են սպասարկվել Վարդանանցում:
  - «Վարդանանց» ՆԲԿ-ն ունի պայմանագրեր որոշ իրավաբանական անձանց հետ, որոնցով տրամադրում է անվճար ծառայություններ վերջիններիս աշխատակիցներին և գանձում է համապատասխան վճարները ուղղակի գործատուից:
  - Ստացված բժշկական ծառայությունների համար անձը կարող է վճարել նաև սեփական միջոցների հաշվին՝ առանց երրորդ կողմի ներգրավվածության: Սեփական միջոցների հաշվին (out-of-pocket) հասույթը կազմում է «Վարդանանց» ՆԲԿ հասույթի մոտավորապես 45%-ը:

Վերջին տարիների զարգացման միտումները ցույց են տալիս, որ տարեցտարի վճարովի ծառայությունների մեջ փոքրանում է սեփական միջոցների հաշվին ստացվող ծառայությունների տեսակարար կշիռը և ավելանում են ապահովագրությունը և գործատուի ֆինանսավորմամբ ծառայությունները: Ըստ ՀՀ շուկայում գործող ապահովագրական ընկերությունների ֆինանսական հաշվետվությունների[2]՝ վերջին երեք տարում, առողջության ապահովագրության հատուցումները տարեցտարի աճում են առնվազն 23%-ով, ինչը արտացոլում է այս սեգմենտի արագ աճը: Ֆինանսավորման աղբյուրի փոփոխությունը՝ սեփական միջոցներից ապահովագրություն, դրական է ազդում նաև բժշկական ծառայությունների պահանջարկի վրա, քանի որ գների հանդեպ ավելի զգոն հաճախորդների համար բժշկական ծառայությունները ավելի հասանելի են դառնում:

[2] https://www.efes.am/annual-year-book
https://imnairi.am/company/about/reports#annual_financial_reports
https://www.liga.am/hy/reports/5bdc6375-6914-469e-a034-66beefeded2c/Quarterly%20reports/

ՀՀ-ում համապարփակ առողջության ապահովագրության ներդրումը նույնպես դրական ազդակ կտրամադրի շուկայի զարգացմանը:

«Վարդանանց» ՆԲԿ-ն Հայաստանում բժշկական ծառայությունների ոլորտում առաջատարներից մեկն է՝ առանձնանալով բարձր որակի բժշկական ծառայություններով և կլինիկական գերազանցությամբ: Ընկերությունը հայտնի է իր նորարարական մոտեցումներով, որոնք ընդգրկում են ինչպես բուժման մեթոդների կատարելագործումը, այնպես էլ առաջադեմ բժշկական սարքավորումների օգտագործումը: Վարդանանցը եզակի բժշկական կենտրոններից է, որ միաժամանակ կատարում է, թե՛ մասնավոր ամբուլատոր կլինիկայի, թե՛ պոլիկլինիկայի (պետպատվերով կցագրում) ֆունկցիաներ: Այլ բժշկական կենտրոնները սովորաբար ունենում են նեղ մասնագիտացում կամ առավել կենտրոնացած են հիվանդանոցային (ստացիոնար) ծառայությունների ուղղությամբ, ինչի արդյունքում մրցակցում են «Վարդանանց» ՆԲԿ-ի մեկ կամ մի խումբ ծառայությունների հետ, այլ ոչ ամբողջ «Վարդանանց» ՆԲԿ-ի հետ:

«Վարդանանց» ՆԲԿ-ի հիմնական մրցակիցներն են.

- «Ուիգմոր Քլինիք» բժշկական կենտրոն[3]. բազմապրոֆիլ բժշկական կենտրոն է, մատուցում է ամբուլատոր և հիվանդանոցային բժշկական օգնություն: «Վարդանանց» ՆԲԿ-ի հետ որպես մրցակից կենտրոն դիտարկվում է հատկապես մանկաբուժական ծառայության մատուցման շրջանակներում:
- «Մեդլայն» բժշկական կենտրոն[4]. «Մեդլայն» բժշկական կենտրոնը մատուցում է ամբուլատոր և հիվանդանոցային բժշկական օգնություն, ինչպես նաև աշխատում է որպես տեղամասային պոլիկլինիկա: Ըստ կենտրոնի կողմից հրապարակված տվյալների, ներկայումս այն 8,000 բնակչի համար ծառայում է որպես պոլիկլինիկա և տարեկան կատարում է մոտ 3,000 վիրահատություն:
- «Դավիդյանց պոլիկլինիկաներ և լաբորատորիաներ»[5]. Դավիդյանց պոլիկլինիկաները առաջարկում են ամբուլատոր կլինիկական ծառայություններ՝ առանձնանալով բարձր որակի լաբորատոր ծառայություններով, ինչը հանդիսանում է նրանց հիմնական մրցակցային առավելություններից մեկը:
- «Նաիրի» բժշկական կենտրոն[6]. «Նաիրի» բժշկական կենտրոնը խոշոր բուժհաստատություն է, որն իր մեջ ներառում է ամբուլատոր և հիվանդանոցային ծառայությունների լայն շրջանակ: Ամբուլատոր ծառայությունների ոլորտում «Նաիրի» բժշկական կենտրոնը կարող է համարվել «Վարդանանց» ՆԲԿ-ի հիմնական մրցակիցներից մեկը՝ շնորհիվ իր թողունակության և ավագ բժշկական անձնակազմի որակավորման:

---

[3] https://wigmore.am
[4] https://healthcare.medline.am/en/
[5] https://davlab.am/hy
[6] https://nairimed.com/hy

Շուկայի մրցակցության ակտիվության պայմաններում էլ «Վարդանանց» ՆԲԿ-ն շարունակում է պահպանել և լավացնել իր դիրքերը առողջապահական շուկայում՝ շնորհիվ իր նորարարական բուժման մեթոդների, տեխնոլոգիապես առաջադեմ սարքավորումների և հաճախորդների անհատական սպասարկման: Վարդանանցը մշտապես ներդնում է զգալի միջոցներ Ընկերության մարդկային ռեսուրսի, բուժական և թվային տեխնոլոգիաների զարգացման, ինչպես նաև՝ «Վարդանանցի Ձեռագիր» նախագծի ներքո նոր ծառայությունների ներդրման մեջ: Այս նախագիծը ուղղված է Վարդանանցի բուժման ունիֆիկացված, ունիկալ և ճանաչելի ոճի ստեղծմանը, որի հիմքում կլինեն միջազգային ապացուցողական բժշկության լավագույն մոտեցումները, մուլտիդիսցիպլինար կառուցվածքը և ինտեգրատիվ բժշկության առավել արդյունավետ տարրերի համադրությունը:

Վարդանանցն իր լայնածավալ մասնաճյուղային ցանցի շնորհիվ կարողանում է հասանելի դարձնել որակյալ բժշկական ծառայությունները ինչպես մայրաքաղաքում, այնպես էլ մարզերում՝ դրանով իսկ ընդլայնելով իր հաճախորդների բազան և ամրապնդելով իր դիրքերը՝ որպես ոլորտի առաջատար:

**<u>Ապահովագրական շուկա – «ԷՖԵՍ» ԱՓԲԸ</u>**

«ԷՖԵՍ» ԱՓԲԸ-ն ներկայումս գործում է Հայաստանի ոչ կյանքի ապահովագրության շուկայում և միայն այդ շուկայի կամավոր հատվածում: «ԷՖԵՍ»-ը իր ստեղծման պահից ցույց է տալիս հասույթի կայուն աճ՝ պայմանավորված հաճախորդների բազայի ընդլայնմամբ և դիվերսիֆիկացմամբ, նոր ապահովագրական պրոդուկտների ներդրմամբ և թվային լուծումների լայնամասշտաբ կիրառմամբ:

Հայաստանի ապահովագրական շուկայի ընդհանուր ծավալը, ըստ հավաքագրված ապահովագրական վճարների, 2025 թվականին կազմել է շուրջ 82.9 մլրդ ՀՀ դրամ՝ 2024 թվականի համեմատ աճելով 17.7%-ով: Շուկայի մոտ 16.1%–ը բաժինն ընկնում է «ԷՖԵՍ» ԱՓԲԸ-ին, իսկ կամավոր ապահովագրության հատվածում «ԷՖԵՍ»-ի մասնաբաժինը կազմում է շուրջ 30.4%:

Կամավոր ապահովագրության շուկան 2025 թվականին կազմել է 43.8 միլիարդ դրամ, որի 3 հիմնական ենթաշուկաները՝ գույքի (8.4 միլիարդ), առողջության (19.2 միլիարդ) և ԿԱՍԿՈ (7.1 միլիարդ), կազմում են ապահովագրական շուկայի 79%-ը: Նշված բոլոր 3 շուկաներում «ԷՖԵՍ» ԱՓԲԸ-ն շուկայի առաջատար է[7]:

[7] https://www.efes.am/annual-year-book
https://imnairi.am/company/about/reports#annual_financial_reports
https://www.liga.am/hy/reports/5bdc6375-6914-469e-a034-66beefeded2c/Quarterly%20reports/
https://ingoarmenia.am/reports/annual
https://regoinsurance.am/տարեկան-ֆինանսական-հաշվետվություններ/
https://silinsurance.am/financial-reports
https://armeniainsurance.am/general/reports?sft=9ecf4055-f57b-4219-8fa4-3892db0449a3&lang=hy

«ԷՖԵՍ» ԱՓԲԸ-ն պրոֆեսիոնալ ֆինանսական պլանավորման ու ռիսկերի արդյունավետ կառավարման նպատակով ինտենսիվ օգտագործում է միջազգային վերաապահովագրական գործընկերների իր լայն և վստահելի ցանցը, որը հնարավորություն է տալիս ապահովագրական ռիսկերը լրիվ կամ մասնակի փոխանցել միջազգային հեղինակավոր ընկերություններին: Ընկերությունը ձևավորել է ամուր և բացառիկ գործընկերային հարաբերություններ ոլորտի առաջատարների՝ Generali, Allianz, SCOR և այլ խոշոր խաղացողների հետ, վերջերս ներառելով նաև Swiss Re վերաապահովագրական ընկերության հետ նոր համագործակցությունը: ԷՖԵՍ-ը ունի նաև վերաապահովագրական բրոքերների լայն միջազգային ցանց, որն ընկերության հուսալիության և հաճախորդակենտրոն լուծումների կարևոր բաղադրիչներից մեկն է: Ընկերության միջազգային գործընկերային ցանցն ընդգրկում է ավելի քան 40 երկիր 4 մայրցամաքներում, ինչը հնարավորություն է տալիս աշխատել տեղական փորձագետների հետ յուրաքանչյուր տարածաշրջանում:

«ԷՖԵՍ» ԱՓԲԸ-ն առանձնանում է իր թվային զարգացման (digital-first) մոդելով, հատուցումների կառավարման արդյունավետ համակարգով և հատուցումների տրամադրման գերարագ ցիկլով (որոշ հատուցումներ տրամադրվում են ժամերի ընթացքում), ինչպես նաև հաճախորդակենտրոն ռազմավարությամբ, որը նպաստել է բրենդի ճանաչելիության բարձրացմանը:

Շուկայում մրցակցությունը ձևավորվում է ինչպես տեղական խաղացողների (թվով 7 ապահովագրական ընկերություն), այնպես էլ նոր «Insuretech» լուծումներ ներկայացնող կազմակերպությունների կողմից: «ԷՖԵՍ» ԱՓԲԸ-ի հիմնական մրցակիցներն են.

- «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ն[8] առանձնանում է ճանաչված բրենդով՝ հատկապես կորպորատիվ ապահովագրության շուկայում: «Նաիրի»-ն խոշոր ապահովագրական ընկերություն է (2025 թվականին 1-ին տեղում էր հավաքագրված ապահովագրավճարների մեծությամբ), տրամադրում է ոչ կյանքի ապահովագրության պրոդուկտների լայն սպեկտր, ունի գործընկեր բժշկական հաստատությունների լայն ցանց, և ակտիվ մրցակցում է առողջապահական ապահովագրության շուկայում:
- «Լիգա Ինշուրանս» ԱՓԲԸ-ն[9] վերջին տարիներին ակտիվ աճի ռազմավարություն է վարում՝ շեշտադրելով զանգվածային ուղղությունները (ԱՊՊԱ, ԿԱՍԿՈ, առողջություն) և լայն հասանելիությունը (24/7/365 զանգերի կենտրոն, մոբայլ գործիքներ): Ընկերությունը ապահովագրական շուկայի խոշորագույն խաղացողներից մեկն է (2025 թվականին 4-րդ տեղում էր հավաքագրված ապահովագրավճարների մեծությամբ):

---

[8] https://imnairi.am
[9] https://www.liga.am/hy/

ԷՖԵՍ-ը շարունակում է զարգացնել իր մոդելը, որի հիմնական տարրերն են.

- Խմբի առողջապահական ենթակառուցվածքներին ինտեգրումը («Վարդանանց» բժշկական կենտրոնի միջոցով): Այս սիներգիան ապահովում է եզակի մրցակցային առավելություն՝ միավորելով կանխարգելման, բժշկական սպասարկման և ֆինանսական պաշտպանության ամբողջական շղթան մեկ էկոհամակարգում:
- Սպառողական B2C շուկայում նոր պրոդուկտների ներդրումը և նոր ապահովագրական առաջարկները:
- Թվային ապահովագրական լուծումների շնորհիվ նոր շուկաների ստեղծումը:

Դուստր ընկերությունների այլ շուկաներ («Բոնուս Ասիստանս» ՍՊԸ, «Լենդլորդ» ՍՊԸ, «Պրեմիում Քոնսալթանթ» ՍՊԸ)

Ազդագիրը ՀՀ ԿԲ գրանցման ներկայացնելու պահի դրությամբ «Բոնուս Ասիստանս» ՍՊԸ, «Լենդլորդ» ՍՊԸ և «Պրեմիում Քոնսալթանթ» ՍՊԸ ընկերությունները դեռևս հիմնականում իրականացնում են ներխմբային գործունեություն, այսինքն՝ իրենց ծառայությունները տրամադրում են բացառապես Խմբի մյուս ընկերություններին:

- «Բոնուս Ասիստանս» ՍՊԸ-ն տրամադրում է բժշկական և ճանապարհորդական աջակցություն՝ «ԷՖԵՍ» ԱՓԲԸ-ի ապահովագրական ծրագրերի շրջանակում և «Արինտերլև» ՓԲԸ-ի բժշկական ծառայությունների բազայի վրա: Ընկերության շուկան աստիճանաբար կձևավորվի նաև այլ ապահովագրական ընկերությունների և բժշկական կենտրոնների հաճախորդների բազայի հիման վրա՝ ստեղծելով և կայացնելով «ասիստանս»-ը որպես առանձին շուկա Հայաստանում:
- «Լենդլորդ» ՍՊԸ-ն զբաղվում է Խմբի բժշկական և ապահովագրական ենթակառուցվածքների նախագծմամբ, շինարարությամբ և կառավարմամբ: Մոտակա ամիսներին ընկերության հիմնական գործունեությունը կենտրոնացած կլինի կառուցապատման ծառայությունների ոլորտում:
- «Պրեմիում Քոնսալթանթ» ՍՊԸ-ն հանդիսանում է ներխմբային ֆինանսական և հաշվապահական ծառայությունների կենտրոն՝ ապահովելով ամբողջ Խմբի կառավարման և հաշվետվողականության համակարգի անխափան աշխատանքը:

## 3.4.4 Ոլորտի Օրենսդրական կարգավորում

### 3.4.4.1 ՀՀ օրենքներ

Ստորև ներկայացված են ՀՀ այն հիմնական օրենսդրական ակտերը, որոնք անմիջապես կարգավորում են Ընկերության գործունեության ոլորտները. հարկ է նշել,

որ հարկային և քաղաքացիական իրավունքի այլ տարրերը կարգավորվող օրենքներ կարող են երբեմն նույնպես կիրառվել:

Ապահովագրական գործունեություն

- «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենք
- ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք
- «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք
- «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենք
- Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտեր, եթե օրենքը թույլ է տալիս բանկին սահմանել լրացուցիչ պահանջներ ապահովագրական, վերաապահովագրական կամ միջնորդական գործունեության համար:

Առողջապահական գործունեություն

- «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք
- «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենք
- «Դեղերի մասին» ՀՀ օրենք
- «Մարդու արյան և դրա բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության մասին» ՀՀ օրենք
- «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտարողական իրավունքների մասին» ՀՀ օրենք
- «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» ՀՀ օրենք
- «Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» ՀՀ օրենք

## 3.5 Թողարկողի կառուցվածքը

### 3.5.1 Խմբի կառուցվածքը




Ընկերության դուստր ընկերություններն են.

| Անվանումը | ՀՎՀՀ | Գործունեության ոլորտ | Մասնակցության չափ | Նշումներ |
|---|---|---|---|---|
| «Արինտերլև» ՓԲԸ | 02569999 | Առողջապահություն | 61.9% | |
| «ԷՖԵՍ» ԱՓԲԸ | 08261284 | Ապահովագրություն | 100% | |
| «Լենդլորդ» ՍՊԸ | 01337464 | Անշարժ գույքի կառավարում | 100% | |
| «Պրեմիում Քոնսալթանթ» ՍՊԸ | 02883778 | Հաշվապահական ծառայություններ | 50% | |
| «Բոնուս Ասիստանս» ՍՊԸ | 08256045 | Աջակցության և ասիստանս ծառայություններ | 100% (անուղղակի) | Սպասվող, վերակազմավորման փուլում |

## 3.6 Թողարկողի հիմնական միջոցները

Թողարկողի՝ ներառյալ Խմբի դուստր ընկերությունների հիմնական միջոցների հաշվեկշռային մնացորդը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված է ստորև աղյուսակում.

| Հիմնական միջոցներ (31.12.2025թ. դրությամբ) | Հաշվեկշռային արժեք (հազար դրամ) |
|---|---|
| Բժշկական սարքավորումներ և գործիքներ | 1,651,841 |
| Շենքեր, շինություններ | 1,282,666 |
| Վարձակալված հիմնական միջոցների վրա կապիտալ ներդրումներ | 1,051,519 |
| Այլ (այդ թվում՝ կահույք և հարմարանքներ, համակարգիչներ և այլ սարքավորումներ, փոխադրամիջոցներ, հող և այլն) | 877,445 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | **4,863,471** |

Բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների՝ յուրաքանչյուր վարձակալություն արտացոլվել է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն: Ընկերությունը դասակարգում է իր օգտագործման իրավունքի ձևով ակտիվները սեփական հիմնական միջոցների դասակարգմանը համահունչ, իսկ վարձակալության գծով պարտավորությունը ներկայացնում է այլ պարտավորություններ հոդվածում:

Թողարկողի կողմից շահագործվող անշարժ գույքը, որը չի պատկանում Թողարկողին, օգտագործվում է անժամկետ կամ երկարաժամկետ վարձակալության պայմանագրերի հիման վրա: Այդպիսի գույքի վրա կատարված վերանորոգման ծախսերը կապիտալացվում են:

Մոտակա ամիսներին հիմնական միջոցների սպասվող էական փոփոխություններից է «Լենդլորդ» ՍՊԸ կողմից իրականացվող կառուցապատման ծրագրի արդյունքում Խմբի հաշվեկշռում շենքերի և շինությունների ավելացումը շուրջ 2.5 (երկուս ու կես) միլիարդ դրամի չափով:

Ներկա պահին, Թողարկողը չի նախատեսում այնպիսի փոփոխություններ, որոնք կարող են սահմանափակել հիմնական միջոցների օգտագործումը:

## 3.7 Զարգացման վերջին միտումները

Ընկերության հասույթը աճում է արագ տեմպերով՝ 4.3 միլիարդ դրամից (2023 թվական) հասնելով 16.8 միլիարդ դրամի (2025 թվական): Ընկերության հասույթը հիմնականում բաղկացած է ապահովագրական գործունեությունից ստացված հասույթից (12.6 միլիարդ դրամ կամ 75%) և բժշկական գործունեությունից ստացված հասույթից (4.1 միլիարդ դրամ կամ 25%). Նշված ցուցանիշները համապատասխանում են Ընկերության համախմբված հաշվետվությունների կազմման սկզբունքներին և զտված են ներխմբային գործառնություններից: Թողարկողի ղեկավարությունը

ակնկալում է, որ մոտակա տարիների ընթացքում, հասույթի աճին զուգահեռ, կավելանա բժշկական գործունեությունից հասույթի տեսակարար կշիռը՝ հասնելով Ընկերության հասույթի 33%-ին 2028 թվականին:

2025 թվականի սկզբից և Ազդագիրը ՀՀ ԿԲ գրանցման ներկայացնելու պահի դրությամբ տեղի ունեցած հիմնական զարգացումներն են.

- Ընկերության հասույթը 2025 թվականի հունվար-հունիս ամիսներին կազմել է 8.1 միլիարդ դրամ՝ գերազանցելով 2024 թվականի նույն ցուցանիշը 37%-ով:
- Ընկերությունը մեկնարկել է կորպորատիվ և իրավական կառուցվածքի օպտիմալացման ծրագիրը, որը ենթադրում է որոշ դուստր ընկերությունների վերակազմակերպում և կորպորատիվ կառավարման մարմինների բարելավում:
- Ընկերության կապիտալի կառուցվածքի օպտիմալացման արդյունքում 2025 թվականին դուստր ընկերություն «Արինտերլև» ՓԲԸ-ն թողարկել է դրամային պարտատոմսեր և դրանց տեղաբաշխումից ներգրավված դրամական միջոցների մի մասն ուղղել է արտարժութային վարկային պարտավորությունների վերաֆինանսավորմանը:
- Ընկերությունը մեկնարկել է ռազմավարական զարգացման մեծ նախագիծ, որի արդյունքում նախատեսվում է կառուցել նոր բժշկական կենտրոն, և վերաֆինանսավորել վարկային պարտավորութւունների մի մասը: Այդ ծրագրի ֆինանսավորման աղբյուր է հանդիսանում սույն Ծրագրային Ազդագրով նախատեսված Պարտատեմսերի տեղաբաշխումը:

2026 թվականի սկզբից և Ազդագրի լրացումը ՀՀ ԿԲ գրանցման ներկայացնելու պահի դրությամբ տեղի ունեցած հիմնական զարգացումներն են.

- Ընկերության հասույթը 2025 թվականին կազմել է 16.8 միլիարդ դրամ՝ գերազանցելով 2024 թվականի նույն ցուցանիշը 24%-ով:
- Ընկերությունը 2025 թվականի դեկտեմբերին թողարկեց և հաջողությամբ տեղաբաշխեց 1 մլրդ ՀՀ դրամ և 2.5 մլն ԱՄՆ դոլար ծավալով պարտատոմսեր, որոնք 2026 թվականի փետրվարի 13-ից ցուցակված են Բորսայում:
- 2026 թվականի հունվարի 1-ից ՀՀ կառավարության կողմից մեկնարկել է առողջության համընդհանուր ապահովագրության նախագծի փուլային իրականացումը, որը դրական է ազդել Խմբի գործառնական միջավայրի և պահանջարկի կառուցվածքի վրա: Ղեկավարության գնահատմամբ՝ տվյալ նախաձեռնությունը միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում նպաստելու է Խմբի առողջապահական և ապահովագրական ուղղությունների հետագա զարգացմանը՝ բարձրացնելով որակյալ բժշկական ծառայությունների պահանջարկը: 2026 թվականի առաջին եռամսյակի արդյունքներով «Արինտերլև» ՓԲԸ-ի (Վարդանանց) հասույթը կազմել է 1.7 միլիարդ ՀՀ դրամ՝ աճելով 36%-ով 2025 թվականի առաջին եռամսյակի համեմատ, մինչդեռ «ԷՖԵՍ» ԱՓԲԸ-ի հասույթը կազմել է 2.9 միլիարդ ՀՀ

դրամ[10]՝ նվազելով 7%-ով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշի համեմատ՝ առողջության համընդհանուր ապահովագրության գործոնից անկախ պատճառներով: Ղեկավարությունը գնահատում է, որ նշված ծրագրի ազդեցությունը Խմբի ընկերությունների վրա կարող է դրսևորվել տարբեր տեմպերով՝ կախված շուկայի ադապտացիայից, առաջարկների կառուցվածքից և պահանջարկի վերաբաշխումից:

<u>Ընկերության դուստր ընկերությունների զարգացման հիմնական միտումներն են.</u>

«Արինտերլև» ՓԲԸ-ն վերջին 2 տարիների ընթացքում գտնվում է ակտիվ աճի փուլում՝ պայմանավորված թե՛ էքստենսիվ գործոններով (նոր մասնաճյուղեր, նոր բժշկական տարածքներ) և թե՛ ինտենսիվ կամ որակական բնույթի (նոր ծառայություններ, նոր բժշկական փաթեթներ, 1 հաճախորդի միջին չեկի աճ):
Վարդանանցն արդեն հիմնել է երկու նոր խոշոր մասնաճյուղ՝ ի հավելում գործող 2 կլինիկաների՝ Վարդանանց (հիմնական) և Վանաձոր: Այդ մասնաճյուղերը ամբողջությամբ սկսել են գործել 2024 թ. 4-րդ եռամսյակից:

- Նոր մասնաճյուղերից Քոչարը մատուցում է ամբուլատոր ծառայություններ, ներառյալ «Վարդանանց» ՆԲԿ-ի համար կարևոր ռազմավարական ուղղություն՝ ապահովագրական ընկերությունների կողմից տրամադրվող տարեկան կանխարգելիչ բուժզննումները, ինչպես նաև ռադիոլոգիայի բաժանմունքում ունի մամոգրաֆիայի ծառայություն, որը միակն է իր ցանցում:
- Մյուս նոր մասնաճյուղը՝ Նանսենը, սկսել է հաճախորդներին ընդունել 2024 թ.-ի 2-րդ կեսին և դեռ օգտագործում է իր հզորության համեմատաբար փոքր մասը: Մասնաճյուղը ամբուլատոր ծառայություններին կից նաև մատուցում է ներհիվանդանոցային՝ ստացիոնար ծառայություններ, որն այս դասի դեռևս միակ լիցենզավորված կլինիկան է «Վարդանանց» ՆԲԿ-ի ցանցում: 2024 թվականի ընթացքում Նանսեն մասնաճյուղը ստացել է 37 լիցենզիա, որից 6-ը՝ ստացիոնար (հիվանդանոցային):
- 2024 թվականի ընթացքում ձեռք են բերվել նոր և ժամանակակից բժշկական սարքավորումներ, ներառյալ անգիոգրաֆ (GE Optima IGS 330+) և մամոգրաֆ (GE 3D mammography):
- 2023-2024 թվականների ընթացքում Վարդանանցի կլինիկաների ընդհանուր մակերեսը աճել է ավելի քան երկու անգամ՝ հասնելով 5,167 ք.մ.:

Վարդանանցի կանխատեսմամբ՝ գործող մասնաճյուղերի ծանրաբեռնվածության աճին և թիրախային հասույթին հասնելուն զուգահեռ, EBITDA-ի աճի տեմպերը

[10] «Արինտերլև» ՓԲԸ-ի և «ԷՖԵՍ» ԱՓԲԸ-ի համար նշված ցուցանիշները ճշգրտված չեն ներխմբային եկամուտներով:

ժամանակի ընթացքում կկայունանան: EBITDA-ի աճի նոր աղբյուր կհանդիսանան նոր մասնաճյուղերը, նոր ծառայությունները և նոր մոտեցումները:
Զարգացման այս փուլի ընթացքում Վարդանանցը կենտրոնացած է ներդրումային արդյունավետության բարձրացման վրա՝ օգտագործելով ներհոսող կապիտալը ոչ միայն ենթակառուցվածքների ընդլայնման, այլև գործառնությունների օպտիմալացման ուղղությամբ՝ ներդնելով թվային լուծումներ, արհեստական բանականություն և բժշկական որակի բարձրացմանն ուղղված միջոցառումներ: Ակնկալվում է, որ հիմնական ծախսային ուղղություններում իրականացված բարելավումները կօգնեն պահպանել շահույթի մասնաբաժնի բարձր մակարդակը:
Առկա ռազմավարությունը ներառում է եկամուտների դիվերսիֆիկացման միջոցներ, ինչը թույլ կտա նվազեցնել կախվածությունը միայն ստացիոնար և ամբուլատոր ծառայություններից՝ ավելացնելով եկամտի աղբյուրների բազմազանությունը: Այս քաղաքականությունը ներառում է մասնավոր և ապահովագրական ծառայությունների հասանելիության ընդլայնում «ասիստանս» ծառայությունների միջոցով, ինչպես նաև այլ նորարարական ծառայությունների ներդրում, որոնք կարող են ապահովել եկամտի լրացուցիչ հոսքեր:
Բացի այդ, կանխատեսվում է գործառնական ծախսերի իջեցում տեխնոլոգիաների և ավտոմատացման ներդրման շնորհիվ, ինչը կնվազեցնի ծախսերի բեռնվածությունը և կխթանի շահութաբերությունը: Նոր մասնաճյուղերի բացումը միջնաժամկետ հեռանկարում կնպաստի մատակարարման շղթայի արդյունավետության բարձրացմանը և ծախսերի օպտիմալացմանը:
Ակնկալվում է, որ ներդրումային որոշումների ճկուն պլանավորումը կերաշխավորի ֆինանսական ռեսուրսների արդյունավետ բաշխումը՝ համապատասխան շուկայի պահանջներին և մրցակցային պայմաններին, ինչը թույլ կտա պահպանել ներդրումային կայունություն և ֆինանսական առողջություն նույնիսկ եկամուտների աճի տեմպի դանդաղելու պայմաններում:

2025 թվականին «Արինտերլև» ՓԲԸ հասույթը կազմել է 5.7 միլիարդ դրամ՝ նախորդ տարվա նկատմամբ ցուցադրելով 27% աճ:

«ԷՖԵՍ» ԱՓԲԸ-ն 2025 թվականի ընթացքում հավաքագրել է 12.6 միլիարդ ՀՀ դրամի պորտֆել՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ապահովագրավճարների համեմատ գրանցելով 23%-ի աճ, ընդ որում պորտֆելի շահութաբերությունը նույնպես աճել է՝ կազմելով 409 միլիոն ՀՀ դրամ: 2025 թվականի արդյունքներով «ԷՖԵՍ» ԱՓԲԸ-ն վստահորեն զբաղեցրել է առաջատարի դիրքը կամավոր ապահովագրության շուկայում առանձին (30.4% մասնաբաժին): Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ Ընկերության ընդհանուր ակտիվներն աճել են՝ կազմելով 11.5 միլիարդ ՀՀ դրամ: Ապահովագրավճարների պորտֆելի կառուցվածքում նշանակալի ծավալ ունեն առողջության ապահովագրությունը՝ ավելի քան 4.9 միլիարդ դրամ, գույքի ապահովագրությունը՝ 4.0 միլիարդ դրամ, և ցամաքային տրանսպորտի կամավոր ապահովագրությունը՝ 2.2 միլիարդ դրամ: Ընկերությունը շարունակել է կենտրոնանալ հաճախորդների սպասարկման որակի

բարձրացման, թվային լուծումների կատարելագործման և նորարար ծառայությունների մատուցման վրա:

2024-25 թվականներին ԷՖԵՍ-ը 665.1 մլն ՀՀ դրամ ընդհանուր ծավալով ներդրումներ է իրականացրել տեխնոլոգիական լուծումների և նորարարությունների զարգացման ուղղություններով, ներառյալ՝ թվային հարթակների կատարելագործումը, ինչը մեծացրել է հաճախորդների համար ապահովագրական ծառայությունների հասանելիությունն ու սպասարկման արագությունը՝ մասնավորապես անհատականացված պատուհանի ներդրումը «EFES Online» հարթակում, որի շնորհիվ հաճախորդները կարող են ստանալ առավել հարմարեցված և արդյունավետ ապահովագրական փորձառություն: Տեխնոլոգիական ներդրումների կարևորագույն ուղենիշ է նաև «EFES Insurance» բջջային հավելվածի թողարկումն ու 2025թ.-ին դրա շարունակական զարգացման ծրագրերի իրագործումը:

«ԷՖԵՍ» ապահովագրական ընկերությունը գործունեությունը շարունակում է՝ կնքելով միջազգային նշանակալի պայմանագրեր, որոնք հաճախորդների համար ֆինանսապես և տեխնոլոգիապես հասանելի են դարձնում համաշխարհային բժշկագիտության նվաճումները.

- 2024 թվականին ներդրվել է Oncocare with MSO (Medical Second Opinion) պրոդուկտը՝ ապահովագրություն օնկոլոգիական հիվանդություններից, ինչպես նաև երկրորդ կարծիքի տրամադրում. աշխարհահռչակ Swiss Re վերաապահովագրական ընկերության հովանու ներքո և բժշկական երկրորդ կարծիքի տրամադրման մեջ մասնագիտացած ամերիկյան Mediguide ընկերության հետ համատեղ մշակվել է նոր պրոդուկտ, որը տրամադրում է ֆինանսական հատուցում քաղցկեղի ախտորոշման դեպքում, ինչպես նաև տրամադրում է բժշկական մասնագիտական երկրորդ կարծիք նշանակված բուժման, ախտորոշման կամ հետազոտության արդյունքների վերաբերյալ:
- Ներդրվել է International Health առողջության ապահովագրության միջազգային փաթեթ. «ԷՖԵՍ» ապահովագրական ընկերությունը գերմանական Allianz ապահովագրական ընկերության հետ համատեղ ներկայացնում է նոր մակարդակի առողջության ապահովագրության փաթեթ անհատների և ընտանիքների համար, որը գործում է ինչպես առանձին տարածաշրջաններում, այնպես էլ ամբողջ աշխարհում և ամսական սկսած 47,000 ՀՀ դրամից տրամադրում է 2,000,000 եվրոյի ծածկույթ առողջապահական գրեթե բոլոր բնագավառներում՝ տարեկան բուժզննումից մինչև օնկոլոգիական հիվանդությունների բուժում:
- 2025 թվականին արդեն հասանելի է նոր ապահովագրական պրոդուկտ Հայաստանի Հանրապետության կառավարության աջակցությամբ: «EFES Social Credit»-ի շնորհիվ հաճախորդները կարող են

ձեռք բերել իրենց կարիքներին համապատասխան առողջության ապահովագրություն: «EFES Social Credit Insurance»-ը կառավարության կողմից եկամուտների հայտարարագրման շրջանակներում վերադարձվող ծախսերի ավելի արդի օգտագործելու և ներդնելու փաթեթ է, որի շրջանակներում հաճախորդները հնարավորություն են ստանում «անվճար» ներդրում անելու առողջության և բարեկեցության մեջ՝ վճարելով ապահովագրավճարը հաճախորդի կամ ընտանիքի անդամների համար և հաջորդ տարվա եկամուտների հայտարարագրման ժամանակ ստանալ վերադարձ՝ մինչև 50,000 դրամի չափով:

«Լենդլորդ» ՍՊԸ-ն 2025 թվականին մեկնարկել է Ընկերության և դուստր ընկերությունների ռազմավարական զարգացման համար կարևոր ներդրումային նախագիծ՝ Քըրք-Քըրքորյան (նախկինում՝ Լենինգրադյան) 23 հասցեում նոր բազմաֆունկցիոնալ համալիրի ստեղծումը՝ միջազգային և տեղական փորձագետների հետ համատեղ: Այդ համալիրում կտեղակայվեն Վարդանանցի նոր մասնաճյուղը և «ԷՖԵՍ»-ի գրասենյակը: Վարդանանցում կտրամադրվեն արտահիվանդանոցային և հիվանդանոցային ծառայություններ, ներառյալ ՄՌՏ ախտորոշում: Ազդագրի լրացումը ՀՀ ԿԲ գրանցման ներկայացնելու պահի դրությամբ «Լենդլորդ» ՍՊԸ-ն ստացել է ՃՀԱ (ճարտարապետահատակագծային առաջադրանք):

## 3.8 Շահույթի կանխատեսումը կամ գնահատումը

Ընկերության ղեկավարության կանխատեսումներով՝ Ընկերության հիմնական տնտեսական ցուցանիշները 2026-2028 թվականներին կունենան հետևյալ դինամիկան.

| Ցուցանիշ (մլն դրամ) | 2026թ. | 2027թ. | 2028թ. | 2029թ. |
|---|---|---|---|---|
| Հասույթ | 21,411 | 24,820 | 30,308 | 35,975 |
| Զուտ շահույթ | 1,130 | 2,580 | 3,395 | 3,962 |

Ընկերության ղեկավարության գնահատմամբ, վատագույն դեպքում, Ընկերության հասույթի կանխատեսվող մեծությունը վերոնշյալ տարիների համար կարող է ցածր լինել պլանային կանխատեսվող ցուցանիշներից 12-15%-ով, իսկ զուտ շահույթը՝ 20-22%-ով:

Կանխատեսման հիմնական սկզբունքները և ենթադրություններն են.

- Ապահովագրական բիզնես.
    - Ոչ առողջության ապահովագրության պրոդուկտների շուկայի տարեկան 5% աճ,

- Ընկերության մասնաբաժնի աճ ոչ առողջության ապահովագրության պրոդուկտների շուկայում ներկայիս 14%-ից մինչև 20% (2028 թվականին),
- Կոմբինացված գործակցի (combined ratio) շարունակական նվազում ոչ առողջության ապահովագրության պրոդուկտների շուկայում մինչև 70%,
- Առողջության ապահովագրության պրոդուկտների շուկայի տարեկան 10% աճ,
- Ընկերության մասնաբաժնի աճ առողջության ապահովագրության պրոդուկտների շուկայում ներկայիս 30%-ից մինչև 34% (2028 թվականին),
- Կոմբինացված գործակցի (combined ratio) շարունակական նվազում առողջության ապահովագրության պրոդուկտների շուկայում մինչև 75%:

* Առողջապահական բիզնես
  - Գործող 2 մասնաճյուղերի հասույթի տարեկան 5% աճ,
  - Նոր բացված Քոչար մասնաճյուղի հասույթի տարեկան 20% աճ՝ մինչև կայունացում 2030 թվականին, հետագայում տարեկան 5% աճ,
  - Նոր բացված Նանսեն մասնաճյուղի հասույթի տարեկան 75% (2026 թվականին) և 40% (2027 թվականին) աճ հիվանդանոցային ծառայությունների հաշվին՝ մինչև կայունացում 2028 թվականին, հետագայում տարեկան 10% աճ,
  - Վերադիր ծախսերի աստիճանաբար կայուն նվազում:

Վերոնշյալ գործոններից Թողարկողի կառավարման մարմիններն ուղղակի հնարավորություն ունեն ազդելու ոչ առողջության և առողջության ապահովագրության պրոդուկտների շուկայում մասնաբաժնի վրա, կոմբինացված գործակցի (combined ratio) վրա, առողջապահական բիզնեսի պարագայում՝ մասնաճյուղերի հասույթի տարեկան աճի տեմպերի և վերադիր ծախսերի մակարդակի վրա: Թողարկողի կառավարման մարմիններն ուղղակիորեն չեն կարող ազդել ոչ առողջության և առողջության ապահովագրության շուկայի աճի տեմպերի վրա:

## 3.12 Տեղեկատվություն թողարկողի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի մասին

### 3.12.1 Պատմական ֆինանսական տեղեկատվություն

Ընկերության 2023-2025 թվականների ֆինանսական տարիների համար աուդիտորական եզրակացությամբ հաստատված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են Հավելված 4-ում:

### 3.12.2 Միջանկյալ ֆինանսական տեղեկատվություն

Ընկերության 2026 թվականի համար միջանկյալ հաշվետվություններ դեռևս պատրաստված չեն:

### 3.12.3 Թողարկողի ֆինանսական վիճակի էական փոփոխությունները

2025 թվականի 1-ին կիսամյակի միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների վերջին օրվանից (2025 թվականի հունիսի 30) մինչև Ազդագիրը ՀՀ ԿԲ գրանցման ներկայացնելու օրն ընկած ժամանակահատվածում տեղի չեն ունեցել այնպիսի իրադարձություններ, որոնք ունեցել կամ կարող են ունենալ էական ազդեցություն Ընկերության ֆինանսական վիճակի վրա:

2026 թվականից մեկնարկած առողջության համապարփակ ապահովագրության ներդրումը ավելացրել է որակյալ բժշկական ծառայությունների պահանջարկը, ինչը կարող է դրական ազդեցություն ունենալ Թողարկողի եկամուտների և այլ ֆինանսական ցուցանիշների վրա:

2025 թվականի դեկտեմբերի 31-ից մինչև Ազդագրի լրացումը ՀՀ ԿԲ գրանցման ներկայացնելու օրն ընկած ժամանակահատվածում տեղի չեն ունեցել այլ իրադարձություններ, որոնք ունեցել կամ կարող են ունենալ էական ազդեցություն Ընկերության ֆինանսական վիճակի վրա:

# ՄԱՍ 4 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

## 4.5 ՀԱՎԵԼՎԱԾ 4: Ֆինանսական հաշվետվություններ

# «ԻՆԹԵԼԼԻՋԵՆԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՍՊԸ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա
վերաբերյալ և
անկախ աուդիտորի եզրակացություն

**Բովանդակություն**


| | |
|---|---|
| Անկախ աուդիտորի եզրակացություն | 3 |
| Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն | 7 |
| Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն | 8 |
| Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն | 9 |
| Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն | 10 |
| Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ | 11 |

Tel: +374 60 528899
E-mail: bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

23/6, Davit Anhaght Str.,
5th Floor, office 7
Yerevan, Armenia

# Անկախ աուդիտորի եզրակացություն

*Ներկայացվում է «Ինթելլիջենթ Մենեջմենթ» ՍՊԸ-ի մասնակիցներին*

**Կարծիք**

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ինթելլիջենթ Մենեջմենթ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) և վերջինիս դուստր ձեռնարկությունների (այսուհետ միասին՝ «Խումբ») համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2025թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի մասին, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագրությունը:

Մեր կարծիքով, կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Խմբի ֆինանսական վիճակը՝ 2025թ. -ի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների ՀՀՍՄԽ հրապարակման (ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներ):

**Կարծիքի հիմք**

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում:

Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի *(ներառյալ Անկախության Միջազգային Ստանդարտները)» (ՀԷՄՍԽ կանոնագիրք)*, և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի էթիկայի պահանջների, և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն այս կանոնների:

Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

**Առանցքային աուդիտորական հարցեր**

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք մեր մասնագիտական դատողության համաձայն՝ առավել նշանակալի էին ընթացիկ տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Մենք անդրադարձել ենք այդ հարցերին ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համատեքստում՝ որպես մեկ ամբողջություն, և ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք չենք տրամադրում առանձին կարծիք այդ հարցերի վերաբերյալ: Մեր նկարագրությունը, թե ինչպես է ստորև նշված յուրաքանչյուր հարցը դիտարկվել մեր աուդիտի ընթացքում, ներկայացված է այդ համատեքստում:

**Աուդիտի առանցքային հարց՝ գուդվիլի գնահատում**

**Գուդվիլի գնահատում**

2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի հաշվեկշռում ճանաչված գուդվիլը ենթակա է տարեկան արժեզրկման ստուգման: Ղեկավարությունը փոխհատուցվող գումարի որոշման նպատակով կիրառել է զեղչված դրամական հոսքերի մոդել:

Գուդվիլի գնահատումը պահանջում է էական մասնագիտական դատողություն, մասնավորապես՝ ապագա դրամական հոսքերի կանխատեսումների, զեղչման դրույքի, վերջնական աճի տեմպի և EBITDA ցուցանիշի վերաբերյալ ենթադրությունների մասով: Հաշվի առնելով ֆինանսական հաշվետվության մեջ գուդվիլի մնացորդի էականությունը և գնահատման հետ կապված անորոշության մակարդակը՝ մենք տվյալ հարցը դիտարկել ենք որպես աուդիտի առանցքային հարց:

**Մեր կողմից իրականացված ընթացակարգերը ներառել են.**

- ղեկավարության կողմից գնահատման գործընթացի վերահսկողության համակարգի գնահատում,
- ղեկավարության կողմից կիրառված զեղչված դրամական հոսքերի մոդելի մեթոդաբանության համապատասխանության գնահատում,
- վերջնական աճի տեմպի՝ շուկայական և մակրոտնտեսական կանխատեսումներին համապատասխանության ստուգում,
- կանխատեսվող եկամուտների և EBITDA ցուցանիշի պատմական արդյունքների և հաստատված բյուջեների հետ ստուգում,
- հիմնական ենթադրությունների զգայունության վերլուծության ստուգում,
- օգտագործված տվյալների մաթեմատիկական ճշգրտության ստուգում,
- ֆինանսական հաշվետվություններում կատարված բացահայտումների՝ ՖՀՄՍ պահանջներին համապատասխանության ստուգում:

Մեր իրականացրած ընթացակարգերի հիման վրա մենք եզրահանգել ենք, որ ղեկավարության կողմից գուդվիլի գնահատման համար կիրառված հիմնական ենթադրությունները և մոտեցումները ողջամիտ են:

**Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար**

Խմբի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, ինչպես նաև այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է՝ խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Խմբի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Խմբի՝ անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Խումբը, ընդհատել նրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են Խմբի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկման համար:

Tel: +374 60 528899
E-mail: bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

23/6, Davit Anhaght Str.,
5th Floor, office 7
Yerevan, Armenia

**Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար**

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խարդախության կամ սխալի արդյունքում առաջացող խեղաթյուրումները համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք՝ առանձին կամ միասին վերցրած, կազդեն համածմբված ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:

- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:

- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող են նշանակալի կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Խմբին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների ու գործարքների ճշմարիտ ներկայացումը:

- ձեռք ենք բերում բավարար համապատասխան ապացույցներ Խմբի ներսում գործող կազմակերպությունների ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով:

BDO

Tel: +374 60 528899
E-mail: bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

23/6, Davit Anhaght Str.,
5th Floor, office 7
Yerevan, Armenia

Մենք պատասխանատու ենք խմբի աուդիտի ուղղորդման, ղեկվարման և իրականացման համար: Մենք ամբողջովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Մենք կառավարման պատասխանատու անձանց հետ հաղորդակցվում ենք, ի թիվս այլ հարցերի, աուդիտի նախատեսված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի էական արդյունքների, ներառյալ ներքին վերահսկողության մեջ առկա ցանկացած էական թերության վերաբերյալ, որը մենք հայտնաբերում ենք մեր աուդիտի ընթացքում:

Մենք նաև կառավարման պատասխանատու անձանց տրամադրում ենք հայտարարություն առ այ, որ մենք պահպանել ենք անկախության վերաբերյալ համապատասխան էթիկական պահանջները, և նրանց հետ հաղորդակցում ենք բոլոր այն հարաբերությունները և այլ հարցերը, որոնք կարող են ողջամտորեն ազդել մեր անկախության վրա, և, որտեղ կիրառելի է, սպառնալիքները վերացնելու կամ կիրառված պաշտպանիչ միջոցների մասին ձեռնարկված գործողությունները:

Կառավարման պատասխանատու անձանց հետ հաղորդակցված հարցերից մենք որոշում ենք այն հարցերը, որոնք առավել կարևոր են եղել ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար և, հետևաբար, աուդիտի հիմնական հարցերն են: Մենք նկարագրում ենք այս հարցերը մեր աուդիտորի զեկույցում, եթե օրենքը կամ կանոնակարգը չեն խոչընդոտում հարցի վերաբերյալ հրապարակային բացահայտմանը, կամ երբ, չափազանց հազվագյուտ հանգամանքներում, մենք որոշում ենք, որ որևէ հարց չպետք է հաղորդվի մեր զեկույցում, քանի որ դա անելու անբարենպաստ հետևանքները ողջամտորեն կարող են գերազանցել նման հաղորդակցության հանրային շահերի օգուտները:

16 ապրիլ 2026թ
«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ

Վահագն Սահակյան, FCCA
Տնօրեն

Սերգեյ Յակովլև, FCCA
Աուդիտի ղեկավար

**«Ինթելլիջենթ Մենեջմենթ» ՍՊԸ**
**Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն**
**առ 31 դեկտեմբերի 2025թ.**

| | Ծնթ. | 31 դեկ. 2025թ. հազ. դրամ | 31 դեկ. 2024թ. հազ. դրամ |
|---|---|---|---|
| **Ակտիվներ** | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 13 | 336,065 | 42,568 |
| Բանկային ավանդներ | 18 | 2,104,295 | 1,710,879 |
| Ներդրումներ արժեթղթերում | | 4,642,842 | 4,603,115 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 21 | 417,643 | 353,414 |
| Վերաապահովագրության գծով պայմանագրերի ակտիվներ | 19 | 3,067,857 | 1,118,077 |
| Տրամադրված փոխառություններ | | 720,681 | 424,203 |
| Պաշարներ | 20 | 131,448 | 129,704 |
| Այլ ակտիվներ | | 122,269 | 40,385 |
| Ոչ ընթացիկ ակտիվներին վերաբերող կանխավճարներ | | 23,870 | 8,758 |
| Հիմնական միջոցներ | 9 | 4,863,471 | 4,957,771 |
| Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ | | 1,980,495 | 2,130,467 |
| Ոչ նյութական ակտիվներ | 10 | 528,432 | 368,367 |
| Գուդվիլ | | 1,950,839 | 1,950,839 |
| Հետաձգված հարկային ակտիվ | | 337,247 | 248,690 |
| **Ընդամենը ակտիվներ** | | **21,227,454** | **18,087,237** |
| | | | |
| **Սեփական կապիտալ** | | | |
| Բաժնետիրական կապիտալ | | 6,250 | 6,250 |
| Կուտակված վնաս | | (1,440,305) | (1,133,027) |
| Էմիսիոն եկամուտ | | 2,698,911 | 2,698,911 |
| Պահուստ | | 557,586 | 388,865 |
| Չվերահսկող բաժնեմաս | | 90,611 | 334,621 |
| **Ընդամենը սեփական կապիտալ** | | **1,913,053** | **2,295,620** |
| | | | |
| **Պարտավորություններ** | | | |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 22 | 978,678 | 928,732 |
| Շահութահարկի գծով պարտավորություն | | 60,168 | - |
| Փոխհատուցման պարտավորություն | | 158,408 | 217,165 |
| Ակրեդիտիվ | | - | - |
| Բանկերի հետ հետգնման պայմանագրեր | | 3,476,711 | 2,245,718 |
| Վերաապահովագրության պայմանագրերի գծով պարտավորություններ | 19 | 83,700 | 27,600 |
| Ապահովագրության պայմանագրերի գծով պարտավորություններ | 19 | 4,074,909 | 3,130,216 |
| Այլ պարտավորություններ | | 310,827 | 701,930 |
| Վարկեր և փոխառություններ | 16 | 4,751,877 | 6,199,200 |
| Թողարկած պարտատոմսերի գծով պարտավորություններ | 23 | 2,991,828 | - |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 11 | 2,426,704 | 2,340,366 |
| Եկամտին վերաբերող շնորհներ | | 591 | 690 |
| **Ընդամենը պարտավորություններ** | | **19,314,401** | **15,791,617** |
| **Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ** | | **21,227,454** | **18,087,237** |

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները (էջ 7-56) հաստատվել են ղեկավարության կողմից 2026թ. Ապրիլի 16-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Արևշատ Մելիքսեթյան
Տնօրեն

Մասիս Վարդանյան
Ֆինանսական տնօրեն

| | Ծնթ. | 2025թ. հազ. դրամ | 2024թ. հազ. դրամ |
|---|---|---|---|
| Հասույթ | 5 | 16,793,774 | 13,522,294 |
| Վաճառքի ինքնարժեք | 8 | (10,640,415) | (8,125,655) |
| **Համախառն շահույթ** | | **6,153,359** | **5,396,639** |
| | | | |
| Վարչական ծախսեր | 8 | (11,450,635) | (8,165,774) |
| Իրացման ծախսեր | 8 | (108,193) | (103,963) |
| Այլ եկամուտներ | 6 | 5,700,945 | 2,628,987 |
| Այլ ծախսեր | 8 | (540,363) | (506,493) |
| **Գործառնություններից վնաս** | | **(244,887)** | **(750,604)** |
| | | | |
| Ֆինանսական եկամուտ | | 687,303 | 544,410 |
| Ֆինանսական ծախսեր | | (1,048,693) | (755,386) |
| Զուտ (վնաս) /օգուտ փոխարժեքային տարբերություններից | | (33,568) | 46,940 |
| **Վնաս հարկումից առաջ** | | **(639,845)** | **(914,640)** |
| Շահութահարկի վերականգնում | 7 | 88,557 | 132,223 |
| **Տարվա վնաս** | | **(551,288)** | **(782,417)** |
| Այլ համապարփակ եկամուտ | | 200,279 | 55,422 |
| **Ընդամենը համապարփակ վնաս** | | **(351,009)** | **(726,995)** |
| **Ընդամենը համապարփակ վնաս, որը վերագրվում է.** | | | |
| Մայր ընկերության սեփականատերերին | | (106,999) | (589,097) |
| Չվերահսկող բաժնեմասին | | (244,010) | (137,898) |

**«Ինթելլիջենթ Մենեջմենթ» ՍՊԸ**
**Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն**
**2025թ. համար**

| | Բաժնետիրական կապիտալ<br>հազ. դրամ | Կուտակված վնաս<br>հազ. դրամ | Էմիսիոն եկամուտ<br>հազ. դրամ | Վերագնահատման պահուստ և ավելցուկ<br>հազ. դրամ | Չվերահսկող բաժնեմաս<br>հազ. դրամ | Ընդամենը<br>հազ. դրամ |
|---|---|---|---|---|---|---|
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ.** | **6,250** | **(1,133,027)** | **2,698,911** | **388,865** | **334,621** | **2,295,620** |
| Տարվա վնաս | - | (307,278) | - | 200,279 | (244,010) | **(351,009)** |
| Հիմնական միջոցների վերագնահատում | - | - | - | (31,558) | - | **(31,558)** |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2025թ.** | **6,250** | **(1,440,305)** | **2,698,911** | **557,586** | **90,611** | **1,913,053** |
| | | | | | | |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **6,250** | (543,930) | 2,698,911 | 2,842 | 472,519 | **2,295,592** |
| Տարվա վնաս | - | (589,097) | - | **-** | (137,898) | **(726,995)** |
| Հիմնական միջոցների վերագնահատում | - | - | - | 386,023 | - | **386,023** |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ.** | **6,250** | **(1,133,027)** | **2,698,911** | **388,865** | **334,621** | **2,295,620** |

**«Ինթելլիջենթ Մենեջմենթ» ՍՊԸ**
**Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն 2025թ. համար**

| | 2025թ. հազ. դրամ | 2024թ. հազ. դրամ |
|---|---|---|
| **Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից** | | |
| Բժշկական ծառայություններից ստացված դրամ միջոցներ | 5,346,183 | 4,354,113 |
| Դեղերի վաճառքից ստացված դրամական միջոցներ | 281,299 | 340,899 |
| Ստացված տոկոսներ | 475,769 | 321 |
| Ստացված ապահովագրավճարներ | 12,078,314 | 11,145,963 |
| Փոխանցված վերաապահովագրության վճարներ | (3,411,463) | (3,597,109) |
| Վճարված ապահովագրական փոխհատուցումներ | (6,925,700) | (4,587,124) |
| Վերաապահովագրողների բաժինը կարգավորված պահանջներում | 89,832 | 67,615 |
| Ստացված սուբրոգացիայի գումարներ | 30,137 | 3,202 |
| Վճարումներ մատակարարներին | (292,910) | (268,032) |
| Վճարումներ միջնորդներին | (279,049) | (440,814) |
| Այլ վճարումներ | (235,527) | 163,365 |
| Դեղորայքի և այլ պարագաների մատակարարման դիմաց վճարումներ | (741,629) | (575,606) |
| Ծառայությունների դիմաց վճարումներ | (839,175) | (591,072) |
| Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից | (4,290,089) | (3,343,971) |
| Եկամտային հարկի վճարում | - | (5,254) |
| Եկամտային հարկից բացի այլ հարկերի վճարում | (1,319,952) | (1,081,965) |
| Նվիրաբերված ակտիվներ | (10,832) | (14,369) |
| **Գործառնական գործունեությամբ օգտագործված զուտ դրամական հոսքեր** | **(44,862)** | **1,570,162** |
| **Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից** | | |
| Ոչ ընթացիկ ակտիվների վաճառքից ստացված մուտքեր | 1,536 | 9,209 |
| Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման գծով վճարումներ | (267,737) | (838,356) |
| Ավանդների ներդրում, զուտ | (217,557) | (202,140) |
| Ներդրումային արժեթղթերի վաճառք/(ձեռքբերում) | 711,505 | (3,308,544) |
| Հիմ.միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում | (335,702) | (530,381) |
| Տրված փոխառություններ, զուտ | (3,650) | (458) |
| **Ներդրումային գործունեությամբ օգտագործված զուտ դրամական հոսքեր** | **(111,605)** | **(4,870,671)** |
| **Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից** | | |
| Վարկերի մայր գումարների վճարումներ | (3,325,043) | (426,082) |
| Վարձակալության գծով պարտավորությունների վճարումներ | (450,391) | (312,677) |
| Վարկերի, վարձակալության պարտավորությունների տոկոսների վճարումներ | (760,576) | (378,690) |
| Ակրեդիտիվի վճարումներ | - | (92,602) |
| Ստացված վարկեր և փոխառություններ | 5,009,532 | 4,271,204 |
| **Ֆինանսավորման գործունեությունից զուտ դրամական հոսքեր** | **473,522** | **3,061,154** |
| ***Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)*** | **317,055** | **(239,355)** |
| Փոխարժեքների փոփոխությունից (վնաս)/եկամուտ | (23,558) | 10,916 |
| Դրամական միջոցները տարեսկզբին | 42,568 | 271,007 |
| Դրամական միջոցները տարեվերջին (Ծնթ. 13) | **336,065** | **42,568** |

## 2025թ. համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ


| Ծանոթագրություն | Էջ |
|---|---|
| 1. Հաշվետու կազմակերպություն | 12 |
| 2. Պատրաստման հիմքեր | 13 |
| 3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ | 15 |
| 4. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ | 16 |
| 5. Հասույթ | 18 |
| 6. Այլ եկամուտներ | 19 |
| 7. Շահութահարկ | 20 |
| 8. Ծախսեր (հազ. դրամ) | 21 |
| 9. Հիմնական միջոցներ | 22 |
| 10. Ոչ նյութական ակտիվներ | 23 |
| 11. Վարձակալություն | 24 |
| 12. Հետաձգված հարկ | 25 |
| 13. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 25 |
| 14. Սեփական կապիտալ | 26 |
| 15. Կապիտալի կառավարում | 26 |
| 16. Վարկեր և փոխառություններ | 26 |
| 17. Ներդրումներ արժեթղթերում | 27 |
| 18. Բանկային ավանդներ | 27 |
| 19. Ապահովագրություն և վերաապահովագրություն | 27 |
| 20. Պաշարներ | 36 |
| 21. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 36 |
| 22. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 36 |
| 23. Թողարկված պարտատոմսեր | 37 |
| 24. Իրական արժեք և ռիսկերի կառավարում | 37 |
| 25. Պայմանական դեպքեր | 40 |
| 26. Կապակցված կողմեր | 41 |
| 27. Չափման հիմունքներ | 41 |
| 28. Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասեր | 42 |

## 1. Հաշվետու կազմակերպություն

### (ա) Հայաստանի բիզնես միջավայրը

Խումբը իր գործունեությունը իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում: Հետևաբար, Խումբը ենթարկվում է ՀՀ տնտեսական և ֆինանսական շուկաների փոփոխությունների ազդեցությանը:

Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ՝ ենթարկվելով մի քանի մեկնաբանությունների և հաճախակի փոփոխությունների, ինչն, ի թիվս այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար:

2022 թվականի փետրվարին Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի միջև ռազմական հակամարտության պատճառով մի շարք երկրներ պատժամիջոցներ սահմանեցին Ռուսաստանի Դաշնության դեմ: Հակամարտությունը շարունակական ազդում է ոչ միայն երկու երկրների տնտեսական ակտիվության վրա, այլև համաշխարհային տնտեսության վրա: Պատժամիջոցների հետևանքով աշխարհի շատ երկրներում ապրանքների գները բարձրացել են, ռեսուրսների մատակարարման միջև հաստատված կապերը խաթարվել են, ինֆլյացիան նույնպես ազդում է գների վրա, և վերլուծաբանները նաև կանխատեսում են տնտեսական հետևանքներ համաշխարհային արդյունաբերության համար:

ՀՀ տնտեսական միջավայրի վրա էական ազդեցություն ունի նաև Ռուսաստանի Դաշնությունում գործարար ակտիվության մակարդակը, քանի որ Ռուսաստանի Դաշնությունից դեպի ՀՀ տեղի են ունենում դրամական միջոցների զգալի հոսքեր: Հետևաբար տարածաշրջանում պահպանվող քաղաքական լարվածությունը, միջազգային պատժամիջոցները, արժեթղթերի շուկայի անկայունությունը, սուր գնաճը և ՌԴ առջև ծառացած այլ ռիսկերը կարող են բացասական ազդեցություն ունենալ ՀՀ տնտեսության վրա:

Հայաստանի տնտեսությունը հաջողությամբ դիմակայել է առկա համաշխարհային տուրբուլենտներին և կարողացել է տպավորիչ մակրոտնտեսական ցուցանիշներ գրանցել ինչպես 2025, այնպես էլ 2024 թվականներին՝ հիմնականում զբոսաշրջության, մի շարք ընկերությունների Հայաստան վերաբաշխման և տրանսֆերտների զգալի աճի շնորհիվ: Նշված բոլոր գործոնները հանգեցրել են ՀՆԱ-ի 5.2% աճին 2025 թվականի առաջին եռամսյակում: Կառավարության 2021-2026 թվականների տնտեսական ծրագիրը նպատակ ունի զարգացնել արտահանմանն ուղղված և ներդրումների վրա հիմնված աճի մոդելը լայնածավալ բարեփոխումների ջանքերի միջոցով:

Այսպիսի գործարար միջավայրն էական ազդեցություն ունի Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա: Ընկերությունը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ Ընկերության գործունեության կայունությունն ապահովելու նպատակով, այդուհանդերձ, ելնելով իրադարձությունների զարգացման անկանխատեսելիությունից, Ղեկավարությունը հնարավորություն չունի արժանահավատ գնահատական տալ, թե նման հանգամանքները ինչ ազդեցություն կունենան Ընկերության հետագա տարիների ֆինանսական վիճակի վրա:

Ներկայիս տնտեսական իրավիճակի հետագա հետևանքները և Կառավարության ձեռնարկվելիք միջոցառումները դժվար է կանխատեսել, և Ընկերության ղեկավարության ներկայիս ակնկալիքները և գնահատականները կարող են տարբերվել փաստացի արդյունքներից:

### (բ) Կազմակերպչական կառուցվածքը և գործունեությունը

**«Ինթելլիջենթ Մենեջմենթ» ՍՊԸ**
Ընկերությունը հիմնադրվել է 2022 թվականին, գրանցվել 2022 թվականի նոյեմբերի 22-ին (գրանցման համար՝ 271.110.1277977), հասցե՝ ք. Երևան, Ամիրյան փող. 1: 2025 թվականի դրությամբ ընկերության միակ մասնակիցը հանդիսանում է՝

Արևշատ Մելիքսեթյան՝ 100%

**«Լենդլորդ» ՍՊԸ**
Ընկերությունը հիմնադրվել է 2023 թվականին, գրանցվել 2023 թվականի մայիսի 4-ին (գրանցման համար՝ 271.110.1315490), հասցե՝ ք. Երևան, Գանձասար փողոց 17: 2025 և 2024 թվականների վերջի դրությամբ 100% մասնակից էր հանդիսանում «Ինթելլիջենթ Մենեջմենթ» ՍՊԸ-ն (100%): Ընկերությանը պատկանում էր «Վալեմ» ՍՊԸ-ն, որը 2025թ. միացավ Ընկերությանը (վերակազմակերպում՝ միացման ճանապարհով) և դադարեցրեց գործունեությունը: Ընկերության ակտիվներն օգտագործվում են բժշկական կենտրոնի նոր մասնաճյուղի ստեղծման համար:

**«Պրեմիում Քոնսալթանթ» ՍՊԸ**
Ընկերությունը հիմնադրվել է 2023 թվականին, գրանցվել 2023 թվականի փետրվարի 1-ին (գրանցման համար՝ 286.110.1292492): 2025 և 2024 թվականների վերջի դրությամբ մասնակիցներն են հանդիսացել՝ 50% «Ինթելլիջենթ Մենեջմենթ» ՍՊԸ, 50% Արևիկ Մխիթարյան: Կազմակերպությունը մատուցում է հաշվապահական ծառայություններ:

**«Արինտերլև» ՓԲԸ**
Առողջապահական ծառայություններ մատուցող ընկերություն («Վարդանանց» նորարարական բժշկության կենտրոն): 2025 և 2024 թվականների վերջի դրությամբ «Ինթելլիջենթ Մենեջմենթ» ՍՊԸ-ն տիրապետում է վերջինիս կանոնադրական կապիտալի 61.9%-ին:

**«Էֆես» Ապահովագրական ՓԲԸ**
Ապահովագրական ընկերություն: 2025 և 2024 թվականների վերջի դրությամբ այն «Ինթելլիջենթ Մենեջմենթ» ՍՊԸ-ի 100% դուստր ձեռնարկությունն է հանդիսացել:

## 2. Պատրաստման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար որդեգրված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են Ծանոթագրություն 27-ում: Դրանք հետևողականորեն կիրառվել են ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը հանդիսանում է նաև Ընկերության ֆունկցիոնալ արժույթը:

Գումարային արժեքները կլորացվել են հազարներով, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների, հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների (ՀՀՄՍ) և դրանց մեկնաբանությունների (հավաքականորեն՝ ՖՀՄՍ) պահանջներին համապատասխան:

ՖՀՄՍ-երի համաձայն ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս՝ անհրաժեշտ է կատարել հաշվապահական հաշվառման նշանակալի գնահատումներ և դատողություններ: Վերջիններիս կիրառման ոլորտները և ազդեցությունը բացահայտված են Ծանոթագրություն 4-ում:

***Չափման հիմքերը***

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի հիման վրա:

***Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ***

*Ուժի մեջ մտած նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ*

ՀՀՄՍ 21.8 Արժույթը համարվում է փոխանակելի մեկ այլ արժույթի հետ, եթե կազմակերպությունը կարող է ձեռքբերել մյուս արժույթը որոշակի ժամանակահատվածում, որը թույլ է տալիս սովորական վարչական ուշացում, և

շուկայի կամ փոխանակման մեխանիզմի միջոցով, որի դեպքում փոխանակման գործարքը կստեղծեր կիրառելի իրավունքներ և պարտավորություններ:

ՀՀՄՍ 21.19Ա Կազմակերպությունը պետք է գնահատի սփոթ փոխարժեքը չափման ամսաթվի դրությամբ, երբ արժույթը այդ ամսաթվին փոխարկելի չէ մեկ այլ արժույթի հետ (ինչպես նկարագրված է 8, 8Ա-8Բ և Ա2-Ա10 կետերում): Սփոթ փոխարժեքը գնահատելիս կազմակերպության նպատակն է արտացոլել այն փոխարժեքը, որով չափման ամսաթվի դրությամբ շուկայի մասնակիցների միջև տեղի կունենար կանոնավոր փոխանակման գործարք՝ գերիշխող տնտեսական պայմաններում:

ՀՀՄՍ 21.57Ա Երբ կազմակերպությունը հաշվարկում է սփոթ փոխարժեք, քանի որ արժույթը չի կարող փոխանակվել մեկ այլ արժույթի հետ (տե՛ս կետ 19Ա), այն պետք է բացահայտի տեղեկատվություն, որը թույլ կտա իր ֆինանսական հաշվետվություններն օգտագործողներին հասկանալ, թե ինչպես է արժույթը մեկ այլ արժույթով փոխանակելու անկարողությունը ազդում կամ ակնկալվում է, որ կազդի կազմակերպության ֆինանսական ցուցանիշների, ֆինանսական վիճակի և դրամական հոսքերի վրա: Այս նպատակին հասնելու համար կազմակերպությունը պետք է բացահայտի տեղեկատվություն հետևյալի մասին՝

ա. արժույթը մեկ այլ արժույթով փոխանակելու անկարողության բնույթի և ֆինանսական հետևանքների մասին,
բ. օգտագործված սփոթ փոխարժեք(ներ)ի մասին,
գ. հաշվարկման գործընթացի մասին, և
դ. այն ռիսկերի մասին, որոնց կազմակերպությունը ենթարկվում է արժույթը մեկ այլ արժույթով փոխանակելու անկարողության պատճառով:

*ա) 2025 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ*

Հետևյալ փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2025 թվականի հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար.

- Փոխանակելիության բացակայություն (ՀՀՄՍ 21 «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը» (Փոփոխություն))

2023 թվականի օգոստոսի 15-ին ՀՀՄՍԽ-ն հրապարակեց «Փոխանակելիության բացակայություն»-ը, որով փոփոխվեց ՀՀՄՍ 21 «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը» (Փոփոխություններ): Փոփոխությունները պահանջում են գնահատել, թե երբ է արժույթը փոխանակելի այլ արժույթի հետ, և երբ՝ ոչ: Փոփոխությունների համաձայն կազմակերպությունը պետք է գնահատի սփոթ փոխարժեքը, եթե այն եզրակացնում է, որ արժույթը փոխարկելի չէ այլ արժույթի հետ:

Այս փոփոխությունները որևէ ազդեցություն չեն ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

*Նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել*

ՀՀՄՍ 8.30 Եթե կազմակերպությունը չի կիրառել հրապարակված, բայց դեռևս ուժի մեջ չմտած նոր ՖՀՄՍ, այն պետք է բացահայտի՝
(ա) այդ փաստը. և
(բ) հայտնի կամ ողջամտորեն գնահատելի տեղեկատվություն, որը վերաբերում է նոր ՖՀՄՍ-ի սկզբնական կիրառման ժամանակահատվածում կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների վրա դրա հնարավոր ազդեցության գնահատմանը:

ՀՀՄՍ 8.31 ՀՀՄՍ 8.30-ի համաձայն պետք է հաշվի առնել հետևյալ տեղեկատվության բացահայտումը՝
(ա) նոր ՖՀՄՍ-ի վերնագիրը,
(բ)հաշվապահական քաղաքականության մեջ առաջարկվող փոփոխության կամ փոփոխությունների բնույթը,
(գ) այն ամսաթիվը, նախքան որը ՖՀՄՍ-ը պետք է ընդունվի,

(դ) այն ամսաթիվը, նախքան որը նախատեսվում է ՖՀՄՍ-ի սկզբնական ընդունումը, և
(ե) կամ՝
(i) ակնկալվող ազդեցության քննարկումը. կամ
(ii) եթե այդ ազդեցությունը անհայտ է կամ չի կարող ողջամտորեն գնահատվել, այդ փաստը:

*բ) Դեռևս ուժի մեջ չմտած ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ*
Կան մի շարք ստանդարտներ, ստանդարտների փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք թողարկվել են ՀՀՄՍԽ-ի կողմից և գործելու են ապագա հաշվետու ժամանակաշրջաններում, որոնք սակայն Ընկերությունը որոշել է վաղաժամ չընդունել:

Հետևյալ փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2026 թվականի հունվարի 1-ից սկսած տարեկան ժամանակաշրջանների համար.

- *Փոփոխություններ ֆինանսական գործիքների դասակարգման և չափման մեջ (ՖՀՄՍ 9-ի («Ֆինանսական գործիքներ») և ՖՀՄՍ 7-ի («Ֆինանսական գործիքներ. Բացահայտումներ») փոփոխություններ)*
- *Բնությունից կախված էլեկտրաէներգիայի վերաբերյալ պայմանագրեր (ՖՀՄՍ 9-ի և ՖՀՄՍ 7-ի փոփոխություններ):*

Հետևյալ փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2027 թվականի հունվարի 1-ից սկսած տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար.

- *ՖՀՄՍ 18 Ներկայացում և բացահայտում ֆինանսական հաշվետվություններում,*
- *ՖՀՄՍ 19 Դուստր ընկերություններ առանց հանրային ֆինանսական հաշվետվողականության. Բացահայտումներ:*

Ընկերությունը ներկայումս գնահատում է այս նոր հաշվապահական ստանդարտների և փոփոխությունների ազդեցությունը:

Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից 2024 թվականի ապրիլին հրապարակված ՖՀՄՍ 18-ը՝ «Ներկայացում և բացահայտում ֆինանսական հաշվետվություններում», փոխարինում է ՀՀՄՍ 1-ին և կհանգեցնի էական փոփոխությունների ՖՀՄՍ հաշվապահական ստանդարտներում, այդ թվում ՀՀՄՍ 8-ում՝ «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմքը» (նախկինում՝ «Հաշվապահական քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ» ): Չնայած ՖՀՄՍ 18-ը չի ազդի համախմբված ֆինանսական հաշվետվություններում հոդվածների ճանաչման և չափման վրա, այն, ինչպես կանխատեսվում է, էական ազդեցություն կունենա որոշակի հոդվածների ներկայացման և բացահայտման վրա: Այս փոփոխությունները ներառում են շահույթի կամ վնասի մասին հաշվետվության մեջ դասակարգումը և ենթագումարները, տեղեկատվության ագրեգացումը/ապագրեգացումը և պիտակավորումը, ինչպես նաև ղեկավարության կողմից սահմանված արդյունավետության չափանիշների բացահայտումը:

Ընկերությունը չի ակնկալում, որ կկարողանա կիրառել ՖՀՄՍ 19-ը:

Այս փոփոխություններն ազդեցություն չեն ունեցել Խմբի ֆինանսական հաշվետվությունների վրա:

## 3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»): Դրամը Խմբի ֆունկցիոնալ և այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթն է: Ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ, եթե այլ բան նշված չէ:

## 4. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունից պահանջվում է կատարել մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամուտների և ծախսերի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված այն կարևոր դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք նշանակալի ազդեցություն ունեն համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա և այն ենթադրությունների և գնահատման անորոշության վերաբերյալ տեղեկատվությունը, որոնց դեպքում առկա է նշանակալի ռիսկ, որ դրանք հաջորդ ֆինանսական տարվա ընթացքում կարող են հանգեցնել էական ճշգրտումների, ներկայացված են հետևյալ ծանոթագրություններում.

- Ծանոթագրություն 2 - ենթադրություններ, որոնք վերաբերում են Խմբի՝ իր գործունեությունն անընդհատ շարունակելու կարողությանը,
- Ծանոթագրություն 11 - վարձակալության ժամկետի և վարձակալի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքի որոշում,
- Ծանոթագրություն 9 - հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ,
- Ծանոթագրություն 10 - ոչ ընթացիկ ակտիվների արժեզրկումը ստուգելիս կատարվող հիմնական ենթադրություններ,
- Ծանոթագրություն 21 - առևտրային դեբիտորական պարտքերից ակնկալվող պարտքային կորուստների (ԱՊԿ) գծով պահուստի չափում. վնասի միջին կշռված դրույքը որոշելու համար կիրառվող հիմնական ենթադրություններ,
- Ծանոթագրություն 12 - հետաձգված հարկային ակտիվների չճանաչում:

### Իրական արժեքի չափում

Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության որոշակի դրույթներ և բացահայտումներ պահանջում են իրական արժեքի չափում ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար:

Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելիս Խումբը հնարավորության սահմաններում օգտագործում է դիտարկելի շուկայական տվյալները: Իրական արժեքները դասակարգվում են ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակների, հիմք ընդունելով գնահատման մեթոդներում օգտագործված ելակետային տվյալները, ինչպես ներկայացված է ստորև.

- 1-ին մակարդակ. նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար գործող շուկայում գնանշված գները (չճշգրտված):
- 2-րդ մակարդակ. 1-ին մակարդակում ներառված գնանշված գներից տարբեր ելակետային տվյալները, որոնք ակտիվի կամ պարտավորության համար դիտելի են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գներից ստացվող):
- 3-րդ մակարդակ. ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտելի շուկայական տվյալների վրա (ոչ դիտելի ելակետային տվյալներ):

Եթե ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելու համար օգտագործվող ելակետային տվյալները կարող են դասակարգվել իրական արժեքի հիերարխիայի տարբեր մակարդակների, ապա իրական արժեքի չափումն ամբողջությամբ դասվում է հիերարխիայի այն նույն մակարդակին, որին դասվում են այն ամենացածր մակարդակի ելակետային տվյալները, որոնք նշանակալի են ամբողջությամբ վերցված իրական արժեքի չափման համար:

Իրական արժեքի հիերարխիայի մակարդակների միջև տեղի ունեցող փոխանցումները Խումբը ճանաչում է այն հաշվետու ժամանակաշրջանի վերջում, որի ընթացքում տեղի են ունեցել փոփոխությունները:

Իրական արժեքի չափման ժամանակ կատարվող ենթադրությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 23-ում՝ «Իրական արժեք և ռիսկերի կառավարում»:

## 5. Հասույթ

| | 2025թ. հազ. դրամ | 2024թ. հազ. դրամ |
|---|---|---|
| **Բժշկական ծառայություններից ստացված հասույթ** | | |
| Հաճախորդների կողմից վճարված | 2,646,868 | 1,846,127 |
| Ապահովագրական ընկերությունների կողմից փոխհատուցված | 669,827 | 614,794 |
| Պետական պատվերի շրջանակներում | 555,588 | 424,283 |
| Սոցիալական փաթեթների շրջանակներում | 65,225 | 38,478 |
| **Ընդամենը բժշկական ծառայություններից ստացված հասույթ** | **3,937,508** | **2,940,037** |
| **Դեղերի վաճառքից ստացված հասույթ** | | |
| Ապահովագրական ընկերությունների կողմից փոխհատուցված | 136,064 | 173,496 |
| Հաճախորդների կողմից վճարված | 76,085 | 100,676 |
| Պետական պատվերի շրջանակներում | 17,540 | 19,596 |
| **Ընդամենը դեղերի վաճառքից ստացված հասույթ** | **229,689** | **293,768** |
| **Ապահովագրությունից ստացված հասույթ** | | |
| Ճանապարհորդության ապահովագրություն | 724,418 | 515,062 |
| Դժբախտ պատահարների ապահովագրություն | 774,943 | 593,828 |
| Առողջության ապահովագրություն | 5,002,585 | 4,292,858 |
| Ավտոմեքենաների և դրանց օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն | 1,936,650 | 1,287,302 |
| Օդային տրանսպորտի կմախքի և ավիափոխադրողների պատասխանատվության ապահովագրություն | 145,085 | 110,291 |
| Բեռների ապահովագրություն | 74,806 | 130,414 |
| Գույքի ապահովագրություն | 3,637,651 | 3,095,784 |
| Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն | 304,927 | 234,933 |
| **Ընդամենը ապահովագրությունից ստացված հասույթ** | **12,601,065** | **10,260,472** |
| **Մատուցված ծառայություններից ստացված հասույթ** | **822** | **3,479** |
| **Այլ ապրանքների վաճառքից ստացված հասույթ** | **24,690** | **24,538** |
| **Ընդամենը հասույթ** | **16,793,774** | **13,522,294** |

## 6. Այլ եկամուտներ

| 2025թ. | Վերաապահովագրողի բաժինը կրած վնասներում և այլ ծախսերում | Վերաապահովագրության ձեռքբերումից առաջացող դրամական հոսքերի ամորտիզացիա | Վերաապահովագրողների բաժինը կրած վնասների համար պարտավորությունների փոփոխության մեջ | Այլ | Վերաապահովագրողի կողմից փոխհատուցված գումարներ |
|---|---|---|---|---|---|
| Առողջության կամավոր վերաապահովագրություն | 3,796,300 | 63,372 | 236,760 | - | **4,096,432** |
| Դժբախտ պատահարների ապահովագրություն | 55,781 | (11,963) | 51,193 | - | **95,011** |
| Ճանապարհորդության ապահովագրություն | 576 | 1,166 | 701 | - | **2,443** |
| Ավտոմեքենաների և դրանց օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն | 1,053,735 | 66,493 | 39,932 | - | **1,160,160** |
| Օդային տրանսպորտի կմախքի և ավիափոխադրողների պատասխանատվության ապահովագրություն | - | - | - | - | **-** |
| Բեռների ապահովագրություն | 63,537 | (57,532) | 4,463 | - | **10,468** |
| Գույքի ապահովագրություն | 90,442 | 17,352 | 25,265 | - | **133,059** |
| Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն | 4,185 | 4,870 | 14,641 | - | **23,696** |
| Եկամուտ դրամաշնորհներից և նվիրատվություններից | - | - | - | 179,676 | **179,676** |
| **Ընդամենը այլ եկամուտներ** | **5,064,556** | **83,758** | **372,955** | **179,676** | **5,700,945** |

| 2024թ. | Վերաապահովագրողի բաժինը կրած վնասներում և այլ ծախսերում | Վերաապահովագրության ձեռքբերումից առաջացող դրամական հոսքերի ամորտիզացիա | Վերաապահովագրողների բաժինը կրած վնասների համար պարտավորությունների փոփոխության մեջ | Այլ | **31 դեկտեմբերի 2024թ.** Վերաապահովագրողի կողմից փոխհատուցված գումարներ |
|---|---|---|---|---|---|
| Ճանապարհորդության ապահովագրություն | 114,820 | 38,581 | 17,192 | - | **170,593** |
| Դժբախտ պատահարների ապահովագրություն | 1,209,334 | 106,807 | 286,830 | - | **1,602,971** |
| Առողջության ապահովագրություն | 432,101 | (87,341) | 129,877 | - | **474,637** |
| Ավտոմեքենաների և դրանց օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն | - | 203 | - | - | **203** |
| Օդային տրանսպորտի կմախքի և ավիափոխադրողների պատասխանատվության ապահովագրություն | 467 | (2,961) | 55,683 | - | **53,189** |
| Բեռների ապահովագրություն | 229,617 | (8,419) | (9,421) | - | **211,777** |
| Գույքի ապահովագրություն | 3,289 | 4,419 | (10,207) | - | **(2,499)** |
| Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն | - | 388 | (2,855) | - | **(2,467)** |
| Եկամուտ դրամաշնորհներից և նվիրատվություններից | - | - | - | 120,583 | **120,583** |
| **Ընդամենը այլ եկամուտներ** | **1,989,628** | **51,677** | **467,099** | **120,583** | **2,628,987** |

## 7. Շահութահարկ

### Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ

Խումբը շահութահարկը վճարում է հայկական ընկերությունների համար կիրառելի 18% դրույքաչափով (2024թ-ին՝ 18%):

| | 2025թ. | 2024թ. |
|---|---|---|
| | հազ. դրամ | հազ. դրամ |
| Ընթացիկ հարկի ծախս | - | 11,596 |
| Հետաձգված հարկի վերականգնում | 88,557 | 120,627 |
| **Ընդամենը հարկային ծախս** | **88,557** | **132,223** |

| Արդյունավետ հարկային համաձայնեցում | 2025թ. | Արդյունավետ հարկային դրույքաչափ (%) | 2024թ. | Արդյունավետ հարկային դրույքաչափ (%) |
|---|---|---|---|---|
| Շահույթ նախքան հարկումը՝ համաձայն ՖՀՄՍ-ի | **(639,845)** | | **(914,640)** | |
| Շահութհարկ գործող դրույքաչափի կիրառմամբ | (115,172) | 18% | (164,635) | 18% |
| Արտարժույթի փոխարժեքի տարբերություն | (2,989) | (0%) | (10,681) | (1%) |
| (Չհարկվող եկամտի)/չնվազեցվող ծախսերի ազդեցությունը | 29,605 | 5% | 43,093 | 5% |
| **Շահութահարկի գծով ծախս և արդյունավետ հարկային դրույքաչափ** | **(88,557)** | **(14%)** | **(132,223)** | **(14%)** |

## 8. Ծախսեր (հազ. դրամ)

| | Ընդամենը | | Վաճառքի ինքնարժեք | | Վարչական | | Իրացման | | Այլ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2025 | 2024 | 2025 | 2024 | 2025 | 2024 | 2025 | 2024 | 2025 | 2024 |
| Վճարումներ աշխատակիցներին | 4,344,643 | 3,983,475 | 2,623,958 | 1,827,551 | 1,657,821 | 2,093,060 | 62,864 | 62,864 | - | - |
| Մաշվածություն (ամորտիզացիա) | 962,048 | 828,933 | 670,055 | 591,460 | 291,875 | 237,355 | 118 | 118 | - | - |
| Դեղորայք, բժշկ. պարագաներ, այլ նյութական ծախսեր | 580,238 | 404,870 | 580,238 | 404,870 | - | - | - | - | - | - |
| Վաճառված դեղորայքի ինքնարժեք | 191,899 | 237,482 | 191,899 | 237,482 | - | - | - | - | - | - |
| Գրասենյակային ծախսեր և կոմունալ ծառայություններ | 190,440 | 214,528 | 49,697 | 49,697 | 140,743 | 139,979 | - | - | - | 24,852 |
| Ընդմիջման ծախսեր | 147,371 | 110,480 | - | - | - | - | - | - | 147,371 | 110,480 |
| Եռակողմ համագործակցության համաձայնագրով նախատեսված ծախսեր | - | 74,545 | - | - | - | - | - | - | - | 74,545 |
| Արտաքին լաբորատոր ծառայություններ | 95,079 | 97,027 | 95,079 | 97,027 | - | - | - | - | - | - |
| Բանկային և ապահովագրական ծախսեր | 49,758 | 50,455 | - | - | 49,758 | 41,807 | - | - | - | 8,648 |
| Աուդիտի և խորհրդատվության ծախսեր | 21,389 | 61,469 | - | - | 43,989 | 35,758 | - | - | (22,600) | 25,711 |
| Մարքեթինգի և գովազդի ծախսեր | 98,204 | 114,761 | - | - | - | - | 49,102 | 33,100 | 49,102 | 81,661 |
| Օտարման ծախսեր | 8,437 | 27,440 | - | - | - | - | - | - | 8,437 | 27,440 |
| Նվիրաբերված ակտիվներ | 38,478 | 19,721 | - | - | - | - | - | - | 38,478 | 19,721 |
| Դեբիտորական պարտքերի պահուստներ | 10,356 | 12,591 | - | - | - | - | - | - | 10,356 | 12,591 |
| Գործուղման և ներկայացուցչական ծախսեր | 3,496 | 14,455 | - | - | 9,933 | 6,308 | - | - | (6,437) | 8,147 |
| Հարկային ծախսեր | 5,834 | 25,675 | 1,645 | 1,645 | 22,279 | 2,546 | - | - | (18,090) | 21,484 |
| Ճանապարհորդության ապահովագրություն | 19,958 | 323,408 | 19,958 | 323,408 | - | - | - | - | - | - |
| Դժբախտ պատահարների ապահովագրություն | 126,003 | 196,066 | 126,003 | 196,066 | - | - | - | - | - | - |
| Առողջության ապահովագրություն | 3,894,401 | 2,894,430 | 3,894,401 | 2,894,430 | - | - | - | - | - | - |
| Ավտոմեքենաների և դրանց օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն | 2,079,373 | 1,077,357 | 2,079,373 | 1,077,357 | - | - | - | - | - | - |
| Օդային տրանսպորտի կմախքի և ավիափոխադրողների պատասխանատվության ապահովագրություն | 137 | 735 | 137 | 735 | - | - | - | - | - | - |
| Բեռների ապահովագրություն | 8,116 | 73,029 | 8,116 | 73,029 | - | - | - | - | - | - |
| Գույքի ապահովագրություն | 244,368 | 340,896 | 244,368 | 340,896 | - | - | - | - | - | - |
| Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն | 13,296 | 9,801 | 13,296 | 9,801 | - | - | - | - | - | - |
| Վերաապահովագրության վճարների բաշխում | 7,931,389 | 5,350,386 | - | | 7,931,389 | 5,350,386 | - | | - | |
| Հիմնական միջոցների պահպանում | 75,962 | 45,055 | - | - | - | - | - | - | 75,962 | 45,055 |
| Հաղորդակցություն | 23,552 | 16,393 | - | - | - | - | - | - | 23,552 | 16,393 |
| Հիմնական միջոցների վաճառքից զուտ վնաս | 272 | 4,202 | - | - | - | - | - | - | 272 | 4,202 |
| Անվտանգություն | 1,674 | 3,427 | - | - | - | - | - | - | 1,674 | 3,427 |
| Անդամավճարներ | 5,380 | 5,677 | - | - | - | - | - | - | 5,380 | 5,677 |
| Բարեգործություն | 10,000 | 70 | - | - | - | - | - | - | 10,000 | 70 |
| Կարճաժամկետ և ցածր արժեք ունեցող ակտիվների վ արձակալության գծով ծախսեր | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| Այլ | 1,558,055 | 283,045 | 42,192 | 201 | 1,302,848 | 258,574 | (3,891) | 7,881 | 216,905 | 16,388 |
| Ընդամենը | **22,739,606** | 16,901,884 | **10,640,415** | **8,125,655** | **11,450,635** | **8,165,773** | **108,193** | **103,963** | **540,362** | **506,493** |

## 9. Հիմնական միջոցներ

| հազ. դրամ | Վարձակալված տարածքի բարելավում | Շենքեր | Հողա-տարածքներ | Բժշկական սարքավորումներ և գործիքներ | Համակարգիչներ և այլ սարքավորումներ | Կահույք և հարմարանքներ | Փոխադրա-միջոցներ | Այլ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ***Սկզբնական արժեք*** | | | | | | | | | |
| **Մնացորդը առ 1 հունվարի 2024թ.** | **459,814** | **1,076,286** | **10,307** | **1,815,001** | **442,005** | **136,879** | **135,688** | **48,872** | **4,124,851** |
| Ավելացումներ | 860,636 | 333,313 | - | 1,199,071 | 91,526 | 279,384 | 34,189 | 53,179 | **2,851,298** |
| Օտարումներ | (64,934) | - | - | (2,551) | (1,227) | (14,505) | (12,500) | - | **(95,718)** |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ.** | **1,255,516** | **1,409,599** | **10,307** | **3,011,520** | **532,305** | **401,758** | **157,377** | **102,051** | **6,880,433** |
| **Մնացորդը առ 1 հունվարի 2025թ.** | **1,255,516** | **1,409,599** | **10,307** | **3,011,520** | **532,305** | **401,758** | **157,377** | **102,051** | **6,880,433** |
| Ավելացումներ | 40,561 | - | - | 453,526 | 208,163 | 68,462 | - | 9,659 | **780,372** |
| Օտարումներ | (61,362) | - | - | (8,012) | (11,060) | (2,931) | - | - | **(83,365)** |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2025թ.** | **1,234,715** | **1,409,599** | **10,307** | **3,457,034** | **729,408** | **467,289** | **157,377** | **111,710** | **7,577,440** |
| ***Կուտակված մաշվածություն*** | | | | | | | | | |
| **Մնացորդը առ 1 հունվարի 2024թ.** | **26,309** | **126,123** | **-** | **939,651** | **194,855** | **54,048** | **7,009** | **17,808** | **1,365,803** |
| Տարվա մաշվածք | 47,238 | 810 | - | 365,267 | 97,745 | 32,337 | 18,938 | 947 | **563,283** |
| Օտարումներ | - | - | - | (1,804) | (117) | (2,390) | (2,113) | - | **(6,424)** |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ.** | **73,547** | **126,933** | **-** | **1,303,114** | **292,483** | **83,995** | **23,834** | **18,755** | **1,922,662** |
| **Մնացորդը առ 1 հունվարի 2025թ.** | **73,547** | **126,933** | **-** | **1,303,114** | **292,483** | **83,995** | **23,834** | **18,755** | **1,922,662** |
| Տարվա մաշվածք | 109,748 | - | - | 503,375 | 107,504 | 63,166 | 8,389 | 2,059 | **794,241** |
| Օտարումներ | (99) | - | - | (1,296) | (404) | (1,122) | (13) | - | **(2,934)** |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2025թ.** | **183,196** | **126,933** | **-** | **1,805,193** | **399,583** | **146,039** | **32,210** | **20,814** | **2,713,969** |
| ***Զուտ հաշվեկշռային արժեք*** | | | | | | | | | |
| Առ 31 դեկտեմբերի 2023թ. | **433,505** | **950,163** | **10,307** | **875,350** | **247,150** | **82,831** | **128,679** | **31,064** | **2,759,048** |
| Առ 31 դեկտեմբերի 2024թ. | **1,181,969** | **1,282,666** | **10,307** | **1,708,406** | **239,822** | **317,763** | **133,543** | **83,296** | **4,957,771** |
| **Առ 31 դեկտեմբերի 2025թ.** | **1,051,519** | **1,282,666** | **10,307** | **1,651,841** | **329,825** | **321,250** | **125,167** | **90,896** | **4,863,471** |

ա/ Ապահովություն

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1,902,458 հազար դրամ հաշվեկշռային արժեքով (2024թ-ին՝ 1,497,501 հազար դրամ) գույքը գրավադրված է բանկային վարկերի դիմաց:

## 10. Ոչ նյութական ակտիվներ

| հազ. դրամ | Ծրագրային ապահովում | Ընդամենը |
|---|---|---|
| *Սկզբնական արժեք* | | |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **184,993** | **184,993** |
| Ավելացումներ | 273,281 | 273,281 |
| Օտարումներ | (16,721) | (16,721) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ.** | **441,553** | **441,553** |
| Ավելացումներ | 252,191 | 252,191 |
| Օտարումներ | (11,692) | (11,692) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2025թ.** | **682,052** | **682,052** |
| *Ամորտիզացիա* | | |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **(49,796)** | **(49,796)** |
| Ամորտիզացիա | (40,110) | (40,110) |
| Օտարումներ | 16,720 | 16,720 |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ.** | **(73,186)** | **(73,186)** |
| Ամորտիզացիա | (92,070) | (92,070) |
| Օտարումներ | 11,636 | 11,636 |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2025թ.** | **(153,620)** | **(153,620)** |
| *Հաշվեկշռային արժեք* | | |
| **Առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **135,197** | **135,197** |
| **Առ 31 դեկտեմբերի 2024թ.** | **368,367** | **368,367** |
| **Առ 31 դեկտեմբերի 2025թ.** | **528,432** | **528,432** |

**Գուդվիլի գնահատում**

***Առ 31 դեկտեմբերի 2025թ.***

2025 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում «Արինտերլև» ՓԲԸ-ի՝ «Վարդանանց նորարարական բժշկության կենտրոն»-ի բաժնեմասի արժեքը որոշվել է զեղչված դրամական հոսքերի (DCF) մոդելի միջոցով՝ բիզնեսի փոխհատուցվող գումարը և «Ամբեր Կապիտալ»-ի 26.76% փոքրամասնության բաժնեմասի համամասնական արժեքը գնահատելու համար:

**Զեղչված դրամական հոսքերի կանխատեսումների համար կիրառվող հիմնական ենթադրություններ**

***(i) Զեղչման դրույք***

Կիրառվել է 15.28% (դրամով) հարկումից հետո անվանական զեղչի տոկոսադրույք: Տոկոսադրույքը ստացվել է ԱՄՆ դոլարով հիմնված WACC-ից՝ ճշգրտված Հայաստանի գնաճի դիֆերենցիալի համար և ներառում է երկրի ռիսկը, փոքր ընկերության համար կիրառվելիք չափի վճարը և ոլորտային լծակը: Կիրառվող 14.5-16.0% միջակայքը համարվում է ողջամիտ առողջապահական ծառայությունների մասնավոր մատակարարի համար:

***Վերջնական արժեքի աճի տեմպ***

2026-2031 թվականների դրամական հոսքերը էքստրապոլացվել են անժամկետ հիմունքով՝ օգտագործելով 2.0% անվանական երկարաժամկետ աճի տեմպ, որը համապատասխանում է գնաճին և չափավոր իրական աճին: Վերջնական արժեքը հաշվարկվել է Գորդոնի աճի մոդելի միջոցով և զեղչվել է մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:

***(ii) Բյուջեով նախատեսված EBITDA-ի մարժան***

Կանխատեսումները հիմնված էին պատմական ցուցանիշների և ղեկավարության ծրագրերի վրա:

Հասույթը, կանխատեսումների համաձայն, 2026 թվականի կաճի մինչև 7,771,657 հազ. դրամ 2031 թվականի, իսկ EBITDA մարժաները կբարելավվեն մինչև 17.8%՝ արդյունավետության աճի կայունացմանը զուգընթաց:

***(iii) Զգայունությունը ենթադրությունների փոփոխությունների նկատմամբ***

Զեղչի տոկոսադրույքի 0.5 տոկոսային կետով աճը կամ աճի տեմպի 0.5 տոկոսային կետով նվազումը կնվազեցնի ձեռնարկության արժեքը մոտավորապես 2-3%-ով: Հիմնավոր պարամետրերի սահմաններում ձեռնարկության արժեքը տատանվում է 6.5-ից մինչև 8.5 միլիարդ դրամ, ինչը ենթադրում է 5.1-ից մինչև 6.5 միլիարդ դրամի սեփական կապիտալ: Գնահատումը մնում է կայուն այս միջակայքերում՝ ցուցաբերելով չափավոր զգայունություն և ընդհանուր կայունություն:

## 11. Վարձակալություն

| <u>Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ</u> | **2025թ.**<br>**հազ. Դրամ** | **2024թ.**<br>**հազ. դրամ** |
|---|---|---|
| **Մնացորդն առ 1 հունվարի** | **2,130,467** | **1,735,862** |
| Ավելացումներ | 383,690 | 610,674 |
| Մաշվածություն | (533,662) | (216,069) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի** | **1,980,495** | **2,130,467** |

| <u>Վարձակալության գծով պարտավորություն</u> | **2025թ.**<br>**հազ. դրամ** | **2024թ.**<br>**հազ. դրամ** |
|---|---|---|
| **Մնացորդն առ 1 հունվարի** | **2,340,366** | **1,782,075** |
| Ավելացումներ | 174,828 | 629,420 |
| Տոկոսային ծախսեր | 233,837 | 233,837 |
| Վճարումներ | (322,327) | (304,966) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի** | **2,426,704** | **2,340,366** |

## 12. Հետաձգված հարկ

| հազ. դրամ | 1-հունվար-25թ. | (Դուրս գրված)/հաշվարկված շահույթի և վնասի հաշվին | 31-դեկտեմբեր-25թ. |
|---|---|---|---|
| **Ժամանակավոր տարբերությունների հարկային ազդեցությունը** | | | |
| Հիմնական միջոցներ | 167,846 | 21,267 | 189,113 |
| Արձակուրդի պահուստ | 27,539 | 17,354 | 44,893 |
| Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ | (296,686) | 6,746 | (289,940) |
| Վարձակալության պարտավորություն | 334,907 | 47,046 | 381,953 |
| Դրամական միջոցներ | (21) | (64) | (85) |
| Բանկային ավանդներ | (2,182) | (216) | (2,398) |
| Ներդրումային արժեթղթեր | (10,892) | (85) | (10,977) |
Տոկոսային եկամուտը կամ ծախսը ճանաչվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի համար գնահատված ապագա դրամական վճարումները կամ մուտքերը զեղչում է ճիշտ մինչև՝

- ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեք կամ
- ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեք:

Տոկոսային եկամուտը կամ ծախսը հաշվարկելիս արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի (եթե ակտիվը պարտքային առումով արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ: Այնուամենայնիվ, սկզբնական ճանաչումից հետո պարտքային առումով արժեզրկված դարձած ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվը դադարում է

պարտքային առումով արժեզրկված լինելուց, հաշվարկը կրկին իրականացվում է համախառն հիմունքով:

**(դ) Արտարժույթով գործառնություններ**

Արտարժույթով գործառնությունները վերահաշվարկվում են դրամի գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են դրամի այդ օրվա փոխարժեքով: Դրամային հոդվածների հետ կապված արտարժույթով գործառնությունների գծով օգուտը կամ կորուստը իրենից ներկայացնում է տարբերություն ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, ժամանակաշրջանի համար արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսների և վճարումների մասով ճշգրտված ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով վերահաշվարկված ֆունկցիոնալ արժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև:

Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործառնության ամսաթվի փոխարժեքով: Արտարժույթի վերափոխարկումից առաջացող փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

**(ե) Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ**

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտականությունները չափվում են առանց զեղչման և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելիս: Պարտավորությունը ճանաչվում է այն գումարի չափով, որն ակնկալվում է վճարել կարճաժամկետ դրամական պարգևավճարների տեսքով, եթե Խումբն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն այդ գումարը վճարել որպես անցյալ ծառայության արդյունք և կարող է արժանահավատորեն գնահատել պարտականությունը:

**(զ) Շահութահարկ**

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ուղղակիորեն սեփական կապիտալում կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված հոդվածներին:

***(i) Ընթացիկ հարկ***

Ընթացիկ հարկը հարկի այն գումարն է, որն ակնկալվում է վճարել կամ ստանալ տարվա հարկվող եկամտի կամ վնասի գծով՝ կիրառելով հարկի այն դրույքաչափերը, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և ներառում է նախորդ տարիների համար վճարման ենթակա հարկի գծով ճշգրտումները:

***(ii) Հետաձգված հարկ***

Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական հաշվետվություններում արտացոլվելու նպատակով որոշվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկը չի ճանաչվում.

- այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման հետ կապված այն գործարքում, որը չի հանդիսանում բիզնեսի միավորում և որը ազդեցություն չունի հաշվապահական կամ հարկվող շահույթի կամ վնասի վրա,
- այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք վերաբերում են դուստր կազմակերպություններում, ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում կատարվող ներդրումներին, այնքանով որքանով Խումբը կարող է վերահսկել ժամանակավոր տարբերությունների հակադարձման ժամկետները, և հավանական է, որ դրանք չեն հակադարձվի մոտ ապագայում, և

– այն հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են գուդվիլի սկզբնական ճանաչման արդյունքում:

Հետաձգված հարկային ակտիվներ ճանաչվում են չօգտագործված հարկային վնասների, չօգտագործված հարկային զեղչերի և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որով հավանական է, որ Խումբն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Ապագա հարկվող շահույթի գումարը որոշվում է հակադարձման ենթակա համապատասխան հարկվող ժամանակավոր տարբերությունների գումարի հիման վրա: Եթե հարկվող ժամանակավոր տարբերությունների գումարը բավարար չէ հետաձգված հարկային ակտիվն ամբողջությամբ ճանաչելու համար, դիտարկվում է գոյություն ունեցող ժամանակավոր տարբերությունների մարումների մասով ճշգրտված ապագա հարկվող շահույթը, որը որոշվում է Խմբի առանձին դուստր կազմակերպությունների գործարար ծրագրերի հիման վրա: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այն չափով, որով այլևս հավանական չէ, որ համապատասխան հարկային օգուտը կիրացվի: Այս նվազեցումները վերականգնվում են, եթե մեծանում է ապագա հարկվող շահույթ ստանալու հավանականությունը:

Չճանաչված հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և ճանաչվում են այնքանով, որքանով հավանական է, որ առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել այդ ակտիվները:

Հետաձգված հարկը չափվում է օգտագործելով հարկի այն դրույքաչափերը, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկի չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կառաջանան կախված այն եղանակից, որով Խումբը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե Խումբը տվյալ պահին ունի ընթացիկ հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցելու իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք և հետաձգված հարկային ակտիվները և հետաձգված հարկային պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից կամ տարբեր հարկատուներից, որոնք մտադիր են կամ մարել ընթացիկ հարկային պարտավորությունները և ակտիվներ զուտ հիմունքով, կամ միաժամանակ իրացնել հարկային ակտիվները և մարել հարկային պարտավորությունները:

### (է) Պաշարներ

Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների ինքնարժեքը որոշվում է «առաջինը մուտք՝ առաջինը ելք» սկզբունքով և ներառում է պաշարների ձեռքբերման, արտադրության կամ վերամշակման ծախսումները և պաշարները ներկայիս վայր և առկա վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները: Արտադրված պաշարների և անավարտ արտադրանքի դեպքում սկզբնական արժեքը ներառում է արտադրական վերադիր ծախսումների համապատասխան մասը՝ հիմք ընդունելով արտադրական նորմատիվային հզորությունը:

Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ գնահատված ծախսումները:

### (ը) Հիմնական միջոցներ

#### *(i) Ճանաչում և չափում*

Հիմնական միջոցների միավորները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկումից կորուստները:

Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռքբերմանն ուղղակի վերագրելի ծախսումները: Սեփական ուժերով կառուցված ակտիվների սկզբնական արժեքը ներառում է նյութերի արժեքը, ուղղակի աշխատուժի գծով ծախսումները, ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած այլ ծախսումները, ակտիվի ապատեղակայման և քանդման ծախսումները, տեղանքի վերականգնման ծախսումները, ինչպես նաև կապիտալացված փոխառության ծախսումները: Ձեռք բերված համակարգչային ծրագիրը, որը հանդիսանում է համապատասխան սարքավորման ֆունկցիոնալության անբաժանելի մաս, կապիտալացվում է որպես սարքավորման մաս:

Եթե հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող նշանակալի մասերից, այդ մասերը հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (հիմնական բաղադրիչներ):

Հիմնական միջոցի միավորի օտարումից ստացված օգուտը և վնասը որոշվում է համեմատելով օտարումից ստացված մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ և ճանաչվում են զուտ հիմունքով «Այլ եկամուտ/Այլ ծախս» հոդվածում՝ շահույթում կամ վնասում:

### *(ii) Հետագա ծախսումներ*

Հետագա ծախսումները կապիտալացվում են, երբ հավանական է, որ Խումբ կիոսեն այդ ծախսումների հետ կապված ապագա տնտեսական օգուտները:

Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

### *(iii) Մաշվածություն*

Հիմնական միջոցների միավորների մաշվածության հաշվարկը սկսվում է դրանց տեղադրման և շահագործման համար պատրաստ լինելու պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման համար պատրաստ լինելու պահից: Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա՝ հանած դրա մնացորդային արժեքը:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը: Վարձակալված ակտիվների գծով մաշվածությունը հաշվարկվում է վարձակալության ժամկետից և ակտիվի օգտակար ծառայության ժամկետից նվազագույնի ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտնի է, որ Խումբը ձեռք կբերի ակտիվի սեփականության իրավունքը վարձակալության ժամկետի վերջում: Հողատարածքի գծով մաշվածություն չի հաշվարկվում:

Ստորև ներկայացված են հիմնական միջոցների խոշոր բաղկացուցիչների օգտակար ծառայության գնահատված ժամկետներն հաշվետու և համադրելի ժամանակաշրջանների համար.

| | |
|---|---|
| – շենքեր | 40 տարի |
| – ցանցային ենթակառուցվածք | 5-25 տարի |
| – սարքավորումներ | 1-10 տարի |
| – փոխադրամիջոցներ | 5 տարի |
| – տնտեսական միջոցներ | 1-5 տարի |
| – վարձակալված հիմնական միջոցների բարելավումներ | վարձակալության ժամկետից և 20 տարի ժամկետից նվազագույնը |

Մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

**(թ) Ոչ նյութական ակտիվներ**

***(i) Անորոշ օգտակար ծառայության ժամկետով ոչ նյութական ակտիվներ***

Ռադիոհաճախականության օգտագործման համար վճարվող կանխավճարները դասակարգվում են որպես անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ոչ նյութական ակտիվներ: Այս ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով և տարեկան կտրվածքով վերանայվում են արժեզրկման հայտանիշների համար:

***(ii) Այլ ոչ նյութական ակտիվներ***

Խմբի կողմից ձեռքբերված ոչ նյութական ակտիվները, որոնք ունեն օգտակար ծառայության սահմանափակ ժամկետ, չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստները:

***(iii) Հետագա ծախսումներ***

Հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ ավելացնում են այն առանձին ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտները, որին վերաբերում են: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ Խմբի ներսում ստեղծված գուդվիլը և ֆիրմային անվանումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

***(iv) Ամորտիզացիա***

Ամորտիզացիան հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի գծով՝ հանած դրա մնացորդային արժեքը:
Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում վերջինիս օգտագործման համար պիտանի դառնալու ամսաթվից, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը:

Օգտակար ծառայության գնահատված ժամկետներն ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար հետևյալն են.

| | |
|---|---|
| – լիցենզիաներ և ապրանքային նշաններ | 6-16 տարի |
| – բիլինգային համակարգ | 10 տարի |
| – այլ համակարգչային ծրագրեր | 1-10 տարի |
| – հաճախորդների բազա | 8 տարի |
| – տարրողունակության ՕԱԻ | 5-15 տարի |

Ամորտիզացիայի հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

**(ժ) Ֆինանսական գործիքներ**

***(i) Ճանաչում և սկզբնական չափում***

Առևտրային դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են սկզբնավորման ժամանակ: Մյուս բոլոր ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են, երբ Խումբը դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվը (եթե այն առևտրական դեբիտորական պարտք չէ, որը չի պարունակում նշանակալի ֆինանսավորման բաղադրիչ) կամ ֆինանսական պարտավորությունը սկզբնապես չափվում է իրական արժեքով՝ գումարած, շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չչափվող հոդվածի դեպքում, գործարքի գծով այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը: Նշանակալի ֆինանսավորման բաղադրիչ չպարունակող առևտրային դեբիտորական պարտքը սկզբնապես չափվում է գործարքի գնով:

*(ii) Դասակարգում և հետագա չափում*

**Ֆինանսական ակտիվներ**

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը դասակարգում է որպես ամորտիզացված արժեքով չափվող, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող՝ պարտքային գործիքներում ներդրումների համար, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող՝ բաժնային գործիքներում ներդրումների համար, կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ Խումբը փոխում է ակտիվների կառավարման իր բիզնես մոդելը, որի դեպքում փոփոխության ազդեցությունը կրող բոլոր ֆինանսական ակտիվները վերադասակարգվում են բիզնես մոդելի փոփոխությանը հաջորդող առաջին հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրը:

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է պահել ակտիվները պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու համար և,
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Պարտքային գործիքում ներդրումը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն իրագործվում է թե՛ պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու և թե՛ ֆինանսական ակտիվները վաճառելու միջոցով և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Բոլոր ֆինանսական ակտիվները, որոնք չեն դասակարգվում որպես ամորտիզացված արժեքով չափվող կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող, ինչպես ներկայացված է վերը, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով: Սկզբնական ճանաչման պահին Խումբը կարող է անշրջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որն այլապես բավարարում է ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվելու պահանջները, որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե դա կվերացնի կամ էականորեն կնվազեցնի հաշվառման անհամապատասխանությունը, որը հակառակ դեպքում կառաջանար:

**Ֆինանսական ակտիվներ. Բիզնես մոդելի գնահատում**

Խումբը պորտֆելի մակարդակով գնահատում է այն բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակում պահվում է ակտիվը, քանի որ այս գնահատումը լավագույնս արտացոլում է գործունեությունը կառավարելու և ղեկավարությանը տեղեկատվություն տրամադրելու եղանակը: Այդ դեպքում դիտարկվում է հետևյալ տեղեկատվությունը.

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը և նպատակները և այդ քաղաքականության աշխատանքը գործնականում: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարության նպատակն է ապահովել պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի ստացումը, ապահովել տոկոսային որոշակի եկամտաբերության մակարդակը, համապատասխանեցնել ֆինանսական ակտիվների ժամկետներն այն պարտավորությունների ժամկետներին, որոնք ֆինանսավորում են այդ ակտիվներով, կամ դրամական միջոցների ակնկալվող արտահոսքին, կամ իրացնել դրամական հոսքերն ակտիվների վաճառքի միջոցով:
- ինչպես է գնահատվում պորտֆելի կատարողականը և ինչպես է այդ տեղեկատվությունը հաղորդվում Խմբի ղեկավարությանը:
- բիզնես մոդելի (և այդ բիզնես մոդելում պահվող ֆինանսական ակտիվների) վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը:
- ինչպես են վարձատրվում բիզնեսի ղեկավարները (օրինակ՝ արդյոք վարձատրությունը հիմնված է կառավարվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի, թե՝ հավաքված դրամական հոսքերի վրա):
- նախորդ ժամանակաշրջաններում ֆինանսական ակտիվների վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և ապագա վաճառքների հետ կապված ակնկալիքները:

Ֆինանսական ակտիվների փոխանցումը երրորդ կողմերին այնպիսի գործարքներում, որոնք չեն բավարարում ապաճանաչման պայմանները, չի դիտարկվում որպես վաճառք այս նպատակի համար, և Խումբը շարունակում է ճանաչել այդ ակտիվները:

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են առևտրային նպատակով կամ կառավարվում են և որոնց արդյունքը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

**Ֆինանսական ակտիվներ. Գնահատում, թե արդյոք պայմանագրային դրամական հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ**

Այս գնահատման նպատակների համար «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեք սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» բաղկացած է փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի և ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի) համար փոխհատուցումից, ինչպես նաև շահույթի մարժայից:

Գնահատելիս, թե արդյոք պայմանագրային դրամական հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ, Խումբը դիտարկում է գործիքի պայմանագրային պայմանները: Այս դեպքում գնահատվում է, թե արդյոք ֆինանսական ակտիվը պարունակում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է այնպես փոխել պայմանագրային դրամական հոսքերի ժամկետները կամ գումարը, որ ֆինանսական ակտիվը չբավարարի այդ պայմանը: Այս գնահատումն իրականացնելիս Խումբը դիտարկում է հետևյալը.

- պայմանական դեպքերը, որոնք կարող են փոխել դրամական հոսքերի գումարը կամ ժամկետները,
- վաղաժամ մարման և ժամկետի երկարաձգման պայմանները,
- պայմանները, որոնք սահմանափակում են Խմբի պահանջը որոշակի ակտիվներից առաջացող դրամական հոսքերով (օրինակ՝ առանց ռեգրեսի իրավունքի ֆինանսական ակտիվ):

Վաղաժամ մարման պայմանը համապատասխանում է միայն մայր գումարի և տոկոսների վճարում հանդիսանալու չափանիշին, եթե կանխավճարի գումարն ըստ էության իրենից ներկայացնում է մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսների չվճարված գումարները, որոնք կարող են ներառել պայմանագրի վաղաժամ դադարեցման համար ողջամիտ լրացուցիչ փոխհատուցում:

**Ֆինանսական ակտիվներ. Հետագա չափում, օգուտներ և վնասներ**

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ամորտիզացված արժեքը նվազեցվում է արժեզրկումից կորուստների չափով: Տոկոսային եկամուտը,

փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտը և կորուստը և արժեզրկումը ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

**Ֆինանսական պարտավորություններ. Դասակարգում, հետագա չափում, օգուտներ և վնասներ**

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես ամորտիզացված արժեքով չափվող և հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Տոկոսային ծախսը և փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտը և կորուստը ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող ցանկացած օգուտ կամ կորուստ նույնպես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Այլ ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և փոխառությունները, բանկային օվերդրաֆտները և առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը:

***(iii) Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների փոփոխում***

**Ֆինանսական ակտիվներ**

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոփոխվում են, Խումբը գնահատում է, թե արդյոք փոփոխված ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են («նշանակալի փոփոխություն»), ապա սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է և ճանաչվում է նոր ֆինանսական ակտիվ՝ իրական արժեքով:

Խումբն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում, այսինքն, գնահատում է, թե արդյոք սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբերվում են փոփոխված կամ փոխարինված ֆինանսական ակտիվի դրամական հոսքերից: Խումբը գնահատում է փոփոխության նշանակալի լինելը դիտարկելով քանակական և որակական գործոնները հետևյալ հերթականությամբ՝ որակական գործոններ, քանակական գործոններ, որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցություն: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են, ապա սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս գնահատումն իրականացնելիս Խումբը կիրառում է ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման համար օգտագործված ուղեցույցին նմանատիպ ուղեցույց:

Խումբը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական ակտիվի արժույթի փոփոխություն,
- գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխություն,
- ֆինանսական ակտիվի պայմանների այնպիսի փոփոխություն, որը հանգեցնում է միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ հանդիսանալու չափանիշի հետ անհամապատասխանության (օրինակ՝ փոխարկման պայմանի ներառում):

Եթե ամորտիզացված արժեքով հաշվառվող փոփոխված ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր չեն, փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը: Այս դեպքում, Խումբը վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը և համախառն հաշվեկշռային արժեքի ճշգրտումից առաջացող գումարը ճանաչում է որպես փոփոխությունից օգուտ կամ կորուստ՝ շահույթի կամ վնասի կազմում: Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը վերահաշվարկվում է որպես վերաբանակցված կամ փոփոխված պայմանագրային դրամական հոսքերի ներկա արժեք, որոնք զեղչվում են ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով: Ցանկացած կրած ծախսում կամ վճար ճշգրտում է փոփոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում է փոփոխված ֆինանսական ակտիվի մնացած ժամկետի ընթացքում:

**Ֆինանսական պարտավորություններ**

Խումբն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոփոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պարտավորության դրամական հոսքերը նշանակալիորեն

տարբեր են: Այս դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության արժեքի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Եթե փոփոխությունը (կամ փոխանակումը) չի հանգեցնում ֆինանսական պարտավորության ապաճանաչմանը, Խումբը կիրառում է այն հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, համաձայն որի ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է, երբ փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչման, այսինքն, Խումբը ճանաչում է փոփոխության (կամ փոխանակման) արդյունքում առաջացող ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի ճշգրտում շահույթում կամ վնասում՝ փոփոխության (կամ փոխանակման) ամսաթվի դրությամբ:

Գոյություն ունեցող ֆինանսական պարտավորությունների դրամական հոսքերի փոփոխությունները չեն դիտարկվում որպես փոփոխություն, եթե բխում են գոյություն ունեցող պայմանագրային պայմաններից, օրինակ՝ բանկերի կողմից ֆիքսված տոկոսադրույքների փոփոխությունները ՀՀ ԿԲ-ի հիմնական տոկոսադրույքի փոփոխությունների արդյունքում, եթե վարկային պայմանագրով բանկերն իրավունք ունեն կատարել նման փոփոխություն և Խումբը հնարավորություն ունի կամ համաձայնվել վերանայված տոկոսադրույքի հետ, կամ մարել վարկն անվանական արժեքով՝ առանց տուգանքի: Տոկոսադրույքի փոփոխությունը մինչև ընթացիկ շուկայական տոկոսադրույքը Խումբը հաշվառում է կիրառելով լողացող տոկոսադրույքով ֆինանսական գործիքների համար գործող ուղեցույցը: Սա նշանակում է, որ արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է առաջընթաց:

Խումբն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում՝ դիտարկելով որակական գործոնները, քանակական գործոնները և որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցությունը: Խումբը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է ելնելով հետևյալ որակական գործոններից.

- ֆինանսական պարտավորության արժույթի փոփոխություն,
- գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխություն,
- փոխարկման հնարավորության ներառում,
- ֆինանսական պարտավորության ստորադասության փոփոխություն:

Քանակական գնահատման համար պայմանները նշանակալիորեն տարբեր են, եթե նոր պայմաններով դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքը, ներառյալ վճարված վճարները զուտ ստացված վճարներով և զեղչված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, նվազագույնը 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացած դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքից: Եթե պարտքային գործիքների փոխանակումը կամ պայմանների փոփոխումը հաշվառվում է որպես մարում, ապա ցանկացած կրած ծախսում կամ վճար ճանաչվում է որպես մարումից օգուտի կամ կորստի մաս: Եթե պարտքային գործիքների փոխանակումը կամ պայմանների փոփոխումը չի հաշվառվում է որպես մարում, ապա ցանկացած կրած ծախսում կամ վճար ճշգրտում է պարտավորության հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում փոփոխված պարտավորության մնացորդային ժամանակահատվածում:

### *(iv) Ապաճանաչում*

**Ֆինանսական ակտիվներ**

Խումբն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է դրամական հոսքեր ստանալու իրավունքներն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում Խումբը ոչ փոխանցում, ոչ էլ պահպանում է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Խումբն իրականացնում է գործարքներ, որոնց շրջանակում փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված կամ բոլոր, կամ, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները: Նման դեպքերում փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում:

**Ֆինանսական պարտավորություններ**

Խումբն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունն այն դեպքում, երբ իր պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են: Խումբը նաև ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոփոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պարտավորությունից առաջացող դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են, որի դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով:

Ֆինանսական պարտավորության ապաճանաչման ժամանակ մարված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման (ներառյալ՝ փոխանցված ցանկացած ոչ դրամային ակտիվները կամ ստանձնած պարտավորությունները) միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

**Տոկոսադրույքի հենանիշի բարեփոխում**

Երբ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության պայմանագրային դրամական հոսքերի որոշման հիմքը փոխվել է տոկոսադրույքի հենանիշի բարեփոխման արդյունքում, Խումբը թարմացրել է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքը՝ արտացոլելու համար բարեփոխմամբ պահանջվող փոփոխությունը: Պայմանագրային դրամական հոսքերի որոշման հիմքի փոփոխությունը պահանջվում է տոկոսադրույքի հենանիշային բարեփոխմամբ, եթե առկա են հետևյալ պայմանները.

- փոփոխությունն անհրաժեշտ է որպես բարեփոխումների անմիջական հետևանք, և
- պայմանագրային դրամական հոսքերի որոշման նոր հիմքը տնտեսապես համարժեք է նախորդ հիմքին /փոփոխությունից անմիջապես առաջ/:

Երբ փոփոխություններ են կատարվել ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության մեջ՝ ի լրումն տոկոսադրույքի հենանիշային բարեփոխմամբ պահանջվող դրամական միջոցների պայմանագրային հոսքերի որոշման հիմքի փոփոխության, Խումբը նախ թարմացրեց ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքը՝ արտացոլելու համար բարեփոխմամբ պահանջվող փոփոխությունը: Դրանից հետո Խումբը կիրառեց հաշվապահական հաշվառման քաղաքականությունը՝ լրացուցիչ փոփոխությունների փոփոխման համար:

*(v) Հաշվանցում*

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են և ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ներկայացվում է զուտ գումարն այն և միայն այն դեպքում, երբ Խումբը տվյալ պահին ունի գումարները հաշվանցելու իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք և մտադիր է կամ հաշվարկն իրականացնել զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

**(ի) Բաժնետիրական կապիտալ**

*Սովորական բաժնետոմսեր*

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերի և բաժնետոմսերի օպցիոնների թողարկմանն ուղղակիորեն վերագրվող հավելյալ ծախսումները ճանաչվում են որպես սեփական կապիտալից նվազեցում՝ առանց որևէ հարկային ազդեցությունների:

**(լ) Արժեզրկում**

***(i) Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ***

*Ֆինանսական գործիքներ և պայմանագրի գծով ակտիվներ*

Խումբը ճանաչում է կորստի պահուստ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից ակնկալվող պարտքային կորուստների գծով: Խմբային հիմունքով գնահատվող առևտրային դեբիտորական պարտքերի գծով կորստի պահուստը միշտ չափվում է ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով:

Երբ Խումբը որոշում է, թե արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր և երբ գնահատում է ակնկալվող պարտքային կորուստները, այն դիտարկում է ողջամիտ և հիմնավորված տեղեկատվությունը, որը տեղին է և հասանելի առանց անհարկի ծախսումների կամ ջանքերի: Գնահատումը ներառում է քանակական և որակական տվյալները, ինչպես նաև Խմբի անցյալ ժամանակաշրջանների փորձի և պարտքի հիմնավորված գնահատման վրա հիմնված վերլուծությունը և ապագայամետ տեղեկատվությունը:

Խումբը ենթադրում է, որ տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկի նշանակալի աճ, եթե այն ավելի քան 30 օր ժամկետանց է:
Խումբը համարում է, որ ֆինանսական ակտիվի գծով տեղի է ունեցել պարտազանցում, եթե:

- հավանական չէ, որ փոխառուն ամբողջությամբ կկատարի պարտքի հետ կապված իր պարտականությունները, եթե Խումբը չձեռնարկի այնպիսի գործողություններ, ինչպիսին գրավի իրացումն է (վերջինիս առկայության դեպքում), կամ
- ֆինանսական ակտիվն ավելի քան 90 օր ժամկետանց է:

Ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներն այն ակնկալվող պարտքային կորուստներն են, որոնք առաջանում են բոլոր հնարավոր պարտազանցման դեպքերից ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում:

12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են ակնկալվող պարտքային կորուստների այն մասը, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո հաջորդող 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերից (կամ ավելի կարճ ժամկետում, եթե ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետը պակաս է 12 ամսից):

Առավելագույն ժամկետը, որը դիտարկվում է ակնկալվող պարտքային կորուստները չափելիս, պայմանագրի առավելագույն ժամկետն է, որի ընթացքում Խումբը ենթարկվում է պարտքային ռիսկին.

*Ակնկալվող պարտքային կորուստների չափում*

Ակնկալվող պարտքային կորուստները ֆինանսական գործիքի պարտքային կորուստների հավանականությամբ կշռված գնահատականն են: Պարտքային կորուստները չափվում են որպես բոլոր դրամական պակասորդների ներկա արժեք (պայմանագրին համապատասխան Խմբին հասանելիք դրամական հոսքերի և Խմբի կողմից ակնկալվող ստացվելիք դրամական հոսքերի միջև տարբերություն):

Ակնկալվող պարտքային կորուստները զեղչվում ֆինանսական ակտիվի արդյունավետ տոկոսադրույքով:

*Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ*

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Խումբը գնահատում է ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները պարտքային առումով արժեզրկված լինելու տեսանկյունից: Ֆինանսական ակտիվը պարտքային առումով արժեզրկված է, երբ տեղի են ունեցել մեկ կամ մի քանի դեպքեր, որոնք բացասական ազդեցություն ունեն այդ ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական հոսքերի վրա:

Ֆինանսական ակտիվի պարտքային առումով արժեզրկված լինելու ապացույցներից են հետևյալ դեպքերի վերաբերյալ դիտելի տվյալները.

- փոխառուի կամ թողարկողի նշանակալի ֆինանսական դժվարությունները,
- պայմանագրի խախտումը, ինչպիսին է՝ պարտազանցումը կամ ավելի քան 90 օր ժամկետանց դառնալը,
- Խմբի կողմից փոխառության կամ փոխատվության պայմանների այնպիսի վերանայումը, որը Խումբն այլ պայմաններում չէր դիտարկի,
- հավանականությունը, որ հաճախորդը կսնանկանա կամ այլ կերպ ֆինանսապես կվերակազմակերպվի:

**Ակնկալվող պարտքային կորուստների ներկայացումը ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում**

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով կորստի պահուստը նվազեցվում է այդ ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից:

*Դուրսգրում*

Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը դուրս է գրվում, երբ Խումբը չունի ֆինանսական ակտիվն ամբողջությամբ կամ դրա մի մասը փոխհատուցելու հիմնավոր ակնկալիք: Խումբը չի ակնկալում դուրսգրված գումարների էական փոխհատուցում: Այնուամենայնիվ, դուրսգրված ֆինանսական ակտիվները կարող են դեռևս հանդիսանալ կատարողական գործողությունների առարկա՝ հասանելի գումարների փոխհատուցման հետ կապված Խմբի ընթացակարգերի հետ համապատասխանությունն ապահովելու համար:

***(ii) Ոչ ֆինանսական ակտիվներ***

Խմբի ոչ ֆինանսական ակտիվների, բացառությամբ պաշարների և հետաձգված հարկային ակտիվների, հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ որոշելու համար, թե արդյոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված համարվել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ առկա է, ապա գնահատվում են ակտիվի փոխհատուցվող գումարը: Գուդվիլի և օգտակար ծառայության անսահմանափակ ժամկետ ունեցող կամ շահագործման համար դեռ ոչ պիտանի ոչ նյութական ակտիվների համար փոխհատուցվող գումարը գնահատվում է յուրաքանչյուր տարի նույն ժամանակ:

Արժեզրկման ստուգման նպատակով ակտիվները, որոնց արժեզրկումը հնարավոր չէ գնահատել անհատական հիմունքով, խմբավորվում են ակտիվների փոքրագույն խմբերի, որոնք շարունակական օգտագործման արդյունքում առաջացնում են այլ ակտիվներից կամ ակտիվների խմբերից կամ դրամաստեղծ միավորից մեծապես անկախ դրամական միջոցների ներհոսքեր:
Գուդվիլի արժեզրկման ստուգման նպատակով՝ դրամաստեղծ միավորները, որոնց բաշխվել է գուդվիլը, միավորվում են այնպես, որպեսզի արժեզրկման ստուգման մակարդակն արտացոլի այն նվազագույն մակարդակը, որում ներքին կառավարման նպատակներով գուդվիլը ենթարկվում է մոնիտորինգի: Բիզնեսի միավորման արդյունքում ձեռքբերված գուդվիլը բաշխվում է դրամաստեղծ միավորների այն խմբերին, որոնք ակնկալվում է, որ օգուտներ կստանան բիզնեսի միավորման սիներգիաներից:

Ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը որոշվում է որպես հետևյալ երկու մեծություններից առավելագույնը՝ օգտագործման արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը զեղչվում են մինչև վերջիններիս ներկա արժեքը՝ օգտագործելով մինչև հարկումը զեղչման այն դրույքը, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի տվյալ շուկայի ներկա գնահատականը և այդ ակտիվին կամ դրամաստեղծ միավորին բնորոշ ռիսկերը: Արժեզրկումից կորուստ ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա գնահատված փոխհատուցվող գումարը:

Արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Դրամաստեղծ միավորների գծով ճանաչված արժեզրկումից կորուստը բաշխվում է այնպես, որ նախ նվազեցվի դրամաստեղծ միավորին (կամ դրամաստեղծ միավորների խմբին) բաշխված գուդվիլի հաշվեկշռային արժեքը և, այնուհետև, այդ դրամաստեղծ միավորի (դրամաստեղծ միավորների խմբի) կազմի մեջ մտնող ակտիվների հաշվեկշռային արժեքները՝ համամասնորեն:

Գուդվիլի գծով արժեզրկումից կորուստը չի հակադարձվում: Այլ ակտիվների հետ կապված նախորդ ժամանակաշրջաններում ճանաչված արժեզրկումից կորուստը գնահատվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, պարզելու համար, թե արդյոք գոյություն ունի որևէ հայտանիշ ըստ որի արժեզրկումից կորուստը նվազել է կամ այլևս գոյություն չունի: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է այն դեպքում, եթե տեղի է ունեցել փոփոխություններ փոխհատուցվող գումարը որոշելիս օգտագործված գնահատականներում: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այնքանով, որքանով ակտիվի հաշվեկշռային արժեքը չի գերազանցում այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինի (առանց համապատասխան մաշվածության կամ ամորտիզացիայի), եթե այդ ակտիվի գծով արժեզրկումից կորուստ ճանաչված չլինի:

**(խ) Պահուստներ**

Պահուստը ճանաչվում է, երբ Խումբը՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, ունի ընթացիկ իրավական կամ կառուցողական պարտավորություն, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Պահուստները որոշվում են ակնկալվող ապագա դրամական հոսքերը զեղչելով հարկումից առաջ այն դրույքաչափով, որն արտացոլում է տվյալ շուկայում փողի ժամանակային արժեքը և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերը: Զեղչի ծախսագրումը ճանաչվում է որպես ֆինանսական ծախս:

***Տեղանքի վերականգնում***

Կիրառելի օրենսդրական պահանջների համաձայն՝ տեղադրված ցանցային հարմարանքների համար վարձակալված տարածքի վերականգնման գծով պահուստը ճանաչվում է հարմարանքների տեղադրման պահին:

**(ծ) Վարձակալություն**

Պայմանագրի սկզբում Խումբը գնահատում է, արդյոք պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն: Պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն, եթե այդ պայմանագրով հատուցման դիմաց՝ որպես փոխանակում որոշակի ժամանակահատվածի ընթացքում փոխանցվում է որոշակիացված ակտիվի օգտագործման հսկողության իրավունքը:

***Խումբը՝ որպես վարձակալ***

Վարձակալության բաղադրիչ պարունակող պայմանագրի մեկնարկին կամ փոփոխության դեպքում Խումբը վերագրում է պայմանագրում սահմանված հատուցումը վարձակալության յուրաքանչյուր բաղադրիչին՝ հիմք ընդունելով վարձակալության բաղադրիչի առանձին գինը:
Խումբը ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը սկզբնապես չափվում է սկզբնական արժեքով, որը ներառում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական գումարը՝ ճշգրտված վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարների մասով, գումարած կրած սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումները և հիմքում ընկած ակտիվի ապատեղակայման և քանդման, կամ վերջինիս վերականգնման, կամ դրա զբաղեցրած տեղանքի վերականգնման գնահատված ծախսումները՝ հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսումները:
Հետագայում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է գծային հիմունքով՝ վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև ժամկետի ավարտը, եթե վարձակալությամբ Խմբին չի փոխանցվում հիմքում ընկած ակտիվի սեփականության իրավունքը վարձակալության ժամկետի ավարտին, կամ եթե ակտիվի օգտագործման իրավունքի արժեքը չի արտացոլում, որ Խումբը կիրագործի գնման օպցիոնը: Այդ դեպքում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է հիմքում ընկած ակտիվի օգտակար ծառայության ընթացքում, որը որոշվում է նույն հիմունքով, որը կիրառվում հիմնական միջոցների համար: Բացի այդ, օգտագործման իրավունքի ձևով ակտիվը պարբերաբար նվազեցվում է արժեզրկումից կորուստների չափով, վերջիններիս առկայության

դեպքում, և ճշգրտվում է վարձակալության գծով պարտավորության որոշ վերաչափումների մասով:
Վարձակալության գծով պարտավորությունը սկզբնապես չափվում է այն վարձավճարների ներկա արժեքով, որոնք չեն վճարվել մեկնարկի ամսաթվին՝ զեղչված վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքով, կամ Խմբի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքով, եթե այդ դրույքը չի կարելի հեշտությամբ որոշել: Որպես կանոն, Խումբը որպես զեղչման դրույք կիրառում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Խումբը որոշում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը, հիմք ընդունելով տարբեր արտաքին ֆինանսական աղբյուրներից ստացված տոկոսադրույքները, և կատարում է որոշ ճշգրտումներ արտացոլելու համար վարձակալության պայմանները և վարձակալված ակտիվի տեսակը:
Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվում են հետևյալ վարձավճարները.

- հաստատուն վճարումները, ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումները,
- վարձակալության փոփոխուն վճարումները, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, և որոնք սկզբնապես չափվել են՝ կիրառելով մեկնարկի ամսաթվին գործող ինդեքսը կամ դրույքը,
- գումարները, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո և
- գնման օպցիոնի իրագործման գինը, եթե Խումբը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ օպցիոնը, վարձավճարներն օպցիոնով նախատեսված նորացման ժամանակաշրջանի համար, եթե Խումբը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ երկարաձգման օպցիոնը, ինչպես նաև վարձակալությունը դադարեցնելու հետ կապված տուգանքները, եթե Խումբը խելամտորեն համոզված է, որ վաղաժամ չի դադարեցնի վարձակալությունը:

Վարձակալության գծով պարտավորությունը չափվում է ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն վերաչափվում է, եթե առկա է ապագա վարձավճարների փոփոխություն՝ որպես ինդեքսի կամ դրույքի փոփոխության արդյունք, առկա է մնացորդային արժեքի երաշխիքի շրջանակներում վճարման ենթակա գումարների Խմբի գնահատականի փոփոխություն, եթե Խումբը փոխում է գնման, երկարաձգման կամ դադարեցման օպցիոնն իրագործելու իր գնահատականը, կամ եթե առկա է վերանայված ըստ էության հաստատուն վարձավճար:

Եթե վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է այս եղանակով, կատարվում է համապատասխան ճշգրտում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի հաշվեկշռային արժեքի գծով, կամ գրանցվում է շահույթում կամ վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև զրո:

Խումբը որոշել է չճանաչել օգտագործման իրավունքի ձևով ակտիվները և վարձակալության գծով պարտավորությունները ցածրարժեք ակտիվների վարձակալության համար:

*Խումբը՝ որպես վարձատու*

Վարձակալության բաղադրիչ պարունակող պայմանագրի մեկնարկին կամ փոփոխության դեպքում Խումբը վերագրում է պայմանագրում սահմանված հատուցումը վարձակալության յուրաքանչյուր բաղադրիչին՝ հիմք ընդունելով վարձակալության բաղադրիչի առանձին գինը:

Երբ Խումբը հանդես է գալիս որպես վարձատու, վարձակալության սկզբում այն որոշում է, թե արդյոք վարձակալությունը հանդիսանում է ֆինանսական կամ գործառնական վարձակալություն:

Վարձակալությունը դասակարգելիս Խումբը գնահատում է, թե արդյոք վարձակալության շրջանակում փոխանցվում են հիմքում ընկած ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները: Եթե ռիսկերն ու հատույցները փոխանցվում են, վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական վարձակալություն, այլապես՝ որպես գործառնական վարձակալություն: Որպես այս գնահատման մաս, Խումբը դիտարկում է

որոշակի ցուցանիշներ, մասնավորապես, արդյոք վարձակալության ժամկետը ներառում է ակտիվի տնտեսական ծառայության մեծ մասը:

Երբ Խումբը հանդես է գալիս որպես միջանկյալ վարձատու, այն առանձին է հաշվառում վարձակալության հիմնական պայմանագրում և ենթավարձակալությունում իր մասնաբաժինները: Խումբը ենթավարձակալությունը դասակարգում է հիմք ընդունելով վարձակալության հիմնական պայմանագրից առաջացող օգտագործման իրավունքի ձևով ակտիվը, այլ ոչ՝ հիմքում ընկած ակտիվը: Եթե վարձակալության հիմնական պայմանագիրն իրենից ներկայացնում է կարճաժամկետ վարձակալություն, որի նկատմամբ Խումբը կիրառվում է վերը նշված ազատումը, ենթավարձակալությունը դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն:

Եթե պայմանավորվածությունը պարունակում է վարձակալության և ոչ վարձակալության բաղադրիչներ, Խումբը հատուցումը պայմանագրի բաղադրիչների միջև բաշխելու համար կիրառում է ՖՀՄՍ 15:

Գործառնական վարձակալությունից ստացված վարձավճարները Խումբը ճանաչում է որպես եկամուտ գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում՝ որպես «այլ հասույթ» հոդվածի մաս:

**Ամերիաբանկ ՓԲԸ**
Վազգեն Սարգսյան 2
Հեռախոս՝(+37410) 561111
Ֆաքս՝
Էլ. փոստ՝info@ameriabank.am

Տպված է՝18/04/2026 10:24 (UTC+04:00)

## Բյուջետային փոխանցում N AM0706

| | | | |
|---|---|---|---|
| Ամսաթիվ | **18/04/2026** | Նույնացուցիչ | **9c385c02-7ca0-4271-8e41-9c64023c9834** |
| Հաշիվ | 1570089867940100 | Գումար | |
| **Շահառուի հաշիվ** | **900005016119** | **AMD** | **50,000.00** |
| Վճարողի անվանում | **ԻՆԹԵԼԼԻՋԵՆԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ ՍՊԸ** | | |
| Վճարողի բանկ | **Ամերիաբանկ** | | |
| ՀՎՀՀ | **01330894** | | |
| Տարածաշրջանի/ՀՏ կոդ | **14** | | |
| Շահառուի անվանում | **Արժեթղթերի ազդագրերի գրանցման համար** | | |
| Ինքնազբաղ անձ | **Ոչ** | | |
| Գումարը բառերով | **Հիսուն հազար դրամ** | | |
| Շտապ փոխանցում | **Ոչ** | | |
| Նպատակ | **Ազդագրի լրացման գրանցում, պետ տուրք** | | |

| | |
|---|---|
| Ստորագրող | **AREVIK MKHITARYAN** |
| Ստորագրության կարգ | **I, II** |
| Ամսաթիվ | **18/04/2026 10:23:26.897** |
| Սարքի անվանում | **Digipass GO ընտանիքի սարք** |
| Սարքի սերիալ N | **3741224759** |
| Ստորագրություն | **722631** |

**Կատարված է**